



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




ՔԱՄԱԼԵԱՆՑ Ա.

ԱԶԳԱՅԻՆ

ԱՐԱԿՆԵՐ

Գ Խ Ա 25 Ա

Անպահապան այծը:—Ազահ աղքականը:—Կենդմիտ ընկերը:—Խոտոքնակին խոտոքնակ:—Որսկանների վէճը:—Էլիսողորդի հօրը:—Անմիտ եղների վախժանը:—Ազատ կԲանը թէ կուշտ փոր: Արջի դատաստանը:—Սեւ լինի ալդպէս վարձը:



Թիֆլիս

ԵԼԵՔՏՐԱԿԱՐԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՌԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՑ. 7.

1907

(24)

13 APR 2011

891.99

f-17

5

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ա.



ԱԶԳԱՅԻՆ

ԱՐԱԿՆԵՐ

100
4534

Անպահապան այծը:—Ագահ աղքականը:—
Նեսզմիտ ընկերը:—Խոտորնակին խոտոր-
նակ:—Որսկանների վէճը:—Էլի ողորմի հօ-
րը:—Անմիտ եզների վախճանը:— Աղատ
կեանք թէ կուշտ փոր: Արջի դատաստանը:—
Սեւ լինի այդպէս վարձը:

Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս

ԱՐԱԿԱՆՑ ՕՐ. Ա. ԱՊԱՆԵԱՆՑԻ ՊՈԼԵՎԵՅՎԱԿԱՆ 7.

Электропечатня Н. Аганянцъ, Полицейская

1907

(24)

29.08.2013

60279

9
Տար



«ՓՈՐՁ»-ի և «ԱՐՁԱԳԱՆՔ»-ի պատուա-
կան Խմբագիր

ԱՐԴԱՐ ՅՈՎՃԱՆՆԻՍԵԱՆԻ

անձուաց յիշատակին

իւր անձուէր 7/1 1922

Քամալեանց Ռազմական կ ՅԱՆԱԿԱՆ



ՆԱԽԱԲԱՆ

Այս առակները գրուած են 1894—97 թուերին
և տպուած „Արձագանք“ լրագրում։ Սրանք կենդանի
մնացած նմուշներն են այն տանջանքների ծովից, որի
յորձանքների մէջ տարութերում էր անճար հայ գրողը։
Այդ ժամանակները Կովկասի հայկական կեանքն այն-
քան դժոխային էր գարձել Գալիցինեան կառավարու-
թեան չորհով, որ գրագէտը անուել բաներ գրելիս
անգամ դիմում էր Եզովփոսի այլաբանական, կոսպատ-
լեզուին։ Հազար բերան գոհութիւն եթովպացի սորու-
կին, որ կենդանիներին, բոյսերին, հանքերին մարդա-
նման խօսեցնելու կերպը սովորցրեց, թէ չէ ինչ կը
լինէր մարդկութեան ճնշուած մասի դրութիւնը, եթէ
ամեն վիշտ ու ցաւ կրծքի տակ յաւիտեան փակուած
մնար։

Այդ սկ օրերին ոչ թէ տաճկահայ դատն էր հրա-
պարակի վրայ, այլ հայ ազգի լինել կամ չլինելու հար-
ցը։ Ուստի իւրաքանչիւր հայ իւրովսան մաքառում էր
բռնակալ, ոճրագործ կառավարութեան դէմ։ «Արձագանք»
ազգեցիկ լրագիրը, չայած իւր զգուշաւոր ընթացքին,
առաջին զոհն եղաւ, որ առմիշտ խափանուեց։ Նրա
պատուական խմբագիրը ամեն ջանք գործ դնելով, տե-
սաւ, որ անկարող է շարունակելի ւր փայփայած սրբա-
զան դատի պաշտպանութիւնը, անիրաւ ճնշումներից
թուլացած, թախծալից սրտով իջաւ գերեզման։
Աղայինների խոհին եմ թողնում Արգար Յով-
հաննիսեանի պէս ականաւոր հայ գործչին արժանապէս
գնահատելու գործը, ես իրեւ նրա վերջին ցաւատանջ
օրերի վկայ՝ բարեկամական պարտքս եմ ուզում կա-
տարել, նրանից սիրուած այս առակների փունջը դնել
այսօր նրա անքար մնացած շիրմի վրայ։

Ք. Ա.

1906. Նոյ.
Թիֆլիս

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ

1. ԱՆՊԱՀԱՊԱՆ ԱՅԾՔ

Հերիքնաղ պառաւը մի այժ ունէր, անունը
Արմիկ, ազին էլ նիհարութիւնից ծուռափկ։ Նրա
կաթով էր ապրուաս անում պառաւը։ աղքատի, ե-
կուորի յարգում, պատում։

Տանը խոտ չունէր։ ամեն օր դուռը բանալով
տան դէմի հանդն էր քշում, բայց ամեն անգամ ար-
ձակելիս կոները տարածած աղօթք էր անում։

—Տեսնում ես, խեղճ կին եմ, ա'յ սուրբ Կիրա-
կոս, ալսօր այծս քեզ եմ պահ տալիս, ոտիդ տակին
մեռնեմ, լաւ աչք բռնիր ու իրիկունը ողջ անվնաս
տուն հասցրու։

Անխափան այսպէս աղօթում էր Հերիքնաղը
եւ խունկ ու մոմ խոստանալով իւր այծի հսկողու-
թիւնը օրը մի սրբի յանձնում։ մի օր Արդմանէն
ւուրբին, միւս օրը Մետրոփանոս հայրապետին, եր-
րորդ օրը Գալինիկոս գօրավարին։ Այսպէս ամբողջ
ամիս ու տարի մարգարէների, հայրապետների, հրեշ-
տակապետների անուննին տալով եկաւ, հասաւ նոր



տարու նախընթաց օրը. պառաւի ծանօթ սրբերն էլ հաստան, վերջացան.—Էլ Միքայ գօրավար, էլ Ովսեալ ու Անգեալ մարդարէներ, էլ իրաւափառ հայրապետ չմնաց, բոլորին լիշաասկեց ու ալժմ մղորուած, կանգնած չդիտէր ում անունը տալ: Մօտը տէրտէր չկար, որ նոր սրբի անուն սովորէր. իրան ծանօթների միշից էլ չդիտէր, ո՞րին առաւելութիւն տար այդ կէնդ օրը ու ալծի պահապան որոշէր:

Օրը բացուել էր, ալծը տան ներսը քաղցից մկրկում էր ու պառաւի սիրար մրդիտայնում: Յանկարծ չերիքնազի երեսը պայմառացաւ մի ուրախարար մասմունքից. շատապով տան գուռը բաց արեց, ալծը արծակելով սովորականի պէս բաղկատարած այս խնդրուածքն արեց:

—Աշխարքիս բոլոր բարեխօս սրբեր, խաղաղութեան հրեշտակներ, այսօր, այս կէնդ օրը ձեզ եմ յանձնում իմ մինուճար ալծը, դուք տկար պառաւիս խղճար ու արթուն հսկելով իրիկունը առւն վերադարձնէր

Այս աղօթքից ես պառաւն ապահով թողեց ալծին դէպի հանդ ու տան դործին կացաւ:

Օրը մթնեց, պառաւը կթիչը ձեռ կալած շատ սպասեց ալծին. չկար, չէր երեսում: Գիշերը վրայ հասաւ. խեղճ չերիքնազը ֆնաց գուանը սկրթած, ալծը դաշտից չվերագարծաւ լալուց պառաւի աշքին քուն չեկաւ: Առաւօար կանուխ առանարը զնաց, աղօթքի մէջ դանդաստ արեց.

—Այսպէս բան կըլինի, արարիչ Աստուած, քանի որ ալծս քո սրբերից մէկին էի պահ տալիս, ամեն անգամ ողջ անվնաս դառնում էր ու ինծ մխիթարում: Երէկ մեծ լուսով անթիւ սրբերի հսկողութեան յանձնեցի, այծս զնաց ու չրդարձաւ: Արդարութիւն եմ պահանջում, Աստուած, դու դատ արակմ և սրբերի մէջ:

Այդ ժամին հրեշտակը թեւերը շարժելով վերեկից ձայնեց.

—Այս տատի, հանգամանքը պտտմեմ, լսիր: Այն օրը, որ դու ալծդ բոլոր սրբերի հսկողութեան, յանձնեցիր նըրանք իսկոյն ժողով արին, խորհուրդ կազմեցին, որ վնուեն թէ այդ օրը ո՞վ պէտք է պահապան լինի:

Սրբերից ամեն մինը ուզում էր ինքն անի այդ ծառապութիւնը: Վէճ բացուեց այդ մասին ու երկար ու երկար շարունակուեց: Իրիկնադէմ դեռ հարցըն անորոշ էր. այդ ժամին գալլը դաշտով անցնելիս ալծիդ անպահապան գտնելով տարաւ ու կերա՛ւ: Այս քեզ խրա՛տ, որ միւս անգամ այծդ սրբի լուսով չըթողնես ու ինքդ տանը նստես: Ամենից ապահովն է ինքդ, տանես, արածացնես:



2. ԱԳԱՀ ԱԶԳԱԿԱՆԸ

Զմեռն ու հիւսիս իրար հետ սիրով հոսան էին անում. անծրե ու ծիւն թափելով, մաղելով՝ ամրող աշխարհը իրանց տակ ծածկում, ողողում: Թացութիւնից ցամաք անկիւն չկար. չերծութիւն էլ Աստուած տար:

Ճանճը մրսում էր. ցուրտ էր անողորմ, անասելի ցուրտ: Խեղճն իւր դառ վիճակը լալով ասում էր.

—Ո՞հ, անպաշտական արարած եմ. այժմ ուր պատսպարուեմ ես. ուր մի տաք տեղ գտնեմ, որ այս սոսկալի ցրտից չմեռնեմ:

Եխապէս խօսելով դէս ու դէն էր թռչուառում ու ցրտի ձեռից վրվըթում:

Շատ թափառելուց եար խեղճ ճանճը հասաւ մի պատի ու նրան կպաւ. նրա կրծքին հեալով շունչ քաշեց ու ասեց.

—Ո.խ, Աստուած, չես տեսնում, որ մահից ազատուելու համար որբան ոյժ կայթեերիս մէջ, դորձ եւ դնում. արդեօք մի նարկլինի փրկութեան, թէ կասպէս սքրած ոտներով, ցրտից կապտած մարմնով մնալու եմ այստեղ կպած ու սատկեմ:

Սկս ասեց ճանճը ու յուսահատ լաց եղաւ: Արտասուելով սիրար քիչ հանդսատացրեց ու պատնի վեր նայեց. տեսաւ հիւսիսային անկիւնում սարդի ստայն փռուած:

—Վերչապէս բաղդը լաջողեց, էլ չեմ մեռնի,

մըմտաց ճանճը, իմ ազգական սարդը այժմ այնաեղ հանդիսա պատկած կըլինի. ա'րի, ձեռ կարկառեմ նրան. կարծում եմ բոլոր արարածներից շատ նա՛ կրցափ իմ վրայ ու մահի ձեռից փրկուելու հնար կը տայ: Գնա՛մ, ձայն տամ, նա կ'ողորմի ու իմ չարքաշ կենցաղավարութեանս վերջ կը տայ:

Ասեց ու վերև բարձրացաւ:

—Ազգական քո՛ւրիկ, ուժասպառ ճուաց անդ ր ճանճը. ի՞նչ կըլինի, վարձք անես, կշախդ պատառ տեղ տաս, հանգստանամ մինչև այս մահաշունչ ծնի ու ցրտերի անցնելը: Աղաչում եմ, մի՛ խնապիլ օգնութիւնդ, քեզանից ոչ կեր եմ ուղում, ոչ խում. միւդն թո՛ղ ոստայնիդ անկիւնում շունչս աւաքեմ, ցրտից չըսատկեմ:

Մարդը գոհութիւնով լսեց ցրտատար ճանճի ողորմուկ ձախճը. վիզը ձգելով հանեց ոստայնից ու այսպէս խօսեց.

—Դու ես ձայն տուողը, ազգական քո՛ւրիկ, համեցիր վերև: Ում համար պատսպարան չունենամ, քեզ համար չգիտես, որ միշտ, հանապաղ տեղ կունենամ՝ տաք ու ապահով: Էլ մեր ազգականութիւնը ո՛ր օրուայ համար է: Համեցիր, ընդարձակ ոստայնս քեզ վերմակ, լիուկի փաթաթուիր մէջը և ո՛ր անկիւնում սիրտ տալիս է, անուշ քնիր. կեր ու խումի կողմից էլ անհոգ կայ, ինձ մօտ ամեն ինչ առատ է ու լի: Այս լաւութիւնը, որ ուրախութիւնով անում եմ, ի հարկէ բոռելը, դրուանները իրանց երազում չեն

աեսնիլ. թողի նրանք գնան, ցրտում կոտորուեն. այդ դեռ քիչ է նրանց: Նրանք այնքան ինձ ատելի են, որ փուշն ինչ է, փուշ չեմ տալ, որ աչքերը գնեն: Իսկ դու իմ հարազատ, խոնարհ աղքականն ես. բոոի ու գոռանի պէս ոստայնս պատուառղ չես. կեանք էլ ուղես, չեմ խնայիլ:

Ճանճի տեղը այդ բոակեն շատ նեղ էր. խեղճ գետաարը խիստ միամիտ էլ էր. հաւատաց արզի խօսքերի անկեղծութեան, սըլած թեւերն ուղելով վերև թռաւ, ոստայնը մտաւ:

Սարդն ուրախապէմ ընդունեց աղքական ճանճին, բարե տուեց, բարե առաւ ու ծեռը նրա խոնարհ զլիխն քսելով, ականջն ի վեր փափսաց:

— Իմ անճար աղքական, ո՞հ, ո՞րքան ցաւում, կարեկցում եմ քու վրայ, բոլորովին սառել, կապտել են ոսներդ, թեւերդ: Աշխարհիս վրայ չարքաշ կեանք ունենալը անչափ դառ բան է. սիրաս մղկրտում է այս բոակես քեզ համար: Շատ լաւ արիր, հոգեակս, որ եկար ինձ մօս. ինչո՞ւ դուրսը զուր նահատակուես: Ե՞ս, միայն ես՝ կարող եմ քու ուղած ապահով տեղը տալ:

Սրտացաւ սարդը այս խօսքից եար ճանճի վզից բռնելով իրան քաշեց ու աւելացրեց:

— Արի, իմ փորիս մէջ տաք ու չերմիշ, հանգիստ նստիր, թշուառ քուրիկ:



3. ՆԵՆԳՄԻՏ ՀՆԿԵՐԸ

Ասածս փաղ ժամանակի բան է:

Մի իրիկնադէմ ճագարի խնամի նապաստակը վերապառնում էր իւր օթեանը. շուտ շուտ դէս դէն էր խլցկոտում. երեռում էր, որ ահ ուներ սրտում: Երկնքի ամպերը վերջալուսից ծիրանի դրն էին բռնել: Նապաստակը վշտահար դէմքը լուռ ու մունչ դարձրեց դէպի արևմուտք ու վառ հորիզոնին երկար նայեց: Կարծես մտքումն ասում լինէր.—սիրուն արև, ո՞ւմ ես սպասում շառադրցն թեւերդ բաց արած, ինձ պէս թշուառի համար որ իսկի դուս չդաս, ամենեկին հոգ չի. խեղճի աստղը փաղուց է ծովն ընկել:

Յողնած ուները քաշ տալով հասաւ ուռենուն, որի կշտի թփի տակ էր բունդ: Զաղերը փաթաթուեցին մօրը, լիզեցին նրա պինչը, զուկսը, ապա պտուկները բերան առնելով սկսոն կաթնաղուրկ կուրմը լնգըթել դարդակ, ծծել:

Նապաստակը մոլորուած շունչը ետ բերելով հառաչեց.

— Ա՛խ, Աստուած, ախր մեր ցեղը մինչև ե՞րբ պտի այս դառը կեանքը քաշիլ: Մի՞թէ յաւիտեան պատուհասի մէջ ենք լինելու: Ո՞վ ասես ատամները մեր վրայ է պրում: ո՞ւր զնանք, որ կարենանք աղատուել չարանենդ արտածներից: Ո՞ւմ ոտն ասես, ընկանք. ո՞ւմ օգնութեան ասես՝ դիմեցինք. ամենն էլ պաշտպանութիւն խոստանալով իրանց շահն են

փնտռում: Մեղ կարելցողները չորքոտանիք էին լինելու, բայց աւազ, ոմանք նրանցից պաշտպանելու փոխարէն աւելի անողորմութիւն ցոյց տուին: Նրանց ծեռից մեր մորթու վրայ ոչ անվնաս տեղ է մնացել, ոչ անարատ բուրդ: Հենց իմ վրայ չաղալից սկսած մինչև վերջին գաղանը իրանց ատամների ոյժը փորձել են: Աշ հերիս աղուէսի քրքրածն է, քիչ մնաց շունչս տայի: Գլխիս կէսը մազաթափ եղաւ գալի լերանի գէշ հոտից, երբ վայրկենաչափ դանգս ըստեց: Եթէ շուտով դուրս չպրծնէի, ոսկորներս կը խշկէին: Աշ ոտիս կաղալը արշի հարուածի հետեանք է, եթէ կոպիտ թանթիկը մէջքիս դիպչէր, իսկոյն շնչահան կը լինէի: Նզովուի բորենին ու իւր նախնին. գեղանի գտուաքս նրա ծուիկ ծուիկ արածն է. ի՞նչ լաւ էր շների անակնկալ հաջոցից զարհուրած ինձ թողեց, թէ չէ վազուց բուրդս զգած կը լինէր:

— Օ՛հ, մայրիկ, այդ ի՞նչքան ցաւեր ես քսշել, խօսեց աւագ ծաղք, հասկա ինչո՞ւ: մեղ չես ասել:

— Է՛հ, որդեակ, ասեց սրտնեղած նապաստակը. եթէ հնար ունենալի ծածկելու, հիմի էլ չի ասկի ու հոդիներդ վրովիլի: Բայց ի՞նչ թաղցնեմ—էլ ոյժ չկայ լուռ համբերելու: Նայելով արշի, գալի, աղուէսի կենցաղին, նրանց գաղանութիւնից ոչ զարմանում եմ, ոչ յուսահատում: Ինչպէս իմ պապերը, այնպէս էլ ես մի բոպէ բնդունում եմ, որ նրանք կարող են թոլլերին ճանկել և նրանց մտով սննդու ել. վայրի ժմակներում ո՞ւ մնից պէտքէ սովորէին, թէ ակա-

րին պատռաելու տեղ հարկաւոր է ողորմել, սիրել:

Բայց ինձ միանդամայն անհասկանալի է շան արարմունքը. ո՛չ բարով նա էլ ցեղակից է ու վազուց անաստից իշած, մարդամէջ է մտած: Երկար միշոյ ապրում է այնպիսի շրջանում, ուր օրէնք, դատաստան կայ, չարագործութեան գէմ էլ հաղարաւոր պատիմներ: Նա այնքան կրթուած է, որ իբրև պահապան գովասանքով են խօսում նրա մասին. կատուի հետ անգամ սիրով է ապրում: Բայց հէնց որ նապաստակի զլուխ է աեսնում, զաղան է կարում, բոլոր թափով յարձակւում է, որ բռնի, ոչնչացնի: Փշրուեն նրա ժանիքները, անցեալ տարի ծախս ականչիա կէսը պոկեց, քիչ մնաց զիզս էլ փրցնէր:

— Ուշի, մայրիկ, ցաւագին ծայնեց միշնակն ու ակսաւ մօր զլուխը, կիսատ ականչը լիդեր. միթէ այլքան արհաւելիքներ են անցել զլուովդ և մենք անտեղեակ: Ասեց ու լաց եղաւ:

— Ուշի էր թէ մեր թշնամիները միայն դրանք լինէին, խօսքը շարունակեց նապաստակը. մեր թիւը դրանց հարուածներից այսչոփ չէր նուազիլ: Մեր հողեհանը, մեր արիւնարբու թշնամին մարդն է, որ շներին էլ սրում, կատաղեցնում է մեր դէմ: Մի առ ժամանակ մեղ թակարդով ու նետով էր որսում, այժմ սարսափիչ հրացանն է հնարել մեղ սպանելու համար. և այս ամենը զոււարնութեան անունով: Խեղճ ժարծինս նահատակուել է նրա հրացանի

գուլուղներից, խանձուած տեղերին ու սպիներին թիւ ու համար չկայ:—Այս, զուարճամոլ ադամորդի, միթէ քեզ կրփայերէ այդչափ վայրենի արարք. բեզ, որ Արարչի ստեղծագործութեան պատկն ես կազմում:

—Մայրիկ, զիրկն ընկնելով ասեց կրտսերը, հին ցաւերը մտաբերելով ի՞նչու ես վշտանում, այժմ հօ վիճակով բարերազդ ես. չէ ո՞ր լսում ենք շարունակ, որ ագռաւները իբրև հովանաւոր մեր ցեղին հսկում են ու թշնամիներից պաշտպանում:

—Է՛, որդեակ, վիրաւոր սրտով հառաջեց նապաստակը, չես իմանում թէ ի՞նչքան թանկէ նստել այդ հովանաւորութիւնը մեր ցեղին և խօսում ես: Երևակալիր թէ նապաստակներիս վիճակը ի՞նչքան դառնացած պէտք է լինէր, որ հարկադրուած դիմէինք թեաւորների օգնութեան: Նրանց մէծ մասը ընականաբար գմուտ ու կարեկից պէտք է լինէին իբրև երկնքի բնակիչներ, ազատ օգում ապրողներ: Օրինակ՝ կաքաւի, տատրակի հետ ո՞վ չի փափաղիլ յաւիտեան ընկեր լինէր. բայց ի՞նչ արած, նրանք էլ ահ ու դողի մէջ են աղջական գիշատիչներից: Չուազ թռչունների՝ կուռնիների, արագիների պալմանին չցօժարուեցինք, քանի որ ծովերի, լեռների վրայով պանդխառութեան գնալը մեղ համար կորստաբեր էր: Երկար տատանուելուց ետք ընդունեցինք ագռաւների վրա հովանաւորների հրաւերը. որով պարտաւորւում էին հսկողութիւն ունենալ մեր վրայ իրանց սրատես աչքերով և գդուշացնել գագաններից: Իրանք միշտ բարձր են գեանից. հէնց որ նկա-

տեն մի չարամիտ գաղան, իսկոյն կռաւոցով իմաց են տալու, որ փախչենք, թափնուենք: Այս ծառալութիւնը նրանք յածնն էին առնում առանց որևէ ակնկալութեան, իբրև բարեպաշտ թեաւորներ: Նրանց միակ խնդիրն ու թախանձանքն այն էր, որ թողլ տայինք հանգիպելիս մեր աչքերը համբուրեն: Ինչպէս իրանք էին խոստովանում, անչափ հիացած էին մեր տեսքով ու գեղեցկութիւնով: Չմերժեցինք այդ խնդիրը:

Պէտք է խոստովանած, որ ագռաւները փորձառու, վարպետ թեաւորներ են. միառժամանակ նրանց կռաւոցով մերոնք մնացին աղատ կողմնակի հարստահարութիւններից: Բայց այս վերջին միջոցներում այնպիսի նենդաւոր ու ծածուկ դաւադրութեան է մատնուել մեր ցեղը, որ սատանան ինքը չի կարող զլուխ հանել: Մինչև հիմի ադամորդին զնդակի էր արձակում մեր վրայ, որ կարող էր կամ դիակէլ կամ չէ. միւս գաղանները մեզ հալաձելով մեծ մասով վէրք էին հասցնում, շատ քիչ տնդամ ամբողջովին ոււտում: իսկ այժմ մեր ցեղը այլ կերպ է կորչում, ոչնչացւում: Տեսնում ենք նորահաս, փափլիկ նապաստակներին գաշաերում անշունչ ընկած, մարմնի քնքով տեղերը չանդուստած ու աչքի բիբերը հանուած, կերուած: Այս տեսակ ոնիր ու կոտորած մինչև հիմի չենք տեսած ու մեր հովանաւորներն անդամ մնացել են տարեկուսած, անկալա է ոնքագործք. մեռած նապաստակն էլ չի կենդանանում, որ ասի թէ իւր աչքեր

հանողն ով է:

Նապաստակը քիչ ժամանակ մաքի մէջ լնկաւ ու վրայ բերեց.

—Որքան նկատել եմ, աղուաւները շատ սիրով են վերաբերում դէպի մեղ. պատահելիս ողջադուրում են, համբուրում: Միթէ նրանք կարող են մեր տներեղիթ թշնամու տեղն իմանալ ու մեզնից ճածկել: Զէ, անհաւատալի է, երեխ կաչաղակներն ու բաղէներն են՝ որ վրէժխնդիր են լինում, թէ ինչու աղուաւներին հովանաւոր ընդունեցինք: Այդ լաւ. բայց ինչո՞ւ մերոնցից մի քանիսը աղուաւների վրայ կասկած են տանում, հաւատացնելով որ նրանցից աւելի մեր ցեղի աչքերին մօտեցող չի լինում: Միթէ աղուաւի համբուրը այդչափ թունաւոր կարող է լինել: Հա՛, գուռ ի՞նչ էք ասում, որդիք, հարցնում էր նապաստակը. բայց ձագերը իրար վզով լնկած վաղուց քնել էին:

—Եթէ մեզ հարուածող ձեռք աղուաւային է, շարունակեց նապաստակը, վաղնելթ խորհուրդ կը տամ մերունց, որ համբուր տալրւց զգուշանան:

Բայց վաշ թէ մեր հովանաւորները անմեղ լինեն ու մեր կասկածից վշտանալով ձեռ քաշեն մեզնից. գաղանները նոր մէկանց արշաւանք սկսեն անպաշտպաններիս վրայ:

Այս գառ մտածութիւններից ետք լուց նապաստակը, բայց երևակայութիւնը այնպէս զբոցուած էր, որ աչքերին քուն չէր գալիս. մնաց չոր

խոսի վրայ կուչ եկած: Մութք գետինն առել, օդի մէջ վաղուց խաղաղութիւն էր տիրել:

Ուռենու վրայ նստած էր աղուաւը բնի մօտ ու գուրզուրում էր ճուտերին: Նրանք հարցնում էին.

—Մայրիկ, վետուրնիս հասել են, Էրը ենք քեզ նման օդում թռչելու:

—Դեռ մի անգամ էլ լսեցէք խրատներս, իմ որդիք, նրանից ետք կասեմ, թէ Էրը էք թռչելու: Երբ տեսնէք ոքմին դեանի վրայ կուանալիս, իմացէք, որ քար է վերցնում ձեզ խփի. այս մէկ: Երբ պատահեք մեր բարեկամ ճաղարին, նապաստակին, իսկըն քաղցրագէմ ողջոյն սուեք ու նրանց աչք ունքից համբուրեցէք. —այս երկու: Աղամորդիների հետ ամեններն հաշիւ չունենաք. նոյեան տապանից դէսր մենք իրար չենք սիրում: Նրանք վնասից աւելի ձեզ օդուտ չեն: Չորքուանիների մէջ ընարութիւն անել իմացէք, որ զուր ապարդիւն չանցնի: ձեր ծո նօթութեան ողջոյն: Օրինակ՝ ի՞նչ օդուտ շան հետ բարեկամանալը կամ աշքից համբուրելլը: Բոլորովին այլ բան է, եթէ զուր սերտ բարեկամութիւն հաստատէք հորթերի, գառների հետ. նրանց մայոցն ու բայոցն էլ անուշ և զուրեկան են, ի՞նչ թէ խաժակ աչքերի բիբիկները: Ինքս նկատում եմ, որ շահացել էք, շատ չի անցնիլ, ձեզ նապաստակների մօտ հիւր կրտանեմ, որ համբուրեու ձեր սովորէք: Նրանք խլրշտուրիկ արանջներ ունեն, բայց նախշուն աչքերին ոչինչ չինչ համար գոյացնաւ անուշ 7/1 1922



քան հրապուրիչ են, որ եթէ տեսնէք, կուզէք շատ սիրելուց մէջի հիւթը ծծել:

Ճռւաերը լսածից զրաւուելով փարուեցին մօր վզով, կրծքով:

—Մարիկ, աղաչում ենք, մի՛ ուշացնիլ, էղուց հիւր տար նապաստակի մօտ:

—Սնապատճառ կրտանեմ, դուք հանդիսաւ քուն եղէք, ասեց ագռաւը, թեր ճռւաերի զլխներին քսելով սուս փուս իշտ զիշերային որսի: Ուռենու ստորին ճղան վրայ կանդ առաւ ու աղահ աչքերը չուելով դէպի նապաստակի թռուփը ինքն իրան խօսեց:

—Բաւական է, որքան պատկառելի հասակիով խնայելով երկանամիտ եղայ ու անվտանգ պահպանեցի: Քու ցեղի օրերը հաշուած են. վաղ թէ ուշ մէկի կեր պափ լինես, ինչո՞ւ քու փափիլիկ ծագերն ուրիշի բաժին գառնան: աւելի լսաւ չէ՞, որ իմ ճռւաերը գուարճանան: Եթէ չես քնել, քնի՞ր, շուտով դալու եմ աչքերդ համբուրելով հանեմ, զրանով կազատուեմ սդաւոր ծայնդ ու ծանծրայի հառաչանքներդ լսելուց:

Քիչ սպասեց աղռաւը ու տեսնելով, որ օղի մէջ խոր լոււթիւն է, թեւերը զդոյշ բանալով իշտ նապաստակի թփի վրայ, որպէսպի իւր մտազրութիւնը քողարկի և իմանայ, արդեօք իւր զոհը արթուն է, թէ քնած, ապա հետեւեալ խօսքերն արասանեց.

—Քիշերուով ժամին անսահման սիրուց զրդու-

ած եկել եմ համբուրելու վշտահար բարեկամիս, որ մխիթարուի, արիանալ զրկանքների գէմ. ո՞հ, Աստուած, Երբ է հասնելու այն բոպէն, որ ցոյց տամ թէ անդին բարեկամիս ու նրա ծագերի բարօրութեան համար կեանքս զոհելու պատրաստ եմ:

Այս խօսքերից ետք տեսաւ, որ ոչ մի ծայն, ոչ մի շարժում չի լսւում, վիզր ապահով և համարձակ մեկնեց ներքե, կիսաբաց կառւցը հէնց ուղում էր միկ բարեկամի աջքի մէջ, յանկարծ մի ծմբոց լսեց գէմից ու սարասիած ետ մղուեց: Ազուան իսկի չէր սպասում, որ նապաստակը արթուն կըլինի: Շփոթութիւնը շուտասիովիթ զսպելով մեզմ ծայնով հարցրեց:

—Ի՞նչպէս ես, աչքի լոյս, եկել էի վիճակիցդ տեղեկութիւն իմանալու, հօ այսօր զաղան չի պատահել, ինչո՞ւ ես ախուր: Զարդանում եմ, որ զիշերուայ այս ժամին քնած չես: Առողջութեանդ կը վնասես, այդ լսաւ չէ:

Նապաստակը յուղմունքից զողում էր, հնար ունենար խարդախ հովանաւորին կը խեղդէր իւր օթեանի դռանը: Ճարահատած այս պատասխանը առուեց.

—Այսուհետեւ աւելորդ են այդ սիրալիք բառերը: Թքած այն հովանաւորութեան վրայ, որի տակ անիրաւ մտքեր ու սոսկալի զժողք են թագնուած: Քու հսկելն ու կռաւելը այլևս հարկաւոր չեն, թող գաղանները կըկին մեր ցեղին հաղածեն, զոնէ նրանք

օր ցերեկով կը յարծակուեն մեր վրայ, և ոչ թէ ձեզ
պէս գիշերը գաղտնազողի կը մօտենան, որ համբու-
րելու պատրուակով կեանքից զրկեն: Մառի վրայից
ասուծ ես.—քնի՞ր, դալիս եմ աչքերդ հանեմ:
Այս խօսքեր լողի քոնը կը տանի:

Առանց ամաչելու մեղաղըում էք կաչաղակնե-
րին, այն ինչ զուք էք եղել աչքեր հանող սոսկալի
ոճրագործները, որոնց թևերի տակ միամտաբար ա-
պաստանել էինք նապասաւակներա: Ինչ բարեգութ-
հովանաւոր էք եղել մինչև օրս. առաջ զոհի աչքերն
էք ծածուկ հանել, որ յետոյ մարմինը ապահով կը-
լանէք:

Նենդամիա ազուաւը այս նախատինքներն ու-
տելուց ետք առանց լիրք բերանը բանալու անձան
հեռացաւ:

Նապաստակն այնպէս վրդովուած էր, որ այդ
գիշերը ալլես աչք չփակեց: Վճռեց սովորութիւն ա-
նել, զիշերները հակել և աչքերը անքնութեան վար-
ժեցնել: Տեսւեեալ օրը աղղակիցներին հասկացնելով
բանի էութիւնը, խորհուրդ տուեց նրանց զգոյշ ու
հեռու մնալ խարեխալ հովանաւորից:

Այդ աչալուրչ նապաստակը մինչև խորին ժե-
րութիւն անվտանգ ապրեց ու ծագերին հրահանգ
թողեց, որ ցերեկը դապաններից խոյս տան, թաք-
նուեն թվերի տակ, իսկ զիշերը ապահով մնալու
համար արթուն աչքերով հսկեն: Այզպէս էլ անում
էին ծագերն ու թոռները, իսկ երբ լողնածութիւ-

նից յաղթուելով գիշերը կարճ միջոցով քնի ծոցն էին
լնինում, երկիւղից կոպերը չէին փակում, այլ աչքե-
րը բաց պահում, որ ազուաւին մօտենալուն պէս
նկատեն:

Մինչեւ այժմ էլ այդ սովորութիւնը մնացել է
նապաստակների մէջ: Նրանցից որոնք անթերի կա-
տարում են նախնիներից մնացած խրատը, շարունա-
կում են ողջ մնալ ու սերունդ թողնել, իսկ որոնք
տխմարութիւնով արհամարհում, անուշադրութեան
են տալիս այդ պատուերը, կէս զիշերին զրկում են
աչքի բիբերից ու կերակուր զառնում երկնքի գիշա-
տիչներին ու երկրի գաղաններին:

4 ԽՈՏՈՒՐՆԱԿԻՆ ԽՈՏՈՒՐՆԱԿ

Մի լիճ կար՝ ներս ու դուրսը շնչաւորներով
լի. սողուն ասես, զեռուն ասես զժվժում էին ամեն
կողմ, որը աղղալով ծաղկից էր կենում, հիւթ ծծում.
որը սովածութիւնից բղզալով օդի մէջ ման ու ման
անում: Զայնաւորներից երկուոր՝ ճռակն ու զորար
ամենասրաբայցն ու ուրախն էին. Նրանք շարունակ
թռչուում էին ու երդում, մինք զեռունների հա-
մար էր ճռուում, միւսը սողունների համար կոկր-
ուում: Սրանց երդելու միջոցին միւսներից՝ որը լուռ
ականչ էր զնում, որը քթի մէջ ծոր բոնում. ման-

րագողոթ կրիան անդամ զլուխը ջրից հանելով ափին նստում էր ու տաղ արած լսում:

Բայց նրանց մէջ կալին խալմիչ ու թունաւորիչ արարածներ էլ, ինչպէս կարիճն ու օձը: Մէկից սողուններն էլն սարսափում, միւսից զեռուններն ու պղոնները, ամեն մինը իւր ցեղի ահն ու մահն էր. ո՞վ կարող էր նրանց անվախ մօտենալ:

Երկար ժամանակ կարիճը մէն-մենակ մնալուց ծանծրացել էր, չեր զիտում, ո՞ւմ մօտենալ, որ շահթիւ իւր ցեղակիցներից երեսատեղը հասել էր: Մի օր հեռուից տեսնելով զորտի լիսաիկ մէջքը, մօտեցաւ սողունների երգչին ու ասեց:

—Քաղցրածայն զո՞րտ, մի բան եմ ասելու:

Գորտը իւր խոշոր աչերով նայեց զիմացի խօսողի պատկերին և միրով պատասխանեց:

—Բարի լինի մէր տեսութիւնը, կեռպոչ հարեւն, մէկի տեղ երկումն ասա:

Կարիճն սկսեց.—իմ կարծիքով դու ամենախելոքն ես ձեր ցեղի մէջ, ասաւ տեսնեմ, մինչև ե՞ր սողուն ու զեռուն իրար կշտի լիի մօտ պէտք է ապրեն ու իրար անծանօթ մնան: Աստու ած խելքն ու բանականութիւնը միթէ նրա համար է տուել, որ իրար խորթ աչքով նայեն, իրարից հեռու մնան: Ի՞նչու նախանձին ու լիմարութեան լսելով իրար մէջ խորութիւն գնենք, քանի որ Արարիքը մեզ միաւորելու համար մէր անունները մի տեսակ է սաեղձել. տես՝ սողուն, զեռուն: Այս հանդամանքը նրա

համար է, որ մէնք իրար սիրենք, մինչև անգամ խրնամի գառնանք, աղջիկ տանք, աղջիկ առնենք:

Գորտը չկարաց իսկոյն իմանալ, թէ ի՞նչ պտուղ է հետր խօսողը, միամտի պէս քաղցր լեզուից զրաւուեց ու ասեց.

—Ճատ լսւ առաջարկութիւն է արածդ, հաւան եմ. ես էլ զարմանում եմ, թէ ինչու մի լնի բնակիչներս ցեղական չնչին պատճառներով իրարից հեռու, սրաով անձանօթ ենք մնում: Զէ՞ որ կարող ենք մէկու օդնել, զուարեցացնել, կարճատեկանքներս քաղցր ու խաղաղ անցկացնել: Այդ բարեկամութիւնը, ուղիղ ես ասում, հարկաւոր է, աժէ որ զրա օրինակները մենք հասկացողներս ատաք, յետոյ մեզ հետեւողներ շատ կրիխնեն:

Ասեց կոկոան զորան ու իբրև նշան համաձայնութեան քներակներն ուղղնելով լիսաբերան մի կուշտ կուկուց: Սողուն թէ զեռուն ամենն էլ զէպի նախլըցին ու ապշելով զարմացան, որ թունաւոր կարիճն նրա կողքին տեսան:...

Կարիճն ու զորտը իբրև նորաթուխ բարեկամներ մէկ երկու օր իրար հետ շատ սիրով զրոյց արին և լնկերութեան ուխտը այդ միջոցներում կռեղին. առաջին պարմաններն էին անխարդախ սէր և փոխադարձ օդնութիւն:

Բայց կեռպոչ ընկերի խորհուրդը ուրիշ էր... ահա թէ ի՞նչ:

Մի իրիկնաղէմ զորտը երկար կոկոալուց յոդ-

նամ պարզել էր լի ափին: Կարիճը կեռ պոչն իրան
հաւաքած սորոր տալով մօտեցաւ նրան ու ասեց.

—Գիտե՞ս, քաղցրածախն ընկեր, ինչ նորութիւն
կայ:

—Ինչ նորութիւն, կեռապոչ ընկեր, ասա, լր-
սում եմ:

—Մեր ընկերութեան վրայ շատերն են սկսել
բիկեր, զարմանալ. կործում են թէ մենք մշտական
բարեկամ չենք մնայ: Նախանձից ուզում են տրա-
քուել, որ մենք այսպէս սիրով ենք: Արի, նրանց չըդ-
րու մի բան անենք:

—Ի՞նչ անենք, հարցրեց գորար:

—Ահա թէ ի՞նչ. թէ թե առուած արի զր-
նանք դիմացի ափը, լիսսիրա զրօմնենք, զուարճա-
նանք: Գիտեմ մեզ նախանձողներին այդ բանը դուր
չի դար, ի՞նչ փողթ: Բաց ափսոս որ լոդալ չեմ զի-
տում, եթէ ջուրն ընկնեմ, վախենում եմ խեղդուեմ:

Միամիտ գորար նայեց ընկերին ու բարեսրառու-
թիւնով ասեց:

—Աննշան բանի համար ի՞նչ ես հոգս անում,
սիրելի կեռապոչ, ի՞նչ անենք, որ լող տալ չես զիտում.
Ես այստեղ չեմ, անհոգ կաց: Քու սրաի ուզելիքը
դիմացի ափ զնալն է, ի՞նչ գժուար բան է, արի,
շալակիս նատիր, տանեմ ու բերեմ:

—Ա՛յ զլուխդ ապրի, քաղցրածախն ընկեր. ի՞նչ
բարի սիրա ունես: Ես բոլորովին մոռացել էի, հա-
ւատա, որ կարելի է քու մէջքին նստել ու ապահով

անցնել: Շատ շնորհակալ եմ այս ծառայութեան հա-
մար, կաշխատեծ փոխարէնն անպատճառ հատու-
ցանել:

Այս ասեց կարիճը ու կկրղած գորարի թիկունքն
ելաւ.

—Պինդ կաց, լաւ նստիր, կերպոչ ընկեր, բղա-
ւեց գորար, թաթիկներդ հուպ տուր, որ չընկնես:

Այս պատուերները ապօւց ետք կոկուն ընկերն
ընկաւ լինը ու չըի երեսին ոտնալող տալով գնաց:

Լայն թիկունքի վրայ կարիճը բաղմած ցնծազին
նայում էր աշ ու ծախս ու գուարթանում: Յանկարծ
նրա սիրար մի բան ուզեց: Նրա փափազն էր՝ գոր-
արի լիստիկ մէջքը կծի, խայթի: Սրտին չկարաց ընդ-
դիմանալ. խայթը հանեց ու կծեց: Գորարի կաշին
ցաւեց, բայց ուշ չլարձրեց, «կարելի է թաթիկները
ամրացնում էր, որ վէր չընկնի», ասեց ու ոտնալեղը
շարունակեց:

Խայթը երկրորդ անգամ մէջքը խրեց: Թէպէտ
խիստ ցաւ տուեց գորարին, բարկութիւնն էլ շատ
եկաւ, բայց էլի համբերելով վճռեց միայն թափա-
հարել որ կարիճն զդուշանայ ու իւր տեղը խելօք
նստի: Եւ գորար մէջքը թափ տուեց առանց ծայն
ու մռունչ հանելու.

Սրդէն մօտենում էին ափին:

Կարիճի մտալբութիւնն էր սատկացնել գորարին,
նկատելով նրա հանդարտութիւնը՝ կարծեց թէ
խայթը պնչէլ է, չի աղգում, ասեց. «չէ, պէտք է

թոյնով սրա կաշուի տակ լջնել, ուռցնել, որ ամի
հասնելուն պէս սասակի»:

Վճուեց կարիճն ու որքան ոյժ ուներ, պիճնդ խրեց
գորտի փափուկ մարմնի մէջ: Սողունների երգիչը շան-
թահարի պէս ուղ ուղ արեց ու դառնացած սրաով
դռաց,

—Կարիճ...»

—Ի՞նչ է, բաղցրածայն ընկեր, ի՞նչ:

—Չոռք քեզ պէս ընկերի պիճնչ...

—Ինչի՞, բարեսիրտ ընկեր, ի՞նչ է պատահել,
անձեղ ձեանալով հարցըց կարիճը:

—Սատծու կրակ է պատահել զիսիդ ու արևիդ:
Մէկ չէ, երկու չէ, ի՞նչ ես խալթում ու շանթում
մէքս. ի՞նչ վատութիւն եմ արել քեզ. լաւութեանս
փոխարէնն այս է: Արարծունքի ընկերսիրութեան
ո՞ր յօդուածի մէջ է զրուած. չես ամաչում:

Կարիճը զորտի մէջ ալդքան ոյժ չէր սպասում.
կարծում էր շուտ կըթուլանաց: Ուզենալով զորտի
բարկութիւնը մեղմացնել և մի կերպ ցածաքին հաս-
նել, կակուղ լեզուով վրայ բերեց.

—Քաղցրածայն ընկեր, ներողութիւն արա, վար-
մունքովս մեղաւոր եմ քու առաջ: Բայց եթէ բանի
էութիւնն իմանաս, այնքան չես նեղանալ: Ինչպէս
երեւում է, դու անաղեակ ես մեր ցեղի բնութեանը:
Կարիճների սովորութիւնն այնպէս է, որ երբ մի փա-
փուկ մարմին են ակնում, նրանց մէջ մի անզուսակ
փափաղ է մնում, որ անպատճառ մօտենան ու ի-

րանց խայթը փորձեն: Այդ բանը նրանց համար բնա-
կան պահանջ է. մինչև դրանով սիրաները չըհովացնեն,
հանգիստ չեն մնալ: Ասածուն է յայտնի, թէ քեզ
ի՞նչքան իմ սիրում, ուղեցի միայն փորձել խայթս,
ուրիշ ո՛չինչ: Այս խոստովանութիւնից ետք յուսով
եմ, քաղցրածայն, կըներես արաքս իբրևնական թու-
լութիւն ու առանց ուշ գարձնելու կըշարունակես
լու ապար. ահա ափին մօտեցել ենք:

—Այդպէս հա, կեռպոչ ընկեր, վրայ բերեց հան-
գարառուած զորար. Ես կարծում էի թէ չարամատու-
թիւնով ես արել, էնդուր բարկացաց: Աիր քեզ պէս
ընկերից նենգութիւն սպասելլ խեթի մօտիկ բան չէ:
Քու արածը ուղիղ որ բնական պահանջ է ու ներո-
գութեան արժանի թէկուզ թշնամու կողմից. իսկ ես
հօ քու սրասկից բարեկամն եմ: Ի՞նչ ասել կուղի,
ներում եմ, բայց մի բան ափսոսում եմ, որ այսքան
ժամանակ ընկերութիւն անելով մի օր միջոց չունե-
ցայ քեզ ասեմ թէ ի՞նչ սովորութիւն են ունեցել իմ
պապերը: Ի՞նչ ասել կուղի, զու իբրև սրասկից
ընկեր, կուղես տեղեկանալ իմ պապական սովորու-
թեան:

—Ի՞նչպէս չէ, հաւանութիւն տուեց կարիճը
զորտի առաջարկին, ամեն ցեղ իւր բնական յատկու-
թիւնն ունի և յաւիտեան անկորուստ պահում է:
Ել ինչի՞ ընկեր եմ, որ չհետաքրքրուեմ քու պապա-
կան սովորութիւնով: Պատմիր լում:

—Պատմելով լաւ չեմ կարող հասկացնել, կուզես օրինակով ցոյց տամ:

—Դրան էլ հակառակ չեմ, քաղցրածախ ընկեր, օրինակով ցոյց տուր:

—Կեռպոչ ընկեր, խօսեց գորտը հանդարաձայնով, պէսքէ իմանաս որ իմ պապերը ջրի երեսին շատ լաւ էին լողում:

—Հաւատում եմ, կարելի է, հաստատեց կարինը:

—Մենակ այդ չէ. նրանք ջրի տակն էլ լողալու սովորութիւն ունեին: Ես հիմի իբրև նրանց հաւատարիմ թոռ, ուղում եմ նախնական սովորութիւնը փորձել, որ աեսնես, ինչքան լաւ զբօսանք է: Մէջքիս պինդ կաց, կեռպոչ ընկեր, վէր չընկնես:

—Վայ, վայ, այդ ի՞նչ ես ասում, քաղցրածախ ընկեր, սրապատառ ճուաց կարինը, ի՞նչ վաս սովորութիւն են ունեցել քու պապերը: Թող, իսկը Աստծու, հիմի ժամանակ չէ, յետոյ կրփորձես, աղաչում եմ, թո՛ղ: Յածաքը մօախի է, լող տուր, հասնենք, ջրի տակ շունչս կրկտուի, կրխեղդում: Յատուի խնդրում եմ, դորա ընկեր, ծեռ վեր կալ այսօր քու պապական սովորութիւնից, աղաչում եմ, լող տուր ցամաք հասնենք:

Գորտն առանց ուշ դարձնելու նրա աղաչանքին երեսը թեքեց գէպի լին խորը և ասեց.

—Զուր աեղը լեզուդ մի ցաւացնիլ, քեզ լսողը չեմ. լաւ հասկացայ ինչ պառող որ ես: Խոտորնակին խոտորնակ է հարկաւոր. Ես ալնքան էլ լիմար

չեմ, որ քեզ պէսի ծեռին իշի մարտիրոս դառնամ: Ի՞նչ օգուտ աշխարհին, որ քեզ շալակած ափը հասցնեմ:

Ասեց գորան ու ոսները չուելով սուզուեց ջրի տակը: Կարինը սարսափահար եղած պոկ եկաւ գորափի մէջքից ու մնաց ջրի երեսին բալզի-բալզի անելլա: Ալիքների մէջ գէս պարանուեց, զէն պարանուեց, լողալու շնորք չունենալով տեղն ու տեղը խեղդուեց, գնաց:

5 ՈՐՍԿԱՆՆԵՐԻ ՎԵՃԸ

Ապրես պապը չուբուխը փստացնելով հետեւեալն էր պատմում:

«Խոր ծճակի միջով էրէներ շալակած գնում էին որսկանները.

—Հազար բերան քեզ փառք, Աստուած, ասեց նրանց միջի բարձրահասակ, կարմրաթուշ Սոլին, այս անգամ այնքան առատ բաժին տուիր, որ առանց աչ ու ծախ նայելու ուղղակի կրգնանք տուն և մեր ընտանիքի հլաւ ամբողջ շաբաթ լիուլի կուրախանանք: Բոլորիս շալակներն էլ ծանր է, հաղիւ ենք տանում: —Սիրելի ընկերներ, եկէք պայման կապենք, որ էլ որսի չդիպչենք մինչև իրիկու: Աչքածակութիւնն էլ մի բան չի: Իմ տաս Զէլրան-խանումի անունովն եմ երգւում, ես ծեռս մաղի մեկնողը չեմ:

—Ես էլ յօժար եմ աղդ ուխտին, ասեց կռնատ էլմօն, Միքէլ հրեշտակապետը զլիխս խոռվ կենայ, թէ խօսքից դուրս զամ:

—Ես էլ ընկեր եմ, Սքանչելագործ սուրբը վրկալ, ասեց օղեսէր կոնոն:

—Գալինիկոս սուրբը զլիխս խոռվ կենայ, թէ աղդ վճռից ես կենամ, վրայ բերեց ցցամորուք չանօն:

—Ովաւայ մարդարէի դօքքին կապուած մնամ, թէ ընկերին նենդ աչքով նայեմ, ասեց քառ. Գալօն:

—Աւադ ընկերներ, իրաւափառ հայրապել ինձ փչացնի, թէ ընկերների դաւաճանեմ, ասեց իշխամորուք չումօն:

Այս պայմանը կապելով շարունակեցին ծճակով գնալը. շուտ համնելու էին սարահարթի զլուխը ու այնաեղից իջնելով, մի սիրուն ջրանցքի ափով թէքուէին գէպ իրանց օթևանները:

Դեռ օր կար: Մի խալտաբղէտ վայրի կտոռւթիւնի մէջ մի նախշուն տատրակ էր դաել և ուզում էր ծուստի, ուսի:

—Ա՛յս, դժա սգաւորիս, աղաչում էր տատրակը, հայրապուրկ ծագերիս միակ ապաւէնը ես եմ. բնի մէջ մերկ ու քաղցած ինձ են ապասում, թոյլ տուր ժողոված մնունդը տանեմ, կերակրեմ:

—Առ'ւս, մարի, ես քեզ թողնողը չեմ, սիրուն վիզի, կարմիր տոսիկներդ վաղուց են ինձ դրաւել:

Ում գեղեցկութիւնն ուզում են գովել, տատրակի են նմանեցնում, սպասիր, կարօտա առնեմ:

—Եթէ տեսքս է քեզ զրաւողը, չարթն ու յոպոալ վետուրներով ինձնից սիրուն են, ահա գէմի ծառերի վրայ ոստոսառում են, ասեց խեղճ ծայնով տատրակը:

—Կորչին այդ անպիտանները, լզար հոտած արարածներ են, նրանց տեսնելիս եղած ախորժակը էլ կապւում է:

—Թո՞ղ, աղաչում եմ. Ես զուարենալու սիրունեմ. խօսեց տատրակը աղատուելու աշխատելով:

—Ո՞ւր ես շտապում, մարի, մի անդամ հաղիւնիւր ես եկել: Խօսիր, սիրութացուի, ասեց կատուն, որսկանների ահից մի շաբաթ է դողս բռնած: Զագերիդ տէր լոյս կրնկնի, ապահով կաց:

—Վայ, ինչ եռ ասում, ծաղերս, ասեց տատրակը և սպաց:

—Տը, ինչ ես լալիս: Եթէ բունդ շներից հեռու է, կը գնամ ծագերիդ էլ կըբերեմ իմ որչի մօտ, ապրեցէր, ինչպէս կուզէք:

Տատրակը «ոչ ոչ» էր կանչում ու հեծկլտալով թէերին անում, թրապտում, որ չանդերից դուրս ալրծնի, բայց կատուն ամուր սխմած զուարենանսւմ էր նրա լաց ու կոծի վրայ:

Յանկարձ որսկաններն երեւացին, կատուն գողը բռնած գոչէց:

—Ա՛յս, անիրաւներ, ինչ վատ ժամանակ բան,

չանդիստ բոպէ չունեմ, այժմ սրանց ծեռից ո՞ր կողմ փախչեմ, որ որսր զլիսիս հարած չանեն:

Դառնալով տատրակին զսպած ծախով ասեց.

— Լուիր, մարի, թէ չէ շնչահան կանեմ, բաւուկան էր որ ուրան մնչացիր ու վրչացիր: Որսկանների այս կողմով գալը քու շառն էր, հետք փնտուելով եկան իմ զլիսավերև տնկուեցին. սրանց երեսը նդուված: Քանի, քանի անգամ խորամանկութիւնով, պոչիս պէս պէս շարժումներով նրանց շների ճանկից պրծել եմ, էլի չեղաւ, փառ տեղ մթնացրին: Անպիտան տատրակ, ի՞նչ բանս էր կարուել, որ ուտելու տեղ հետդ զրուցի կացայ:

Այս ամենն օրսկանները որոշ աւեսնում էին ու լսում էին: Կարմրաքիթ կոնոն այնպէս տեղ էր, որ կատուին աւելի մօա էր. նրա հրճուանքը զալիս էր տատրակի չորչարուիլը նկատելիս: Աոլին որ ընկերների մէջ հումկուն ու փորձառուն էր, դարձաւ նրանց.

— Մէնք մի ժամ առաջ երդուեցինք, որ մեր ունեցած էրէներով բաւականանք, ինչ հազուագիւտ թռչուն, անասուն էլ մեղ հանդիպելու լինի, դաշոնի, հրացանի ծեռ չտանք: Բայց խորամանկ կատուն զայթակղիչի պէս, տեսէք, մեր աչքի առաջ անվրզով բռնած, անմեղ տատրակին պատառուում է: Մի բան եմ ուզում առաջարկել, ընկերներ, եկէք համ մեր ուխտը պինդ պահենք, համ մի փոքր ողորմածութիւն անենք: Անթիւ յանցանքներ ենք զոր-

ծել մինչև օրս, յօժարուեցէք տատրակին ազատենք կատուի ճանկերից, վարձք է: Զեզ եմ դիմում, կոնո, Հանո:

— Տատրակին իհարկէ արժանի է օգնելը, խեղնը կակիծից սդում է, աղատենք, ասեց Հումօն:

— Վարձք անելուն, հոդի փրկելուն դէմ չեմ, մրթմրթայ կոնոն, բայց խօսքը տատրակի մասին է, որ շատ էլ բարի պտուղ չէ, լրատար աղաւնու աղգականն է, ի՞նչ պտի լինի: Իմ կարծիքով դրանց տատրակելն է արժան ու շամփրի անցկացնելը: Բացի այդ, չէ՞ որ երգուել ենք ծմակում այսօր ոչ մի շընչաւորի հանդիսար չվրդովել, ինչու չենք մեր ճամբէն դնում: Կատուն ի՞նչ ուզում է, անի, մեզ ի՞նչ վնաս: Վազ թէ ուշ այդ կատուն մէկն ու մէկիս բաժինն է գառնալու, թող տատրակին մշրի, աւելի փալուն մորթի կունենայ:

— Ինձ հետաքրքիր չի իմանալ, թէ տատրակը աղաւնու աղգականն է թէ կաչաղամկի, խօսեց Սոլին, ուշ զրաւողը ահա այն վրդովեցուցիչ տեսարանն է, որ աչքիս առաջ տկար արարածը զուր տանցում է արիւնխում գազմնի ծեռին: Մէր պէս քաշերի պարտքն է այդ տկարին աղատել վերահաս մահից, զրանով մեր այսօրուայ երգումը չենք զրժում: Լսում էք, ի՞նչպէս աղիողորմ ծախով օգնութիւն է հայցում: Ի՞նչ կատէք, էլմօ, Գալօ. եկէք բարկանանք կատուի վրայ միասին, աղատենք խեղթին: Զեմու զում առանց ընկերների համածայնութեան բան

բոնել, քանի որ միատեղ ենք. թէ չէ մենակ ես ել բաւական եմ կատուին կարդի հրաւիրելու:

Կոնաստ էլմօն շատ կարտով միրող էր, լուռ էր, լուռ էլ մնաց, որ վերը տեսնի, թէ ո՞ր կողմը շատ ծայն կայ, որ այն կողմն անցնի: Հանօն նոր էր Կոնոյի հետ խնամացել: Գալօն չգիտէր էլմօյին հետեւի, որ իւր խնամին էր, թէ հումօ դրացու հետ բազմափոք Սոլու առաջարկին ականչ դնի: Ամենն էլ սրաների մէջ զգում էին, որ Սոլու առաջարկին արդար ու գեղեցիկ բան է. բայց իրար դէմ ունեցած ծանր հաշիների պատճառով չէին ուղում մի խօսքի դալ:

—Հանօ, յուզուած ծայն առւեց Սոլին, լեզու ունես, ինչու ես լոռում, շարունակ խնդրածդ «զըթութիւն, եղբայրութիւնն» է, ինչու չես խօսքիս ուժ տալիս: Ինչ կը պակսի քեզնից, որ ծայնակցես, կատուին սաստենք, խեղն թուզունին բերանից թողի: «փրշտ» կանչելով հօ բերանդ չի ցաւում: Ինչու անողոք ես կարուել:

—Այդքան յանդիմանելլ ինչու համար է, պատասխանեց Հանօն, մի տարրակի համար հօ կոխ չպէտք է սարքել այստեղ, իմ խնամի Կոնօն երբ որ յօժար չի, ես էլ նրա խաթրու լոռում եմ: Դրանով ի՞նչ վեստ եմ հասցնում մեր բնկերութեան:

—Բանը վեստի ու օգտի մէջ չէ, դրացի Հանօ, առեց Սոլին վրդովուած, այլ մեծ նախատինք է բոլորիս համար, որ այս տեսարանի առաջ անտար-

բեր կանգնում ենք: Ով էլ լսի մեր արարմունքը, կը թքի մեր երեսին: Ի՞նչ տարածայնութեան, հակառակութեան տեղ է. միթէ ձեր սիրար չեն ծակում տատրակի բերանից լսուող ախին ու հառաչը: Քարամիրտ միք լինիլ, մեր հետ ծայն տուեք, կատուն վախենալ, թուչունին թողի, մենք էլ մեր համբէն շարունակենք: Կատուն ինքն էլ գոհ կըմնայ, որ ինքը ողջ-անդամաս աղատուում է մեզնից:

Այդ վայրկեանին կոնաստ էլմօն երկար լոռութիւնը խզեց.

—Որքան հասկանում եմ որսկանութեան օրէնքները, զրած երգումը պիտի անխախտ պահել. փոխելու համար բոլորի համաձայնութիւնն է հարկաւոր: Բայց ինձ իրը որսկանի անհասկանալի են «զթութիւն, կարեկցութիւն» խօսքերը: Էլ հրացան վերցնելս ու անտառ չափչիելս ինչու համար է, որ ամեն ըսպէ հրացանը ծեռ առնելիս խզնալու եմ այս ինչ թուչունին, որովհետեւ անմեղ տատրակ է, այն ինչ անսատունին, որովհետեւ արդար կիստար է: Որսկանը արիւնը չըի պէս պախ խմիլ, եթէ ի՞սկ որսկան է: Ես իմ բամին «խիղճ, միղճ» բառերը որ լսում եմ, զիզզս գալիս է: Իմ կարծիքն է. կամ մեր երգումի համեմատ անուշաղիր թողնենք, անցնենք, ինչքան ուղում է լիմար թուչունը կատուի չանգերում վրցվրցայ, կամ երկուսի էլ կարծիքը կապենք, ինարկէ ընդհանուր վճռով: Որոշեցէք, ո՞վ նրանց դնդակնով խփի և ի՞նչպէս բաժանուի, բայց քուէով թէ ծածու կ:

—Ո՞չ ելմօ, ասեց մեծամարմին կոնօն, քու կարծիքին ես հաւան չեմ, կատուն անվասա պայտ մնայ, ոնց որ կայ: Բայց տատրակը իբրև համեղ պատառ, ուրիշ բան է, ինչու զուր փախչի դնայ: Զեղ հետ յօժար եմ կատուին «փիշտ» անել. միայն մի պայմանով, որ իրաւունք տաք փախչող տատրակի վրայ հրացանս պարպեմ: Եթէ դիպյնեմ, իմ բաժինը լինի:

—Զարմանալի մարդ ես, կոնօ, ասեց Սոլին, մենք գաղանի ձեռից ազատելու վրայ ենք խօսում, զու ցանկանում ես մահից ազատուածին զնդակի բռնել: Դու չէիր, որ Սքանչելազործի անունով երդուեցիր ալսօր ունեցածովդ բաւականանալ:

Հանօն նկատեց, որ կօնօն նեղ տեղ լծուեց, իբրև կողմնաբաշ խնամի օգնութեան հասաւ.

—Արժէ՞ որ չնչին թռչունի համար ընկերի սրտին դիպչում էք: Եկէք «փիշտ» անենք, կատուն փախչի, իսկ տատրակի վրայ կոնօն միայն հրացանը փործի, կարեկի է չի կը դիպչում: Դէ սկսենք միածայն կանչել «փիշտ, փիշտ»:

Դեռ այս խօսքը ցցամորուք Հանօյի բերանումն էր, Սոլին զայրացած վրայ բերեց:

—Զեմ հասկանում «փիշտ, փիշտ» կանչելն ի՞նչ խորհուրդ ունի, երբ մահից ազատուածին նորից մահի ենք բռնում մեր ձեռովից: Իմ ալսօն ցաւելս թռչունի համար է, եթէ նա կենդանի չի մնալու, ի՞նչ դժուար է չար կատուին մի կարմիր զնդակ ու տացնելը, որ դնայ սատկի:

—Սոլու ասածը արդար է, ասին միաբերան չամօն, Գալօն: Ա՛րի, էլմօ, վէճն այնպէս խաղաղացնենք, որ ոչ կոնօն վշտանայ, ոչ Սոլին: Կատուին սաստենք, թռչունը թռղի ու մենք գնանք մեր գործին: Փործի համար կամաց-կամաց կանչենք «փիշտ, փիշտ»:

—Տեսնում էք, ինչ յանդուգն է, գոչեց չումօն, ընդհաստելով «փիշտ-փիշտ»-ը, ուշ էլ չի գարծնում մեզ: Եկէք բարձրածայն և ուժով կանչենք. կոնօ, էլմօ, չանօ, գուք էլ խոյս միք տալ, բերոննելով բաց արէք: Կատուն միամիտ չէ, հասկանում է, որ մեր մէջ իւր պատճառով տարածաբանացնելիւն կայ: Եկէք ինչ ասում ենք, միածայն անենք. Եթէ գարծեալ չի հնազանդիլ մեր սպառնալիքին, այն ժամանակ նըրան խստապէս կրպատմենք իբրև ըմբոստի:

Եւ բարձր ու պինդ կանչեցին «փիշտ, փիշտ, կամառ»: այս անգամ էլ բոլոր ծայները միատեղ չէին. զրա համար կատուն մնաց անփախ, համարծակ. որպը բերանին շրջանի մէջ դէս-դէն էր ընկնում, որ ապահով անկիւն դանի, թագնուի, բայց հրացանների փալլուն փողերից պատկառելով ակամայ պտոյս պրտոյս էր անում ու փետուրները որսի վրայից թափ-թրփում. որսկանները շարունակում էին «փիշտ, փիշտ» կանչել, գարծեալ սպարզիւն: Խեղճ թռչունը չանդերի մէջ ամուր սղմուած հառաչում էր.

—Այս ձագերս, որբուկ ձագերս: Ասսուած, միթէ մէկին վեսա եմ հասցրել, մարդկանց ինչու հա-

մար ես աչքեր պարզեցի, Տէր, որ անիրաւութիւն տեսնում են ու չեն վրդովլում:

Համարձակ կատուն այդ ժամանակ ծառաբնին մօտեցաւ, որսը հանգերի մէջ բռնելով սպառնաց.

— Անզգամ թռչուն, ծայնդ ու լացդ չես կրտրելու, ագահ որսկանները շրջապատած քեզ են ականջ դնում: Լոիր, շուտով արձակելու եմ, թէ չէ երկուսիս կլ վտանդ է սպառնում: Չես լում, ուղում ես քու պատճառով ինձ կլ գնդակահար անեն, ուրեմն կանխօրէն ես քեզ մաս-մաս կտնեմ:

Այս ասեց ու մարուղ կացած տեղից մի երկու ոստիւն անելով ժառի փեշակը թռռաւ ու ճիւղերը չանդրատելով դէպի կատարն ելաւ, որ բարձր ոստեր դանի ու թաղնուի: Տատրակը տնքում, վրչում էր. խեղնի փետուրներն այժմ իրանք իրանց պոկլում էին և օդի մէջ ժածանուելով ժառի տակ փռռում.

— Տեսնում էք, որքան անպատկառ կենդանի է, դոչեց կատաղած Սոլին, որման արձակելու տեղ մեզ ծողրում է ու ժառի կատարը փախչում, կարձելով թէ մէր վրէժինդրութիւնից կարող է ագատուել: Իմ կակիծը թռչունի վրայ է գալիս, որ զրեթէ նահատակուեց անիրաւի ձեռին, փետուրներն ամենը թափուեցին, աղուամազը նրա սուր ատամների դէմ ի՞նչ կունենայ. վաղուց նրա փափկամակը ծակ-ծակուած կրլինեն: Առանց խնայելու պէտք է այդ լրբին պատժել:

— Ի՞չի՞ պատժել, գարձեալ բնդդիմախօսեց հար-

բան օղեսէր կոնօն, կատուն ողջ պիտի մնալ, մէր երկումն ալլպէս է: Տատրակի հարցն ուրիշ է, նրա մահով աշխարհից մեծ բան չի պակասիլ: Եթէ նա իմ որսորդական սոպրակը չընկաւ, թո՛ղ սրասոս կատուի բաժին լինի, այդ էլ փարձը է:

— Վահ, ի՞նչպէս թէ փարձք, շփոթուած և ալլպուած դոչեց Սոլին, կատուի ձեռով տիար թռռչունի պատառոսուելլը վարձք ես համարում: Եւ այդ գու ես ասում, կոնո, որ բուի, բադի պէս թռչուններին մեղքանում էիր, ցինի ու անզի ձեռից աղատու մ մի բանի շաբաթ առաջ, իսկ այժմ դէպի անճար լորն ու ողորմելի տատրակը դառել ես անկարեկից, անտարեր: Գութ ու ողորմ ասած բաները սրտից կարձես չքացել են: Քեզ ի՞նչ օգուտ կը լինի, եթէ գոյ կատուն տատրակին լափի: Եթէ կատուի ձեռից խլենք, քեզ տանք, զբանով ի՞նչ կաւելանայ ունեցածիդ վրայ: Արարշին փառք, տմեն բարիքով տունդ լցրել է, միթէ տատրակով զիրանալու կարիք ունես: Ինչո՞ւ մեզ հետ հաւասար չես ուղում, որ նրան տանջանքից աղատենք, զառնացած սրտին հովութիւն տանք: Ողորմելի տատրակը քեզ ի՞նչ գէթ է արել:

— Բոլորովին պարզ է, որ ամօթը ամենիս է վերաբերելու, խօսեց վեհանձն հումօն, վճռենք զրնդակահար անել անպատկառ կատուին և ծառից զրլորել, տատրակի մէջ եթէ մի քիչ կենդանութիւն մնացած կրլինի, այդ էլ իւր բազզը: Միայն կա-

տուին զլորելը կոնօյին յանձնենք.—այդ պասիւը ես իմ կողմից առաջարկում եմ նրան:

Կոնօն յաղթականի պէս խէթ անելով Սոլուն դարձաւ.

—Քու յետին մաքերը ես լաւ եմ հասկանում, ինձ չես կարող արածացնել. նախանձն ինչո՞ւ է քեզ սպանում տուլլակս աւելի կտոր մտնելիս: Հապա դու, որ վագրերն ու չայլամները ծածուկ էիր պարտակում, նրանից մեզ բաժին չկա՞յ...

—Հին հաշիւները մաքրելու ժամանակ չէ, ամօթք շեցէք, ասեց Հումօն, այսքան վեճը ողորմելի թրոչունի առիթով է, հիմի ո՞վ գիտէ նա շունչը փչեց: Գալո, էլմօ, դուք ինչո՞ւ չէք խառնուում. առելք Հանօն խնամի կոնօյի խօսքից չի ուզում անցնել: Օրը մթնելու վրայ է, այսաեղ հօք քնելու չենք, մենք էլ տուն, ընտանիք ունենք: Եթէ կոնօն համաձայն չէ կատուին զնդակ ուտայնելու, բոլորս միասին հրացան արծակենք, անզգամ գազանի մարմինը թող կտոր կտոր լինի:

Հանօն, որ Սոլու պատճառով Հումօյին հակառակ էք, հեղնելով ասեց.

—Ոչ միայն իմամօրուք ես, այլ և իմի խելք ունես: Այս հօ մակարօն ուտելլը չէ, որ բոլորի բաժինը խլես: Ամենս որ միանգամից հրացան արծակենք կատուի վրայ, գիտես նրա չալպտուրիկ մորթին ի՞նչ կրդառնայ, էլ չեմ ասում թէ քու գդուած թռչունի մեծ կտորը ականչն էլ չի մնալ: Ասենք կիր-

քրդ շարժուել է տեղից, ուզում ես անհնազանդին պատժել, ինչո՞ւ այնպիսի միջոցի ես դիմում, որի վերջը փոշիմանութիւնն է:

Որսկանները ծխերով շարունակում էին իրանց վիճաբանութիւնը, իսկ ծառի բարձրից անընդհատ թափուում էին փունջ-փունջ աղուամազեր տատրակի կրքից, վզասակերից պոկուած ու ծառաբնի շուրջը կանգնած որսկանների առաջ ցրուում:

—Ահա մեր վէճի ու գանդաղիսուութեան հետևանքը, դառնացած ասեց Սոլին, այս աղուամազերը նես կրդառնան և մեր բթացած սիրար կը ծակծէն ապագայում, բայց ուշ կըլինի: Հարիւրաւոր յանցագործութեան դէմ չկարացինք մի փոքր բարերարութիւն անել: Մեր անհամածանութիւնից միան չար կատուն է օգտուում ու պատառոսում անմեղ զոհին: Ամօթ մեզ:

—Այդ ծանր նախատինքներին մենք դեռ արժանի չենք, վրդովուած խօսեցին որսկաններից երերը: Կատուն ի՞նչ է մեր անսահման ուժի առաջ, եթէ ուղենանք, մինչև իրիկու հաստարուն ծառն անգամ արմասից հանելով վշուր-վշուր կանենք, ի՞նչ թէ նրա վրայ ապաստանած լիրք կատուին: Միաբան առաջարկում ենք կոնուն, որ հրացանը վղից հանելով ծառից ներքեւ վրորի յամառին. տատրակը վրուխը քանի, զոնէ մեր ընկերութեան անունին արատ չդիպչի:

—Լաւ էք ասում, մեր խնդիրը չեմ մերժիլ, ա-

սեց կարմրաքիթ կոնօն հրացանը շարժելով, բայց
պայմանն ի՞նչ է լինելու: Ասենք թէ կատուին ծա-
ռից իշեցրի, օգուտաս ի՞նչ. չէ՞ որ դնդակ ու փառօդ
եմ փացնում: Իբրև վարձ ամբողջ մորթին ինձ էք
տալի՞ս, թէ բաժին էք ուղելու:

— Զէ, ազդ ի՞նչպէս կըլինի, թոնթորաց կար-
տոփասէր էլծօն, եթէ մենակ սեպհականելը կարելի
լինի, ես իմ հրացանը վզիցս կըհանեմ, մի վայրկենի
բան է:

— Ես էլ համածան չեմ. ինչու մենակ կոնօն
վերցնի; մէջ խառնուեց Գալօն, ես էլ իմ հրացանն
եմ հանում: Շատ էլ նրա խոփը սուր է, չէ՞ որ
հանդը բաժանովի է:

— Ես էլ ազդ կարծիքին եմ, խօսեց չումօն, ա-
մենս էլ բաժնի տէր ենք: Եթէ չէ, ուրեմն ամենս
էլ հրացան արձակենք, թող մորթին ծակծրկուելով
փչանայ:

— Ես մէկի տեղ երկու գնդակ կրցցեմ անպատ-
կառի կրծքում, որ բացի թռչունին քրքրելը՝ մէր
ընկերութեան մէջ կոռուպտանձորը դարձաւ, ասեց
Սոլին:

Այսքանը պատմելուց եար Ապրես պապը լուց,
նրան յալտնի չէր թէ ի՞նչպէս եղաւ տատրակի վեր-
ջը: Արդեօք շունչը փչէց, արդեօք ազատուեց, ար-
դեօք կատուն գնդակահար եղած ներքեւ զլորուեց,
թէ զեռ որսկանները շարունակում են վիճել ծխա-
խոտները նորողելով:

ԷԼԻ ՈՂՈՐՄԻ ՀՕՐԼ

Վաղ ժամանակ մի մարդ կար շատ աղահ ու
քաշ: Սա ինչ զրփողութիւն ու գէշութիւն ասես,
բէրել էր իրանից տկարների զլսին: Մինի հողն
էր խել, իւր համար արտ ու հանդ շինել, մինի
գետն ու ջուրն էր սեպհականել ծորն ի վեր անթիւ
չաղացներ սարքել: Հող ու ջրով ամենի տէր տիրա-
կանն էր դառել, իշխանն էլ էր նրա ոտք դալիս,
վարնորդն էլ: Կարողութիւնը ինքն բատ ինքեան, օր
օրի վրայ զարմով ու սերնդով էլ էր հարստանում: գետի
բէրանից սկսած մինչև ակը նրա որդիքն ու
թռուներն էին տիրապետում:

Ինքը հարիւր տարեկան աւել կըլինէր, էլի աչքն
անկշառում. ինչքան էլ իրանից դժբաղդացածներն ա-
նիժում, նղովում էին, նա ուշ չէր դարձնում, շա-
րունակում էր զրկողութիւնը: Համարեա թէ դառել
էր աշխարհի ամենահարուսար:

Բայց աշխարհի հետ ո՞վ է յաւիտեան եղբայր
դարձել, որ չաղացաւաէրը դառնար: Մերութիւնից
կծղեց, մահին ընկաւ, նոր իմայցաւ, որ աշխարհի
հարստութիւնը ոչինչ բան է: Համողուած էր, որ ի-
րանից վնասուածները յաւիտեան շարունակելու են
իրան նղովելը, հայնուելը: Հոգեարք էր. մահին մէջ
երկար ժամանակ իրղնդում էր ու չէր մեռնում:
«Կարելի է, մասմառ էր նա, Աստուած ուղում է,
որ արած անիրաւութիւններիս համար տանջուեմ...

այդ ուր կը գնայ... Եթէ ամէն մի զրփողութեան ու գէշութեան համար մի բոպէ խրլնգալու լինեմ— հոգեարքս տարիներ կը քաշի: Զէ, լաւ կը լինի ժառանգներիս պատուիրեմ, ինձանից եար իրանց զործը այնպէս տանեն աշխարհում, որ հոգուս համար միւս կեանքում տեղ ու դադար լինի:

Կանչեց ընտանիքի բոլոր անդամներին իւր մահեցի շուրջն ու ասեց.

— Սիրելի որդիք ու թոռներ, այսօր ուղում եմ ձեզ յայտնել իմ վճիռն ու կտակը: Վաղուց շունչս փչած չոլինէի, Եթէ անողոք խիղճս հանգստութիւն տար... ինձ օր ու գիշեր շամփրում, տանջում է: Եթէ այդպէս իմանայի յափշտակութեան վերջը, ոչ մի պայմանով հոգիս անքան չէի զրկիլ: Միակ վաստակը, որ տանելու եմ այս աշխարհից, նորին է ու անէծքը: Վայ իմ միսիթարութեանը:

Լաց եղաւ հիւանդը և խօսքն այսպէս շարունակեց.

— Մինչեւ հիմի ես էի կառավարիչը բոլոր հարստութեանս ու կալուածներիս, նախնական սովորութեան համեմատ իմ տան կառավարչութիւնը իմ մահից ետ անցնելու է քեզ, իմ աւագ որդիի: Մի բան, որ ես երկար փորձելուց եար իմացայ, շատ լաւ կը լինի, որ դու այսօրուանից իմանաս, քանի չահել ես.— այդ այն է, որ ինչքան զրփես, զրկես, աշխարհի ապրանքը աշխարհումն է մնալու: Ի սկզ Աստծու, այնպէս բան բռնիր, այնպէս վարուիր, որ

քո պատճառով մի բերան ողորմի լաեմ ժողովրդից, որին ես այնքան զրկել եմ: Խեղճ մարդիկ երբ չաղացն աղուն էին բերում, հին սովորութիւնով 20 խանից մէկն էին շնաւ տալիս, վայ հոգուս, ես շինեցի 10-ից մէկը:

— Այդ իմ, սուրբ է քո կամքը խօսեց մեծ որդին ու չոքեց աշը համբուրեց: Քեղափէս երախտաւոր նահապետին ողջ-անովի յաւիտեան կըսիրենք ու կրպաշտենք. ամէն մի թոռ ու ծուռ քու անունը պարձանքով կըսիշի, միամիտ կաց: Քու ահը օապր մարդկանցից է, վախենում ես շարունակեն քեզ անիծելլ: Զէ, հայր իմ պաշտելի, անհոգ կաց, ես այնպէս բան կըբռնեմ քու մահից ետք, որ ժողովրդի ողորմին ու օրհնանքը գերեզմանիցդ անպակաս լինի:

Հիւանդը պինը ծռած, աչքերը պլրղացրած, բոլոր ուժը ժողոված պատրաստուեց, որ լսի որդու անէլիքը: Որդին շարունակեց.

— Իմ շատ անելիքներից հէնց միայն մինն ասեմ: Եթէ դու աղունատէրերին չաղացի դռանը կանգնացնում էիր, քու ասասանորդն ստանում, յետոյ ներս թողնում, ես, հայր իմ, չեմ թողիլ էլ չաղացին մօտենան: Գետի այն կուանը՝ կամրչի խելումը կառնեմ իմ ուղած շնատը՝ 10 խանից չորսը և ոչ թէ 10-ից մէկը, յետոյ իրաւունք կըտամ չաղաց մտնեն, աղունն աղան:

Երկրորդ որդին մօտեցաւ հօր աչն առաւ ու կանդնեց ասեց.

—Հայր իմ, քու կամքն ինձ համար սուրբ է. վճռի համեմատ հնազանդ կրինեմ մեծ եղբօրս: Բայց եթէ տան կառավարչութիւնն իմ ծեռն ընկնի, եղբօրս չափ գանդաղ չեմ լինիլ: Օրինակ՝ ի՞նչ հարկաւորս է զուր ժամեր կորցնել, կամշչի խելում կանդնել, ինչ է, աղունասիրը պէտք է բերած ցորենը չափի, որ իմանամ քանի խան է ու 10-ից իմ բաժին չորսը վերցնեմ: Դա միամափ զործ է, ևս չեմ անիլ: Մի բան հաստատ դիտեմ, որ վարնորդը, զիւղացին մի բեռ ցորենը հատիկ-հատիկ ուսողը չի, անսպատճառ աղալու է, որ ալիւր շինի: Այդ գիտենալով ուղղակի պայմոն կրդնեմ, որ էշի վրայ բարձած հակներից մէկն ինձ տալ: Եթէ կրծոմարի, լաւ, թող իւր մի հակն աղայ ու տանի, եթէ չէ, զլուխն իրանը քարը, ուր ուղում է գնալ: Նա հօ մի երկու բեռ ցորենի համար չաղաց շինողը չի: Ասենք՝ շինեց էլ. ո՞վ չուր կրտայ, չէ որ գեար տակից մինչև ակը մեր սեպհականութիւնն է: Ողործի ես ուղում, հայր իմ, այն ժամանակ գերեզմանումդ հանդիսա պարկիր ու լսիր:

Հերթը երրորդ որդունն էր. կռացաւ հօր աշն առաւ ու ասեց.

—Հայր իմ, ինչպէս ուղում ես ինձ վրայ բարկացիր, եղբօրտանցս ոչ մէկի ասածի հետ համածայն չեմ:

Եւ յետոյ զլուխը թափ տալով բարձրածայնեց.

—Այդ ի՞նչ խելք է, որ զբանք ուղում են բանացնել, մինն ուղում է 10 խանից միայն չորսը վերցնի,

միւսը երկու հակներից մէկն էլ ակրոջն է տալիս. այս ի՞նչ աւելորդ սրաացաւութիւն է, ես չեմ հասկանում: Եւ զեռ զրանք ասում են, որ քեզ սիրում են, այդպէս բաներով ի՞նչ ողորմի կարող են վաստակել քեզ համար: Եթէ մեր տան կառավարութիւնը իմ ծեռն ընկնի, այնպէս բան կանեմ, որ հայր իմ, գերեզմանդ ուխտատեղի գառնայ ժողովրդի համար: Աղունով բարձած էշը, որ կրզայ չաղացիս զուռը, էլ ինչո՞ւ եմ թողնում, որ ետ գնայ. զիսիս ծի է քացի առւել, թէ խելքս հացի հետ եմ կերել: Այն ցորենը մեր հանդերից չի քաղած, մեր գետի ջրով չի հասած, այն բեռնակիր էշը թէ չորին մեր հանդի խոտերով չեն ապրած:...

Դեռ երրորդ որդին խօսքը չէր աւարտել, հիւնդի մեծ թոռն առաջ խիզախելով զոռաց.

—Այդ ի՞նչ սլրնդի խոստումներ է, որ անում էք, հօ զրանով պապիս առներ քանդում էք, չէ, պէտք է զօրեղ մնայ: Պապիս համար ողորմի վաստակելու համար ի՞նչ էք մանր բաների ետեկից ընկնում. շհատ, հակ էշ, շորի բերան բերելով մեզ զիսացաւանը պտտառուում:

—Բա ի՞նչ ես ուղում, ի՞նչ ես անում, հարցրին ամենքը:

—Ալ թէ ի՞նչ եմ ուղում, զոռող ու վստահ վրայ բերեց սրաամեծ թոռը հրացանը վզից հանելով, եթէ մեր տան իրաւունքը իմ ծեռն ընկնի, ես այնպէս բան կանեմ, որ պապիս գերեզմանի փոշին տա-

նեն, սրբութեան տեղ չուր անեն, խմեն:

—Այսր ի՞նչ կանես է, հարցրին նորից. կալուածների ու գանձերի կառավարութիւնը այն կողմք մնայ, հէնց միայն այն ասա. — շաղացն աղուն բերողների հետ ի՞նչպէս կրվարուես:

— Իսկի կըթողնեմ աղունատերը շաղացից շունչը վրէն տուն դնալ, բա՛ ամօթ չի՞ իմ տղամարդութեանը. բա՛ այս հրացանը ուսիս զուր եմ ման ածում:

— Հա՞... այդպէս, ես չեի իմանում, հանգիստ կերպարանք առնելով խօսեց հիւանդը: Որդիք, եթէ մտադիր էր այդ հանգի բաներ անել, ես կարող եմ այսօր և եթ հանգիստ մեռնել ու յաւիտեանս օրհնանք ու ողորմի լսել ժողովրդից:

Սաեց ծերունին, յորնած աչքերը փակեց ու քիչ խոխոալով տանջուած շունչը փչեց:

Տան ծառաները, որոնք անկիւններում կուչ եկած լսել էին բոլոր խօսակցութիւնները՝ դոդարով ու լալով շշնչացին՝ «հազար բերան ողորմի հօրը, ոչ ու փուչ լինեն որդիքն ու թոռը»:



Հին ժամանակ մի հաստավիզ գալլ կար, տաւարատերերին դարհաղարն էր բերել, անասուններից

ոչ սաղն էր նրա նանկից պրծնում, ոչ կաղը. ամենի բից բռնում, անկշտում փորն էր՝ ածում, բայց էլի աչքը ծակ, ծակ:

Նրա ահից հանդում ոչխար ու տաւար չեն պահում, ամենն էլ ժողովել էին գհուկների, գոմերի մէջ: Շներն անդամ ահի մէջ էին այդ ետզուգազ, խոշոր գալլից, ի՞նչ թէ խոտանարակները: Տովիւ ու տաւարած սպասում էին, որ բաղցից ստիպուած գուլը մի օր սիրտ անի, շէնամէջ, թաղամէջ մտնի, այն ժամանակ իրանք դիտեն, թէ շների օգնութիւնով նրա կաշին ի՞նչպէս կըհանեն: Բայց գալլը այդքան միամիտաներից չէր, թէպէտ նաև այնքան ուժեղ էր, որ ահագին մողին շալտակն առած փախչում էր, բայց առժամանակ լսւ էր համարում դուրսը սոված օռնալ, վեցստալ, բան թէ թաղամէջ զնալ ու հարիւրաւոր շների ճանկն ընկնել:

Սոված փորով պոչը քաշ էր տալիս գաշտերում հաստավիզ գալլը. յանկարծ հեռուում աչքով ընկան միքանի չորբատանիք: Դրանք ամառուայ աշխատանք քաշած, սալլում, կալում՝ լճան տակ չորացած եղներ էին, որոնք ձեժուած շաններն առել, հեռացել էին շէնամէջից, որ կանաչ խոտերում մի քիչ հանգիստ օր քաշեն: Նրանցից մինը սև էր, մինը կարմիր, միւսը ճերմակ, զլուխները կախ արածում էին: Գալլ այնպէս կարծեց, թէ անպող անասուններ—տւանակներ են. սինդ-սինդ տալով փաղեց, որ շուտ հասնի ու փորը կշացնի: Բայց թուքը սառաւ, երբ մօտենա-

լիս տեսաւ, որ սրապող եղներ են, որոնք մէջք-մէջքի տուած, հրացայտ աչքերով, փշացնելով իրան սպասում են: Գայլն խկոյն վեր ու դիր արաւ, տեսաւ որ ուժի աեղը չէ. «արի խելքի ու կեղծաւորութեան դիմեմ, այս պօղաւորների հախիցը դամ»: ասեց ու ժպիան երեսին նրանց դարձաւ.

— Օրհնեալ հոգիք, ի՞նչ էք ահազին պողերով ինծ սրաւանաք անում, ձեր եղների աշխարհում հիւրին աղբակէս են ընդունում: Նոր չի՞ իմ ծանօթութիւնը, ի՞նչ մեղքի տէր եմ, որ ինծ վրայ խէթ աշքով էք նայում: Ես ի՞նչ եմ, որ յանկարծ ինձանից վախեցաք, միթէ ձեզ պէս չորքուանի չեմ, ձեզ նրան ուսներ, ականչներ ու պոչ չունեմ: Միթէ նմանը նմանին մէկ մնաս կրտանց. իսկի տեսնուած բա՞ն է: Հասակս կովի հորթի չոփ չկայ, ինչո՞ւ էք մաքներովի անցկացնում, որ ինձպէս փոքր ու տկարից ձեզ մի մնաս կրգալ: Ես զարմանում եմ, Սասուած է վկայ, որ զուր տեղը սրտներդ ահ էք զցում: Մի քիչ առաջ սիրուն սրածում էիք. ինչո՞ւ էք ախորժակներդ կոտրում: Ես ընկեր էի փնտուում, էնդուր դէսն եկայ, թէ չէ իմ եղած տեղն աւելի խոտ կար: Երեխ Սաստու կամքն է, որ ձեզ պէս լաւ ըարեկամներ դառայ:

— Քու անունն ի՞նչ է, կարելի է իմանալ, հարցրին եղները:

— Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ, ձեր խոնարհ ծառայ ծաղկակոխ, ասեց գայլն ու զլուխը քաշ անելով ըս-

կսեց եռանդով արածել:

— Ծաղկակոխ, սիրուն անուն է, ասին զմայրուած խելառ եղները ու սրտներից ահը հանելով, առաջուայ պէս միամիտ արածեցին առանց ուշ դարձնելու գայլին, որ խոտ պոկելով ըրդուղը լցնում էր, զգոյշ աննկատ կերպով թափում և քաղցր, անուշ զրոյց անում սև ու կարմիր եղների հետ:

— Բարեկամներ, ափսոս, հազար ափսոս, որ Երկար չէր կարող այս սիրուն խոսերում արածել:

— Ինչի՞ ի՞նչով կարող, զարմանքով հարցրին եղները:

— Ի՞նչ ասեմ, սիրսս ցաւում է ձեր կեանքի ապահովութեան համար, թէ չէ վատաճարդ լինել իսկի չէի ուղիլ:

— Ճշմարտախօսները, ճաղկակոխ ընկեր, աշխարհում միշտ վատաճարդի են հոչակում, այդ փոյթ չէ, վերջում երկնքի վարձքը նրանցն է: Ի՞նչ ունես սրտումդ, համարձակ ասա, տեսնում ենք մեր լարին ես ուղում:

Գայլը ըսշացնելով ձայնը շշնչաց.

— Ես ինչպէս տեսնում եմ, ներմակ եղը ձեզ մեծ փորձանքի մէջ է զցելու:

— Ո՞նց, ի՞նչպէս, ահ ու զողով հարցրին նրան:

— Այս ասեմ ի՞նչպէս. զուր ձեր թուխ ու մոյգ գոյներով ցերեկն էլ չէր երեւում, իսկ ներմակ եղը գիշերն էլ նրազի պէս լոյս կրտայ: Զէք լսել, որ աշխարհում աւանակների ետելից պատող գայլեր կան:

— Լսել ենք, այս՝ կան, լսել ենք, պատասխանեցին եղները:

— Այդ գալլերը լոյս ասած բանը ատելով առում են, շարունակեց իւր խօսքը գալլը: Նրանք ճերմակ եղան վրայ բարկացած կրգան, թէ նրան պատժեն, հայ դուք կընկնէք նրա պատուհասի մէջ: Ես իրեւ սրտացաւ, ուզում եմ ձեր զլիից այդ մեծ փորձանքը հեռացնել, չ.մ իմանում, ի՞նչ կամք կըտաք:

— Վա, վա, ի՞նչ ես ասում, ժաղկակոխ բարեկամ, մի՞թէ մենք մեր զլիի վնասն ենք ուզում: Եթէ այդ պատուհասը կալ, ինչո՞ւ առաջ չառնենք: Կալի ու սալի տանշանքից աղատուել ենք, որ գանք աւանակի թշնամի գալլի ճանին ընկնէնք: Զէ, այդ անողը չենք: Բացի այդ մենք վրէժ ունենք ճերմակ եղան դէմ, մեր տէրը նրան աւելի էր սիրում ու խնամում, իսկ մեզ, երբ քիչ ծովութիւն էինք անում, ժեժում էր ու ճիսլուի տակ չորացնում: Համաձան ենք քու խորհրդին, ժաղկակոխ բարեկամ, զնա, ի՞նչ ուզում ես, արա:

— Շատ բարի, աչքիս վրայ ձեր առաջարկի կատարումք, ասեց գալին ու վաղեց մենակ արածող ճերմակ եղան բկից բունեց: Եղը գալլի աստամերից մղկրտալով բարձրածան բառաչեց ու վղից կախուած գաղանին քաշ տուեց: Միւսները օգնելու տեղ խընդում էին: Գալլը եղան դէս ու դէն որոբելով աւելի խոր հախուեց բկից ու փոեց արօտի վրայ:

Խեղճ անասունը տակից գոռում, բղում էր.

— Օգնեցէք, սալի ու կալի ընկերներ, զուր խարուեցիք Ծաղկակոխ անունով, սա իսկական գալլ է, օգնեցէք, թէ չէ մի օր էլ ձեր բկին կըսոքի:

— Կո՞րիր, անպիտամն, ասում էին ընկերը. ուզում ես՝ գանք քեզ աղատենք, վերջն անշահ գոյնովի մեզ կրակի մէջ զցէս: Զէ, աղդքան էլ միամիտ մի կարծիք. ինչ անում է, քեզ արժանի է, զնա, զլիսներիցս հեռացիք:

Գալլը ոչ մի տեղից երկիւղ չունէր, ասումները աւելի խոր թաղեց անպաշտպան եղան կոկորդի մէջ ու շունչը կարացրեց: Երիւնաշաղախ պինչը խոտերին քսելով վաղեց եղների մօտ.

— Այսուհետեւ ամեն փորձանքից աղատ էք, արածեցէք ինչքան կամենաք:

Եղները խնդալով դէպի ցած խոտաւէտ տեղը գնացին:

— Այս րոպէիս գալիս եմ, ասեց գալլը ու դարձաւ ճերմակ եղան մօտ, ատամներով ձեւեց կաշին, մսով կշտացաւ ու թռչկոտալով գնաց եղների մօտ: Մէկ կարմրի վրով փարուեց, մէկ զնաց սեփ պինչը լիզեց, համբուրեց:

Մաղկակոխն օրը երեք անգամ փախչում էր մսի մօտ, փորը կշտացնաւմ ու գալիս եղների հետ խաղում, նրանց խարելու համար մի երկու խոտ պոկում, զլիսներով, մշշներով մլունդ լինում, ինքը կերածը մարտում, նրանց էլ զուարճացնում:

Եօթն օր այդպէս լիառատ ապրեց, մինչև որ ճերմակ եղան միոր վերջացաւ. ոսկորների վրայ ծրնացած չլերն էլ ուժերորդ օրը կրծելուց ետք, մնաց կանաչ խոռի յուսով: Մի երկու օր համբերեց գայլը, բայց սովածութիւնից փորն ուզում էր իրան ուտի: Հէնց որ կարմիր եղբ մի կողմի վրայ թեքուեց, Ծաղկակոխը պոչը քաշ տաղով սկին մօաեցաւ ու ականչի տակ խօսեց.

—Մի բան եմ ուղում յաջոնել, չեմ զիտում ինչքան սրատով կրլինի: Ալոր չես իմանում թէ սրատցաւ ոքմինի զրութիւնն ինչքան դէշ է լինում, երբ տեսնում է իւր սրտակից բարեկամի զիլին փորձանքը պտտուելիս և բարեկամը տեղեկութիւն չունի:

—Ի՞նչպէս, ի՞նչ փորձանք, սարսափած հարցը եղբ:

—Հապա, աչքի լոյս, ափսոսում, շատ եմ ափսոսում, որ անդութ երկրազործի ծեռին տանջուելուց ետք այնքան միջոց չես դանելու, որ հանդիսացունչ քաշես, կերած խոռը չանովդ գնալ: Սրանից ետք պէտք է չաղանալիր, ցից-ցից ոսկորներդ մսով ժածկիր, յանկարծ անիրաւ փորձանքը եկել է զըլիսպերեւ անկուել:

Այս ասեց ու լուելով զլուիր կախեց: Աւ եղբ կրակը չան տուած հարցը եց.

—Ի՞նչ փորձանք է, որ եկել է զիլսավերեւ անկուել, ծաղկակոխ բարեկամ, շուա ասա, իրնում էմ:

—Ի՞նչ ասեմ, սիրուդ վշաանալու է, զիտեմ որ ընկերիդ աչքի լոյսի պէս ես սիրում:

—Ի՞նչ անենք, որ սիրում եմ, հօ՛ զլուխս նրա համար կորցնելու չեմ: Ի՞նչ բարի ոլտուղը կարմիրն է. սայլում լծած ժամանակի, երբ պնեղս սովոր էր սլրձնում, խնացելու աեղ նա ինձ վրայ էր հարում, ական տակը զցում: Զէ՛, ապահով ասա, ես վշաացողը չեմ, ուղիղ է, ընկերին սիրում եմ, բայց այնքան էլ յիմոր չեմ, որ զլուխս նրա համար զոհեմ: Ամեն բանին չափ կայ:

—Դէ որ այդքան խելքդ պարզ կարում է, ինչո՞ւ չես հասկանում, որ մշտական չի կարելի կարմիր եղան հետ ընկերութիւն անել:

—Ի՞նչպէս, ինչի՞ համար չի կարելի:

—Այնպէս չի կարելի, որ նրա զոյնն անշահ է. վաղ թէ ուշ քեղ փորձանքի կրհանդիպեցնի: Քու բանն ուրիշ է, Աստուած քեղ սիրել է ու շահաւետ գոյնով ստեղծել: Իսկի լսէլ ես զայլերի անունը. նրանց շատ տեսակը կայ, մարդագայլ, շնագայլ, գոմշագայլ, եղնագայլ. քեղ բաւական է, որ վերջինի նանկն ընկնես, իսկոյն կըօքըրի, կուտի: Ես այդ լուզիակեմ. զրա համար քեղ վրայ ափսոս դալիս է: Երկու երեք օր է, ուղում էի քեղ յայտնեմ, որ քուօպտի, սիրու համար անծա ամեն վտանգի ենթարկելու պատրաստ եմ. բայց քաշւում, ամաչում էի: Հիմի էլ եթէ գու չստիպէիր, ասողը չի: Արանից դէնը դուզիակա, ուղում ես ընկերիդ պատճառով զնա յօժա-

բակամ եղնադապլի ճանկն ընկիր, եթէ չէ՝ ինձ իրաւունք տուր, փորձանք բերող ընկերից քեզ ազատեմ, որ բոլորովին ապահով արածես այս արօտներում ու չաղանաս։ Արօտները միայն հօ՛ սրանք չեն. այն կողմը, անտառաբերանում այնպէս խոտեր կան, որ տեսնես, աչքերդ կրգնաց։ Կրտանեմ քեզ, այն արօտները ցոյց կը տամ, մենակ կարածես։ Փառք Աստծու, այնպէս գոյն ունես, որ քիչ է ժնում, ևս էլ չտեսնեմ, ի՞նչ թէ եղնադապլը։

— Շատ բարի ես ասում, ծաղկակոխ ջան, տեսնում եմ, որ իմ օդախն ես ման գալիս, ինչո՞ւ եմ ուրիշի համար կեանքս փորձանքի մէջ զցում։ Համաձան եմ ասածիդ, միամիտ կաց, ես էլ կաշխատեմ մի օր քու լաւութեան տակից դուրս գալ։

Գայլն ոյս որ լսեց, մաքի մէջ ծիծաղելով քոյլերը դէպի կարմիրն ուղղեց, յանկարծ բոնելով վղից կողովեց տակը ու ժանիքները խրեց կոկորդի մէջ։ Խեղճ անասունք տակից բառաչեց։

— Լծան ընկեր, սեռուկ ընկեր, հասիր օգնութեան, ինձ խեղդեց այս անիրաւը. վայ, մէր լսած գայլերիցն է եղել, քանի շունչս վրէս է, հասիր, պողերիդ ծալըրը հանիր, թէ չէ մի օր էլ քու բկից կրբունի։

Սև եղը հեռու կանգնած, խոտի փունջը բերանին ցնձալով ասեց.

— Ցիմար եմ, ի՞նչ է, որ դամ պողերիս ծալըր հանեմ ծաղկակոխին—իմ բարեկամին։ Կորի՛ր զլիսիցս,

հազիւ քեղանից կազատուեմ ու այն ընդարձակ դաշտերում, ուր լաւ խոտ կայ, ևս կրգնամ, մենակ կարածեմ։

— Այ լծան ընկեր, շարունակում էր աղերսել կարմիր եղը վերջին շնչում, թո՛ղ միամտութիւնը ու արի այս կեղծ սրտացաւին սպանիր, որ իմ մահից ետք գունէ աղաս կեանք քաշես, թէ չէ զղալդուշ կրինի։ Ճերմակ ընկերս, որ ասում էր, ևս չէի հաւատում. արի, սպանիր, հէնց սա է եղնադապլը, մեր ցեղի թշնամին։

Սև եղը կարծես ականջները բուրդ գրամ չէր լսում իւր ընկերի աղաչանքին, զլուխը կախած դալար խոտը ազանութիւնով պոկում էր ու կուլ տալիս։

Փայլը կամաց-կամաց եղան շունչը հաւաքեց ու ժանիքները մի անդամ էլ պինդ խրելով կոկորդի մէջ, շնչափողը գուրս նոթուց։ Փափկամսերից կուշա ուտելով վազեց եկաւ սև եղան մօտ, ուրախ աչքերով դէս ու դէն թռչվուսաց։ Եղը քաղցեց, վազեց մսի մօտ, կերաւ, կրկին եկաւ սև եղան պողերի, պոչի, պնչի հետ խաղաց։

Ոյս կեր ու խնդումը շարունակեց մի եօթն օր, մինչեւ որ կարմրի միսն էլ վերջացըրեց։ Մնաց էլի կանաչ խոտի լուսով. երկու օր շարունակ եղան հետ շրջում էր արօտներում ու ամաչում իւր փորացաւը նրան յախնի։ Խոտ պոկելով ու ծածուկ թափելով բերանը լողնել էր.

— Եյս ի՞նչ նամուս է, որ ես բանացնում եմ,

ասեց ինքն իրան գալլը, չաղ ու պարարտ եղը կողքիս զրօնումում է, ևս մասի կառրի համար յոդոյ ու թառանչ եմ քաշում: Աւելի լաւ չի՞ մի հնար մտածեմ, ասեմ՝ փորս ու զլուխս ցաւում է, աեսնեմ ի՞նչ կասի:

Այսպէս վճռելով հեռացաւ, նստեց քիչ հեռու ու թոյլ ոսներով գէպի եզն եկաւ, անխօս անձայն պառկեց խոտի վրայ ու մողնչաց:

— Այդ ի՞նչ է պատահել քեզ, Ծաղկակոխ ընկեր, ինչո՞ւ ես մոնջում:

— Ո՞հ, էլ մի՛ խօսեցնիլ, սաստիկ վաստ եմ, փորս ու զլուխս միասին են ցաւում: Ծնօաներս ըրունուել են. չեմ կարում բերանս բանալ: Երեկի այս արօտներում թունաւոր խոտ կար, որ ինձ վնասեց:

— Բա ի՞նչ է լինելու գրա ճարր, չգիտե՞ս, միամիտ հարցրեց եղր:

— Է՞հ, ի՞նչ պատի լինիլ, հիւանդ կեանքն այն զիսից ասելի է ինձ, եթէ քու հոգար չլինի, եթէ իմանամ, որ կարող ես անձդ գալլերի գէմ պաշտպանել, այսօր և եթ կուգեմ շունչս փչել:

— Վ՞ու, այդ ի՞նչ ես սատում, սրտացաւութիւնով վրայ բերեց սե եղը. առանց քեզ մի ըոպէ կեանք չունենամ: Սասա, ինչ ո՞ր սիրտ ուղում է, գնամ, ճարեմ. աղաջում եմ, քաջ կայ, զրանք հեշտ ցաւեր են, շուտով կանցնեն:

— Է՛, որտեղ շուտով կանցնեն, ինձ սպանում են ու... լոլագին թոնթորաց գալլն ու պինը արօ-

տի մէջ թաղեց, սուտ փշշացրեց: Սև եղը կողքին նստեց, իւր սէրն ու երախտաղիւութիւնը յոյց տալու համար սկսեց լիզ տալ գալլի աչքերը, ականջները, քներակները: Օրը իրիկնագէմ էր ու արեր դուրեկան, խելառ եղը գալլի փորացաւք իւր համար դարդ շինելով նստած որոճաց, որոճաց, մինչև որ բերանը յոգնեց ու քնեց:

Գալլը երբ եղան հանդիսաւու կանոնաւոր փշշացը լսեց, աչքերը բաց պլրզացրեց. սրտի ցնծութիւնից օղիկ-մօղիկ զալով տեղից զգոյշ վեր կացաւ. բոլոր ուժն ու թափը հաւաքած վրայ ընկաւ եղանը, պիկցը պինդ ու ամուր բռնեց, առանց թափէթափ տալու. սուր ժանիքները այնպէս խոր ցցեց, որ եղը հազիւ կարաց աչքերը մի անգամ բաց ու խուփ անել. յուսահատ, ուժգին խոխուց հանելով թոքերից՝ թուլացաւ կարեկից գալլի ճիրանների տակ ու ոտները մեկնեց:



Մի գալլ ուղիղ երեք օր ոչինչ չէր կերել, նիւթը կարած շրջում էր. քաղցից խեղնի փորը եկել մէջքից էր կպել: Պոչը քաշ տալով սար ու ծոր չտփում էր ու թառանչ քաշելով ասում:

— Հախս է այս պատիմը, որ ես կրում եմ,

Աստուած. ինչո՞ւ առատութեան միշոցին քու ողորմութեան արժանիքը չէի իմանում: Առաջ տամն օրուայ բաժինը մի ժամում էի կլանում, այժմ այնպէս նեղ տեղն եմ, որ քարից կակուղ ինչ նանկո ընկնի, կուտեմ ու քեզ փառք կրտամ:

Այսպէս խօսելով գնում էր գալլը զիլսակախ, յանկարծ տեսաւ իւր աղաքին մի շուն: Շուն եմ ասում է՞... չաղութիւնից մէշքի մաղր լիլիում էր: Շան փափուկ կողքերի վրայ գալլի սրտի ջուրը զընաց, Մէկ ուղեց այդ գազալած ժամին վրայ ընկնի, գալլի հանդը քըրը ու կուշտ փորով ուտի, մէկ էլ միտքը փոխեց, մասաձելով վայ թէ ուժը չպատի, այն ժամանակի...

Շունը զուռ արջի չափ բան էր, եթէ ուղենար, գալլին մի բոպէում կրբգէր, կրխեղգէր: Գալլն այդ լաւ էր դիտում, դրա համար էլ պոչը ժամ տալով նրան մօտեցաւ.

—Ա՛խ, դաշտեցի ազգական, այդ դո՞ւ ես, ի՞նչ արմանալի տեսք, սիրուն կերպարանք ես ստացել: Կարծեմ քու պապերը անտառումն ապրելիս իսկի այդպէս չաղ չեն եղած:

—Ա՛ ա, բարով տեսանք քեզ, սարեցի ազգական, սրտով ուղենալի, չէի կարող քեզ պատահել, որ գրոց անելով արիւնակցութեանս կարօտն տոնեմ: Ինչ որ ծմակից հեռացել են պապերս, սարեցի ազգականներիցս ոչ մինչն չեմ տեսել: Հը, ո՞նց ես:

—Ա՛յ, այսպէս եմ, դաշտեցի ազգական, ուրիշ

ո՞նց է լինելու.. չորրորդ օրն է, բերանս նիւթ չեմ դրել: Քեզ վրայ նայելով քէֆս զալիս է. այ, ի՞նչ է նշանակում հանդիսա, ապահով կեանք: Երանի՞ քեղ: — Ինչո՞ւ ես ամս քաշում, սարեցի ազգական, ո՞վ է մեղաւորը, մեր պապերի հետ ծերոնց էլ մարդամէջ հրաւիրեցին, որ հանդիսա իրանց համար կեանք վարեն, ինչո՞ւ զուողութիւն արին, անբնակ սարից, խոր ծմակից զուրս չեկան: Իմ չաղութեան վրայ զուր ես բլանում, նախանձում: Եթէ պապերիդ սխալմունքը խօստովանում ես, աչքիս վրայ ըեղ օդնելը, այսօր և եթ բարեխօս կը լինեմ տիրոչս գրացու մօտ և զու ինձ նման կունենաս խաղաղ, հանգիստ կեանք: Ա՛խ քաշելով զուր է, հէնց հիմի արի գնանք ինձ հետ:

—Ո՞ւր, սիրուն ազգական, հարցըրեց դալլը աղերսող աչքերով:

—Քաղաք, մարդամէջ, սարեցի ազգական, դաշտ աեկերում, գետերի ափերին շարուած են մարդկանց շինութիւնները ու լուսաւոր աշխարհի վայելքն ու երշանկութիւնը: Մի դրացու մօտ եթէ երկու օր ապրես, այնպէս կը չաղանաս ու կրփոխուես, որ բարեկամներդ անդամ չեն կարող ճանաչել: Զարմանում եմ, թէ ի՞նչ մտածեցին քու պապերը, որ բարի մարդկանց խնդիրն ու տուշարկը մերժեցին, իմ պապերից բաժանուելով մնացին ամայի սարերում ու ծորերում: Ի՞նչ օդուտ ստացան այդ անտեղի լամառութիւնից, Զեր քաշած կեանքի մասին լսել եմ, օ

Ի՞նչ պատուհաս բան են ասում. զարմանում եմ, թէ ի՞նչպէս էք հածբերում։ Պատմում են, որ դուք առաւօտից մինչև իրիկու չարչարում էք մի սարից միւս սարը վաղվղելավ, որ ի՞նչ է, փորներդ կշացնէք։ Զեր ճանկած-գտածը մի կաղ նապաստակ է լինում կամ լզար ոչխար. այդ էլ հաղար ան ու դողով էք ուտում, որ ուրիշ գտղան չփայ, ու խլի։ Ինչքան լսել եմ, դուք ծեր կեանքում հանդիստ սրտով մի կտոր բան չէք վացելում. միշտ կուիւ, միշտ անբաւականութիւն։ Եթէ իրաւ արդպէս է, ուրեմն ծեր ապրուսը խկական դժոխք է և ոչ թէ կեանք։

Հենց օրինակ քեզ վրայ բերենք, այդ ի՞նչ ևս դառել. չնայած որ իմ արիւնակիցն ես, բայց այնքան բարակել ես, որ եթէ փշեմ վեր կընկնես։ Օրերով սովոր մնացողն ի հարկէ արդպէս կըլինի։ Քու պապերի մեղքն է, ո՛չինչ չփայ, քաշի. ասած է պապերը շորք կերան, թոռների ատամներն առան. հենց այս առակի ծեր գլխին է կտորը ուում։

Դէ մի բոսէ քեզ թո՛գ. ինձ մաիկ, տե՛ս ի՞նչ զուարթ ու բաղդաւոր եմ։ Այս բոլորը իմ պապերի շնորքն է, որ վաղօրօք խելքի եկան, անտառի ծառերը թողին, բանական մարդկանց հետ գործ բռնեցին։ Կեանք որ ասել են, ծերն է։ Հերիք է, որ ծրաքովս մի համով կերակուր անցկենայ ու սիրտս ուղի, խոյն պատրաստ է։ Ճաշուայ ուտելիքս մի տեսակ չիմանաս. լակելուն չոկ է, կրծելուն չոկ, ուտելուն չոկ։ Միս, ոսկոր, կերակրաշուր այնքան են թափում

աղաքս, որ աչքերս շաղւում են. չեմ զիտում, որն ուտեմ, որը թողնեմ։ Առւա հօ չի ասած՝ ապրել կայ երկաթ է, ապրել կայ արծաթ է։ Իմ ապրելը որաեղ, քոնը որաեղ. տանից գուրս եկողը ինձ է փաղաքշում, մինը ծեռն է զլիխս քսում, միւսը մէշքըս է շոյում, երրորդը պոչս թափահարում, չորրորդը վրէս ժապտում ու թուշը պնչիս կացնում... Այսպէս բաներ դու սարում, ծմակում ումնից կրտեսնես։

Բնակութիւնից հեռու մեծայած գայլը շան ճարասար լեզուի վրայ խելքահան եղած թուքը կուլ տալով լսում էր. Կենում էր, կենում, սիրաը վեր խըմելով շանը երանի տալիս, իսկ իւր պապերին նզովում, որ բարի մարդկանց առաջարկը մերժելով մնացել են խաւար ծմակի մէջ ու իրան զրկել լուսաւոր աշխարհի աննման վայելչութիւններից։ Շատ ախ ու վիշ անելուց եար մինչև անդամ լաց եղաւ ու վերը հանգարառուելով շանն ասեց.

— Դաշտեցի ազգական շատ շնորհակալ եմ քու զրուցից. նոր եմ իմանում թէ ի՞նչ փառքերից եմ զրկուուծ եղել մինչև հիմի։ Խոտակեր անսառնն անդամ կրհասկանայ, որ մարդկանց մէշ ապրելը հարիւր անդամ ծեռնտու և շահաւէտ է, քան ծմակի մամուստ ծառերի տակ թքեւ գալը։ Խոր զնան իմ պապերը, որ ինձ անբաղդացը են։ Քու կենցաղն ապրուստը իմանալուց եար զլուսս քարո՞վն եմ տուել, որ մէկել սարն ու ծմակը միտ բերեմ։ Որ մէռ-

նեմ, չեմ գնալ: Միայն դու, սիրելի ազգական, ինձ այս
բռնը լու հասկացրու.—մարդիկ որ այդքան լաւու-
թիւն են անում ձեզ, կուշտ ուտացնում, խմացնում
են, նրա փոխարէն ի՞նչ են պահանջում ձեզանից: Աշ-
խարհս մի բանով անիծուած է, որ ոքմինի ծրի ո-
չինչ չեն տալիս. այնքան ճաշ ու փայփալանքներ, որ
ստանում ես տիրոշիցդ, փոխարէնն ի՞նչ ծառայու-
թիւն ես կասարում. իսկի ձեր մէջ պայման բան
չկա՞յ:

—Ի՞նչ պայման, սարեցի ազգական:

—Պայման էլի, չես հասկանո՞ւմ:

—Հասկանում եմ, բայց ուղիղն ասած, պայմա-
նի անունը որ լսում եմ, ծիծաղս գալիս է:

—Ինչո՞ւ, դաշտեցի ազգական, չլինի հարցս ի-
մար բան է թւում: Է՞հ, ի՞նչ արած, պէտք է իմ
պակաս խօսածը բաշխես, ծմակներում եմ ապրել, իմ
կոպիտ խելքն էլ այդքանն է կարում:

—Զէ, ո՞վ է ասում, քու հարցը լիմար հարց
չէ, բայց իմ ափրոշ հետ ունեցած պայմանն այնքան
թեթև բան է, որ պարտականութիւն անուանելի
չարժիք: Որ լաւ նայենք, կրտեսնենք, որ իմ արածը
զուարճութիւն է, քան թէ ծառայութիւն: Օրինակ՝
կանգնած եմ, օտար մարդ տեսնելիս, ունքերս կի-
տում եմ ու մոռում: Եթէ ոքմին վրէս խէթ նա-
յում է, դէմք հաչում եմ. իսկ եթէ ուզում է ներս
մտնի, արգելում եմ: Բայց բնակիներին երբեմնապէս
զուարճացնելու համար երգում եմ հաչելով կամ ոռ-

նալով: Եթէ բաղաձայն ես, անհոգ կաց, քեզ չեն
թողիլ այդ նեղութիւնը քաշես: Տէրս ու տիրուհիս
երբ բակն էն մանում, մութ լինի թէ լոյս՝ ծիկնոյն
է, պառկած տեղից վեր եծ կենում. պոչս բուլղի-
բուլղի անելով գնում, ոտներով փաթաթւում: Ու-
րիշ ո՞չինչ... Սրանից էլ հեշտ բա՞ն:

Գայլն այս բացատրութիւնը լսելով զնծաց սըր-
տում ու բացականչեց.

—Այսպէս հեշտահողի ապրուստ է եղել աշ-
խարհում՝ ես անտեղեակ. ցԷ՛լը զլիկու, միամիտ
արարած:

Հրապուրուած սրտով դարձաւ, շանն ասեց.

—Քու ապրուստի մի կտորն ունենալու համար
քաղաք չէ որ մինչև աշխարհի վերջը կրգամ, դաշ-
տեցի ազգական: Բրիշակ լինեն ու անտէր մնան սարն
էլ, ծմակն էլ, որ ինձ անօթի հակելով մաղ շինեցին:
Զրկանքներն ու ծում պահելը սրանից շատ չէր լինիլ,
քու ասած պայմանով յօժար եմ մարդամիջում ապ-
րել՝ քաղաք լինի թէ զիւղ, զնանք: Վաղ ուշ իմ
ցեղակիցներն էլ խելքի կրգան, ծմակից կրփախչեն.
օրինակը թող ինձանով սկսուի, շնորհակալ եմ քեղ-
նից, որ պատճառ եղար լուսաւոր աշխարհ մտնե-
լուս: Յիմար կրինեմ, եթէ զէպը ձեռից թողեմ,
զնանք:

Խօսքն աւարտեց դայլը և շան հետ պադուելով
ճամբայ ընկաւ զէպի քաղաք:

Գնում էին: Ճանճ քշելու թէ ինչ բանի համար

շունք պղուխը կռացրեց. յանկարծ մի բան ընկաւ գայլի աչքով ու նրան սոսկումի մէջ զցեց. շան վզի բուրքը երկու մատնաչափ լայնութեամբ բուրդն այնպէս պղուած էր, որ տակի կաշին պղուած պարզ երեւում էր: Կասկածի եկաւ ու հետաքրքրութիւնից ստիպուած հարցրեց.

—Ես ի՞նչ բան է, դաշտեցի աղղական, ի՞նչո՞ւ է վզիդ բուրդը պղուած, ի՞նչ է եղել:

Շունն առանձին ուշադրութեան արժան չհամարելով նրա հարցը, զղուխն էլ չբարձրացրեց, այլ ֆամբէն շարունակելով խօսեց.

—Ոչի՞նչ, ուշ մի դարձնիլ, դարդակ բան է, գնա՞նք:

Գայլը կանգնեց ու կասկածանքով շան վրայ նայեց.

—Ո՞նց թէ ոչինչ, դաշտեցի աղղական. վզիդ վրայ երեսող շերտը թէ ցեղական նշան է, ևս էլ պտեմ ունենալ իբրև քու արիւնակից. բա՛ ի՞նչո՞ւ իմ վզին պղուած տեղ չկաց: Եթէ մօրուց է քեզ վրայ, ի՞նչո՞ւ խիստ քերթուած է: Զէ, աչքի լցո, երեւում է մի բան կայ. և դու ինձտնից ծածկում ես: Սիրտս կասկած է ընկել, արի մի խօսքով փարատիր, յետոյ մտնենք քաղաքը:

—Ի՞նչ ունիմ ծածկելու, սարեցի աղղական. ումնից եմ վախենում: Բայց մէջ տեղը մի առանձին ասելու էլ բան չկայ. չեծ զիտում ի՞նչ հանգի սիրտ է քու սիրտը, որ դարդակ բանից կասկած է ընկ-

նում: Դու հարցնում ես թէ ի՞նչո՞ւ է վզիս մազը բերուել. երեմնապէս վիզս թոկ է զցած լինում, այդ նրանից է:

—Ի՞նչ թոկ, վախեցած հարցրեց զայլր:

—Ի՞նչ ես սարսափում դարդակ խօսքից, համարութիւնից:

—Ո՞վ է զցում վիզդ, սարսափահար ետ կենաւով հարցրեց զայլր:

—Իմ տէրը, ի՞նչ կայ որ... հանդարտ սպատասխանեց շունքը:

—Զէ որ քու տէրը քեզ սիրում, փայփայում է, ի՞նչո՞ւ է վիզդ թոկ զցում:

—Իմ օգտի համար է անում, որ ուրիշ տեղ թրեւ չգամ, բակում նստեմ: Կապուած ժամանակ թոկը քսուել է վզիս ու բուրդը պղուել, զրանից ի՞նչ վնաս:

—Ուրեմն բակի մէջն էլ կապուած ես լինում թոկով այ թէ ի՞նչ նոր բան խմացայ: Մի՞թէ, հապա ի՞նչ նշանակութիւն ունեն այն առատ նաշն ու փայփայանքը, որ զերու պէս ամեն օր կապուած ես, ի՞նքնական չես:

—Ինքնական, ի՞նչ ես ասում, սարեցի աղղական, քաղաքը հօ ծմակ չէ, որ ամեն ժամանակ ապատ, ի՞նքնական շրջեմ, ով կրթողնի:

Գայլը զղուխը կախ, կծկուած մտածում էր: Շունք շարունակեց.

—Ի՞նչ հարկաւոր է, որ միշտ պարապ-սարսապ

իմ կամքի լինեմ: Եթէ օրուայ մի մասը կապուած շղթայի երկարութիւնով բակում վաղվեմ, ի՞նչ պահասութիւն է, թող վզիս բուրդը մի քիչ էլ պոկուած լինի. Ի՞նչ վնաս, նրանից հօ մահ չի առաջանում: Քու վիզը որ բրդոտ է, ինչով ես ինձանից առել, ում աչքերն են սովից կուլ գնացել: Թէթև բաների վրայ ուշ մի դարձնիլ սարեցի աղքական, կերակուր ու հանգիստ կեանք ուղիր, թէ չէ սեպհական կամքս որն է, աղասութիւնս ո՞րը:

Գայլը լսած խօսքերից յուղուած էր՝ առաւել ևս լղար էր երեսում, դարձաւ շանք պատասխանեց.

— Զէ, դաշտեցի աղքական, ինչպէս ուղում ես համողիր, քու այդ վերջի խրամը զլուխս չի մտնում: Դու հաւատացնում էիր առաջ, թէ տիրոջդ հետ ծանր պայման չունես այն ինչ դու յոժարութիւն ես տուել, որ վիզդ թոկ զցեն: Դրանից էլ ծանք պայման: Հիմի երեսում է, թէ ի՞նչ գնով ես ձեռ բերել քու սիրուն ապրուսար: Պատրաստ կերակուրի ու հանգստութեան հետ փոխել ես աղասութիւնդ, սեպհական կամքդ: Քու պապերդ այդպէս սարուկ չին լինի, չին թողնի վզները թոկ զցուի:

Շունը լրւու էր. զլուխը ցից արած սպասում էր թէ վերջն ի՞նչ է լինելու:

Գայլը հալարտ դիրք բոնելով առաջ տարաւ խօսքը.

— Դաշտեցի աղքական, իմ պապերին ես չեմ տեսել, բայց հօրիցս լսել եմ, որ նրանք ինձ պէս գժուարութիւնով են կերակուր նարելիս եղել. նրանց վիզը

միշտ հաստ է եղել, որովհետեւ ծմակում ոչ ոքի զլուխ չեն թեքել: Սիրել են աղատ թրե գալը սարերում, ծորերում ու մեղ էլ աւանդ, սովորութիւն թողել: Երբ դու վիզդ թոկի սովորցրել ես, էլ ես քու աղքականը չեմ, գնա՞ քու սիրած քաղաքն ու հանդարտ արտով վայելիր նաշն ու փայփայանքը, որ վասակել ես աղատութեան գնովի Քաղաքի, դաշտ տեղերի պայմանը կարելի է այդպէս է, դէմը ոչինչ չունեմ, բայց մեր ծմակներում, սարերի զլուխն աղատութիւնն այդպէս էժան չի: Գնա, էլ ես քեզ հետ եկող չեմ, թէպէտ սովածութիւնից շրջելու ոյժ չունեմ, բայց աւելի լաւ կրհամարեմ անօթի մնալով պապական սովորութիւնս պահպանել ու ծմակում սովածահ լինել, քան թէ քեզ պէս գերի գառնալով վիզս թոկ գցել ու առատ կերակուրներով լիանալ:

Այս ասեց աղնուարիւն Ծաղկակոխը ու պոչը քաշ տալով սոված փորով գէպի ծմակը գնաց:

Ասածս հին ժամանակի բան է:

Մեծ շփոթ ու իրարանցում էր աշխարհի մէջ չորքոտանի կառավարիների ձեռից:

Առիւծ արքան լուր էր առել այդ մասին. բարկութիւնից մոնչում էր ու մռութը կախած ման ու ման անում: Վերջը բաշը թողմուելով կանչեց բարեպաշտ արջին ու ասեց:

—Զորքոտանիներից որին քաջ տեսնելով հաւատ ընծայեցի ու կառավարիչ նշանակելով վառքար աշխարհը ուղարկեցի, ամենն էլ ամօթով թողին ինձտ կոպտութիւնով աշխարհ կառավարել չի լինիլ, ոնց որ նրանք են անում. հարկաւոր է վոքր էլ ստորադրեալների կամքով գնալ: Քանի անդամ եմ ասել բորբնուն, գալին, որ հպատակներիս հետ մեզմ վարուեն, ասած զիմներում չի մտնում. լսածիս եթէ հոււտամ, առաջին վատ օրինակը նրանք են տալիս:

—Շատ ուղիղ ես հրամակում, արքան, քաղցր վարմունքը մեծ նշանակութիւն ունի. կառավարիչն ինքը բանիմաց, խոնարհ ոքմին պիտի լինիլ: Գալին ու բորբնուն մեր անտառի ծառերն նանաչում են, թէ ինչ պառուղներ են:

—Ճշմարիտ ես ասում, բարեպաշտ արջ, բաց ի՞նչ անեմ, որտեղից քու ասածի նման կըթուած, խելօք ոքմին ճարեմ: Արի դու զնա նրանց տեղ կառավարիչ, լոյս ունեմ, որ ինձ պարզերես կանես. արջերդ տոհմով ծանրաբարոյ, բարեպաշտ կեանքի տէր էք, այդպէս էլ լինելու է կառավարիչը, շատ կարելի է քու խօսքին հաւատ ընծայեն հպատակներիս ու պատուէրներդ սիրով լսեն, լիսկատար իրաւունք կրտամ, որ ամեն տեսակ դաս տեսնես ու վճռես, միայն թէ կարենաս կարդ ու խաղաղութիւն հաստատել իմ այդ հեռու ժողովրդի մէջ:

—Հզօրափայլ արքայիդ հրամանից դուրս դալ անկարող եմ, մըթմըթաց արջը ու խոնարհ ծառակի:

պէս զլուխ տուեց, ինչքան էլ պաշտօնս ձանր լինի, պատրաստ եմ կատարել, միայն թէ ախրութեան այդ ամպերը քու երեսից փարատեմ:

—Գովելի է բարեպաշտ եռանդրդ, շնորհակալ եմ, որ առաջարկս ընդունում ես: Այժմ խօսեմ կարեւոր հանդամանքների մասին: Առանց խորհրդակցի կարող ես յոդնել մխալուել: Քեզ խորհրդատուներ են հարկաւոր, ուղում ես այնտեղի հպատակներիցդ ընարել թէ նորերին հետդ տանել:

—Իմ կարծիքով լաւ է նորերին և անծնուերներին, որոնց ես ինքս նանաչում եմ ու հաւատում. թէ չէ ինչպէս կարելի է խորհրդի կանչել նախկին կառավարիչներից՝ օրինակ բորբնուն, գալին, աղուէսին, չաղալին, որոնցից բոլոր արարածները զգուելով զգուած են, նրանք միայն իրանց բաւականութեան ու զուարճութեան մասին են մտածել և իրանց ինսամքին յանձնուած հպատակների պաշտպանութեան ու բարօրութեան մասին մոռացել են հակել:

—Ապրես, նոր կառավարիչ, այժմուանից գուշակում եմ, հեռու հպատակներս քեզ սիրելու են քու բարի իրատների համոր և պատկառելու քու շուաքից ու անունից: Իսկ դա մեծ նշանակութիւն ունի: Այժմ ասա, ում պտես խորհրդական, օդնական ընտրել:

—Ես ունեմ հաւատարիմ աղգականներ, տէր արքան, որոնք զովուած են մաքրասիրութեան մէջ ու շատ սակաւապէտ են:

—Մաքրասիրութիւնն ու սակաւապետութիւնը նշանաւոր յատկութիւններ են. հաւանում եմ քու ընտրութեանը: Վերցրու ազգականներիդ ու գնա, Աստուած քեզ հետ, կառավարիր արդարութիւնով իմ հաղատակներին ու տարին մի անդամ, քառասունքի գլխին հաշիւ ուղարկիր ինձ:

—Նատ բարի, տէր արքայ, շատ բարի, ամեն մի պատուէրդ ճշարէն կրկասարուի, ասեց արջն ու մաքրասէր ազգականներին առած ճամբազ բնկաւ գէպի աղմբկուած աշխարհը:

Դեռ նա ժմակից չէր դուրս եկել, արդէն սարերում, ծորերում լսել էին նրա նշանակուելու մասին ու սրտատրով սպասում էին: Թիկնապահներից մէկն ուղարկեց յայտարարելու, որ ոչ ոք իւր տեղից չշարժուի. ամեն կողմ կառավարիչը պտի շրջիլ ու խիստ քննութիւն կատարիլ:

Հալածանք ու զրկանք կրածները ազատ շունչ քաշեցին.—վերջապէս Ասառուած մեզ համար էլ արև ուղարկեց, խօսեցին պնդաւորներն ու անպաշտպան շրնչաւորներն, կազատուենք հարստահարիչների ծեռից:

Կառավարիչն ամեն կողմ ազգականների միջոցով լսելի արեց հետեւեալը.

—Քաջափայլ արքայի հրամանով գալիս եմ ծեղ կառավարիչ, նրա պատուէրները գործադրելու: Աշխարհում աիրող անկարգութիւնների ծայնը հասել է նրա ականջը ու շատ վրդովեցրել. արքան խոռվա-

յարների անունները ցուցակով տուել է ինձ, որ մէկ մէկ պատժեմ: Սրանով յալտնում եմ, որ ամեն մի զրկեալ կարող է գալ ինձ մօտ իւր ցաւը յայտնելու, իմ օրով պտի ամեն տեղ արդարութիւն տիրիլ:

իւր խնամքին յանձնուած աշխարհի սահմանին որ մօտեցաւ, առաջին անդամ բորենուն տեսաւ: Վրէն թթուելով փնթվնթաց.

—Ի՞նչ պարզերեսն ես, որ աչքիս էլ երկում ես: Չես ամաչում քու գարշելի վարմունքից: Յափշտակութեանդ ծայնը աշխարհի ծայրն է հասել: Բաւական չեն կենդանիները, անմեղ մանուկներին էլ օրորոցներից հանում ես լափում: Ա՛խ, գաղան, քեզ այնպէս պտեմ խրատիլ, որ էլ չհամարծակուես քո գարշելի սովորութիւնով մանուկներին քաշել:

—Քեզ արքայութիւն, բարի կառավարիչ, ամին երեխատէր կնանիք, հոգիդ միմիթարուի, որ քաւթարքուսու ծեռից մեզ թափում ես:

Կառավարիչը առաջ գնալով պատահեց դալին՝ վիզը նկած, աքին վէր թողած:

—Գոռո՞զ արքած, խոր զլուխ ես տալիս, որ յանցանքներդ ներեմ: Խսկի էլ չէ: Էլ արարած չկայ, որ քեզանից գանդասաւոր չլինի. ամօթ չէ, ինչո՞ւ հանգստութիւն չես տալիս հովուին, նախրասպանին, խողարածին, խաշնարածին. միթէ նրանք քեզ մի գէթ են արել: Աստուած ստեղծել է զիշերը ցերեկուայ հոգսերից հանգստանալու. համար, զու գդութեան միշոց ես շինել, այս ի՞նչ անհնաղանդութիւն

է Արարչի գէմ: Ամենից շատ քեզ վրայ է բարկացած արքան. Եթէ ուրիշ անդամ լսել եօ, որ դու իրիկնաժամից եար օթևանիցդ դուրս ես եկել էլ իմ ձեռից չես պրմնիլ լեզուդ ծոճրակովդ կրհանեմ:

—Հոգով զարդարուես, իմաստուն կառավարիչ, ասին միաբերան հօտն ու հօրան, նախիրն ու անդեան. Աստուած քու սիրար միսիթարի: Գայլերի ճանկերից մեղ ազատելու համար շներն էլ էին յոդնել, այնքան հաչել ու վազվել էին: Մեր հովիւներն ու նախապանները հօ անքնութիւնից կիսամեռ էին դարձել:

—Իմ կառավարչութեան օրով ամենքը երջանիկ են ապրելու, իշխանաբար յայտնեց արջը ու միշտ օրհնելու են առիւծ արքայի արեւը, որ իմ միշոցով հալածուածներին կեսնք շնորհեց:

Այս ասեց ու զնաց առաջ: Պուպուլը մառի տակին մի աղուէս.

—Ա՛յ դու խորամանկ, իմացել ես որ հոգեհանդ գալիս է, ինչպէս անմեղ գառն ես գառել: Սպասիր, քեզ ցոյց կրտամ, քու արարքները ժողովրդի բերանում առակ են դառել, հասակովդ վայլից փոքր ես, յանդուդն գործերովդ նրանից վասթար. դուր չի ժողովուրդը քու մասին տառւմ թէ դայլի անունն է կոտրած, աղուէսն աշխարհ քանդեց: Քեզ ո՞վ իշրաւունք տուեց, որ սուս ու փուս հաւանոյը մրտնես և վառիկները թառից վիրացնես: Հարս ու սկեսուր քեզ համար են թուխս դնում և լիսպոր նու-

տերը գժուարութիւնով մեծացնում: Օրէս ետք քու ոսպ հաւաբուն չմտնի, թէ չէ այնպէս թաթաղոշ կը հասցնեմ, որ աչքերդ պէտին-պէտին կանեն: Էլ եղի ուշնակ, կաթան պուլիկ չես թողել անարատ, ամեն աեղ պինչդ կոխել ես, ա'նպիտան:

Երբ արջի կարդաղրութիւնը լսեցին կնանիքը՝ ասին.

—Քու եկած ճամբէն օրհնուի, հաղիւ աղատ կինենք հոտած աղուէսի ձեռքից:

Արջն իւր թիկնապահի հետ նոր էր հեռացել աղուէսի մօտից, պատահեց չաղալին.

—Ա՛յ փունք կենդանի, անունդ լսել էի. Երեսդ չէի տեսել, ինչ գէշն ես եղել: Դու ես հա՞, որ այդիներում ու պարակներում տանձ, խնծոր չես թողնում: Նլորը, մամուխը փորրդ են հարե՞լ, որ ս անձին ես վազ տալիս. չես իմանո՞ւմ որ նա իմ ցեղապէտն է:

Մեղքերդ չվերջացան. լսել եմ որ խնամութիւն էլ ես անում գալիս հետ, երբ նա ուղտի կամ աւանակի փափուկ միսն է պոկում, դու անդգամի պէս թափանն ես աշխատում պատռել: Էլ չես մտածում, անիրաւ գաղան, թէ Արարիչը մի փոքր պղոճ սաեղձելիս ո՞րքան զիսացաւանք է քաշում: Արքի պէս ընկնում ես էշի ու ուղտի պէս աշխարհաշէն կենդանիների ետնից ու նրանց վիրաւորում: Ես նախին կառավարիչը չեմ, որ այդպէս բաները սիրեմ ու ձեղ պաշտպանեմ, ինձ հոգեսէր ու բարեւպաշտ կասեն,

իմ օրով այդ տեսակ անիրաւութիւնների անունը չպէտք է լսուի: Արքան այն մտքով է ուղարկել ինձ այստեղ, որ գրփողները, փորապաշտները իմ կենցաղավարութիւնը տեսնեն, ինձանից խրատ առնեն: Հասկացողի համար կեանքի նպատակը իրար սիրելու մէջն է. բայց ով գաղան է ու անկիրթ՝ կարծում է թէ ինչ որ կայ մարմին բաւականութեան համար է: Ել չի ասում. որ հոգի ել կայ մարմինց բարձր ունա է, որ ցոյց է տալիս թէ զրփելը, լլանելը գէշ բաներ են, իսկ արդարութիւնը, ընկերութիւնը պատուական. պտեն այդ տեսակ առաքինութիւնները սիրիլ ու պաշտիլ, ինչպէս իմ ողործածիկ ապուպապերն են արել: Լսեցի՞ր խրատ, չաղալ, ականջումդ պահիր, թէ չէ այնպէս տուր կրտամ, որ ուրբաթ ուրբաթ կրտժուես:

Հեռուից էշը որ լսեց այս կարգադրութիւնը խնդրուց ակտնչները խլրշացրեց ու դռւաց.

— Փառաւորուես դու, սրտացաւ կառավարիչ, հաղիւ սիրոս հանգստացաւ, զիշեր ցերել քուռակս անիրաւ գայլերի ու չաղախների անից անդադար քնդուստում էր. ես հօ՛ ամեն մի խոտ պոկելիս հինգ անդամ խլրշկոտում էի: Աստուած երկար կեանք տայքեղ, մեր զիսից ոչ պակսես, ցեղով ու զարմով քուօրհնեալ շուարում ապրենք:

Արշը զնաց դէպի անտառը. մէկ ել տեսաւ թաւապոչ սիւռոր ծառից ծառ է թռչկոտում.

— Է՛, պլրղիկ մոկոռշ, ինչո՞ւ հանդիս չես տա-

լիս ծառերին. ճողոպրին, կաղնին և տկողնին շարունակ դանգատում են, որ դու նրանց պտուղները աշնքադէմին կրում ես փեշակների մէջ ու ձմեռը նատած հետները խաղալով ծակոտում: Անտառում ուրիշ պտուղներ չկա՞ն, որ գրանց եախիցն ես կրպել: Ա՛յ քեղ շլոր, այ քեղ զկեռ, կեր ինչքան ուղում ես:

— Քու եկած ճամբէն խնկահոտ դառնալ, ասին կաղնին ու ընկերները, կաղատուենք մոկոշի ձեռից, մի զլուս կրծկրծելով մեղ համբերութիւնից հանել էր: Կառավարիչը նոր էր հասել անտառի մէջ մի արևակոխ տեղ, տեսաւ սրապինչ մրջմակերին.

— Է՛ անհոռնի կենդանի, ինչ ես մարմինդ ծրղնոտով մածկել և սուր պնչովդ գետինը քչփորելով ման գալիս: Ել քար չի մնացել, որ շուռ չտաս ու տակից մրջիւններ հաւաքես: Ինչո՞ւ ես նրանց աղատութիւնը խլրում, թող իրանց կամբին մնան էլի՛: Ի՞նչ անենք որ փոքր են ու անդօր. միթէ Աստծու սոեղծած չեն. միթէ Արարչի օրհնեալ ձեռը նրանց չի դիպել: Եթէ յիմար չլինես, կիմանաս որ Աստծու ամենասիրելի գաւակները նրանք են, աշխարհիս իմաստութիւնը նրանց է տուել, որ իրանցից մարմնով մեծերին դաս տան, սովորյնեն: Դու փոխանակ նրանց խժուելու, լաւ կանկեր սովորէիր, թէ ո՞նց են նրանք բնակարան շինում, իրանց փոքրերին կրթում, ուրիշ միջատների դէմ պատերազմում: Ես ինքս մինչև անդամ կարիք ունեմ նրանցից շնորհք սովորելու.

զու ի՞նչ ես, ո՞ղորմելի, որ նրանց հետ ոտ ես մեկնում: Նրանք չանավորութիւնով պաշար են հաւաքում իրանց բները, որ ձմեռն ուրիշի դուռը մուրալու չդնան, դու գնում ես բները զյաներին քանդում, իրանց քսպլում, ուստում: Այսպէս լրբութիւն կարելի է:

—Անհատնում լինեն քու օրերը, արդարածիտ կառավարիչ, ասեց մրջիւների զյանաւորը, կաղատուենք այս հարստահարիչի ծեռից, որ մեղ տկար ու լրիկ տեսներով, ուղում էր բնաշխնչ անել:

Արջն աչք ամեց դէս ու դէն ու քանդուած շնորի մօտ ժվծվան մկանը տեսաւ.

—Էյ պրակերես ու կրծան կենդանի, ինքդ չկաս մատ ու կէս, արարմունքդ է գաղ ու կէս, քու պատճառած վնասները ոչ տուտ ունեն, ոչ ծայր. կապոցների ու մնդուկների մէջ էլ խաս կտորներ ու հարկաւոր թղթեր չես թողում, լիմարի պէս կըրծկրծում ես, կարտում: Էլ զինու կարաս, մերոցքի պղինձ չես թողում, ազահի պէս ընկնում ես մէջը պղծում: Բաւական չէ տան մէջ քու արած անկարգութիւնները, վաղում ես փեթակնոցն էլ զմընդորում: Թու ո՞վ, փեթակն ո՞վ. մի աղի ունես, կարում չես կարգին ման ամել, ո՞նց պաեսքաղաքի պէս զարգարուն փեթակի ներսը ժաժ ու ճաժ ամիլ, որ նրա խաղաղ բնակիչներին սրտապատառ չանես: Յետոյ բնչքան աւերում ես առաջացնելու քու կոպիտ ոտներովդ: Մեղուների քնքուշ ու լուրջ աշխատան

քից ի՞նչ կը հասկանաս, որ փեթակն ես մտնում. քոնն այն է, չոր հացի կտորը կրծես ու բնումդ շընթռես: Մէկ մտածիր, աես մէ՛ծ կենդանիներից ո՞վ կարայ նրանց գործը կատարել, ծաղիկներից մեղը ու մոմ շինել. զրա համար մեծ խելք է հարկաւոր, մե՛ծ: Կըր ոքմինի համար էլ պարզ է, որ Աստուած նըրանց սիրում է և ամեն շնորհք առաւտօրէն բաշխել է: Նրանց բնիծներին, մեղրահայցերին նայողը ուղում է խելքը թացնի. Էլ չէմ լիշում, թէ նրանք բնչպէս հնազանդում են իրանց մեծաւորին, ընկերութիւնով բան են շինում. իրար համար անձ են զոհում: Սրանից եար, գո՛ղ մուկ, քու հոար չինի փեթակում, թէ չէ կատուներին կասեմ, մկան ցեղի հողին կըհանեն:

Մուկը վախից ծակը մտաւ:

Արջը երբ փեթակնոցի մօտով անցնում էր, մեղու թագուհին ասեց.

—Ողջ լինի բարեհոգի կառավարիչը. սրանից եար իմ խոնարհ հապատակների աշխատանքն անարտա ու անվնաս կըմնայ. Աստուած օրհնի քե՛զ տկարների պաշտպան:

Արջն իւր շրջադայութիւնը բաւական համարեւ լով վերշին միամտական պատուերն ուղարկեց բոլոր հպատակներին.

—Այսուհետեւ ամենդ ձեր գործին ու աշխատանքին կացէք, կարեոր կարգադրութիւնները կը յախանեմ աղգականներիս միջոցով: Նրանցով էլ գուք կարող էք ձեր կարիքներն ինձ իմաց անել: Բողոքի

ու գանդատի առիթ կինի թէ չէ, անհնազանդներն անխօս կրքշուեն Արշածորը, նրանց գնալը կրինի, գալը չի լինիլ: Անիրաւութեան ու յափշտակութեան անունը, կարծ ասեմ, լսուելու չի այս սիրուն աշխարհում:

—Ողջ մնայ բարի կառավարչի զլուխը, ասին անասունները և ուրախ գնացին իրանց արօտին:

—Փուշգառնայ արշի եկած ճամբէն, մոմուցին դազանները և դիսակախ քաշուեցին իրանց բները:

Ասուն արարածները—աղամարդիք այս բարերարութիւնը տեսնելով արշի կողմից, պատգամաւոր ուղարկեցին իրանց շնորհակալութիւնը յայտնելու: Մաքրասէրն էր դուանը.

—Բարի թիկնապահ, ասեց պատգամաւորը, եկել եմ յախնելու, որ մէնք մեր նոր կառավարչից մինչեւ երկինք շնորհակալ ենք. աշխարհս խաղաղուելով աչքներս լոյս է եկել. էլ յափշտակիններ չկան, ամեն կողմ արդարութիւն է. գառն ու դայլը իր՝ հետ սիրով արածում են: Այս լաւութիւնը տեսնելուց ետք՝ մենք էլ մեր պարտքն ենք ուղում կատարել: Հնուց մեր սովորութիւնն է, որ աշխարհիս կառավարչի ուտելիքը հոգանք-տասանորդ տալով, մսեղէնից մսեղէն, բուսեղէնից բուսեղէն: Այժմ ուղում ենք իմանալ, մեր բարի կառավարիչը ո՞ր տեսակից կը հրամայի, որ ամեն մի օր պատրաստ բերենք:

Թիկնապահը զարմացական դիրք բռնելով պատասխանեց:

—Քու ասածները լսու հասկացայ, այնպէս էլ կը յախոնեմ, բայց վերջին առաջարկի վրայ, դիտեմ, բարի կառավարիչը կը վշտանայ:

—Ինչո՞ւ, քաջ թիկնապահ:

—Նրա համար, որ նա չի սիրում ոքմինի նեղութիւն տալ: Նրա ապրուստն այնքան պարզ է, որ ոչ եփել է ուղում, ոչ խորովել:

—Բա ինչո՞վ է կերակրում մեր նոր կառավարիչը, դոնէ ուտելիքի անունն իմանանք:

—Շատ հասարակ բաներով, օրինակ անսառի տանձով, կաղինով:

—Այդ իհարկէ, միայն չորեքշաբթի և ուրբաթ օրերին գործ կամի, այնպէս չէ:

—Ոչ, միշտ և համապաղ, շաբթով, տարով այդ ուտելիքներն է գործ ածում:

—Ի՞նչպէս, զարմացաւ պատգամաւորը, մեր կառավարիչը ամբողջ տարին պաս է պահո՞ւմ:

—Ի՞նչ կայ զարմանալու, միթէ չես իմանում, որ վաղ ժամանակ կառավարչի պապերը մամուակեր նզնաւորներ են եղել ու միշտ ծնի վրայ ծնկաչոք ազօթել: Ինչո՞ւ նրանց թոռը պաս չի պահիլ:

—Աստուած հաստատ պահի այդպէս կառավարչին, ասեց պատգամաւորը. Եթէ այդպէս է, սրա օրով բացի հարստանալը, շէնանալը, մենք շնորհք ու քաղաքավարութիւն էլ կըսովորենք:

—Հէնց սրա մտադրութիւնն էլ այն է, որ շընչաւորների մէջ մարդապարի վակումունք, մանաւանդ

հոգեսիրութիւն մայցնի: Սրանից եար անհոգ կացէք,
յափշտակողների քարը ծովն ընկաւ, գնացէք դուք
ձեր տաւարով, ստացուածքով երջանիկ ապրեցէք:

Իրաւ որ այդ ժամանակ ամենքը տառն թէ
անստուն անհոգ ու քնաթաթախ ապրում էին, մի-
անգամայն դո՞ւ իրանց նոր վիճակից:

—Երջանկութիւն տասմագ սա է որ կայ, տառում
էր զոմիար շունը պարկած տեղից, ում հետ որ
բրդիզզի պաէի ասլ, մեր նոր կառավարչի տհից
դուռի են տուել, կորել. սար ու ձոր չափչրիում եմ,
ոչ դալ կայ, ոչ ուրիշ գաղան. պարապութիւնից
քունս տանում է: Ի՞նչ անեմ որ չպարկեմ. քարի,
փայտի վրայ հօ չ' մ հաչելու: Միշտ տեսնում եմ մեր
կառավարչի թիկնապահներին, որոնք ամեն կողմ շուռ
են գալիս, հակում: Հօսի ու նախրի կշտին էլ մնալու-
բան չունեմ, տիրոջս տանը ամեն բան պատրաստ է,
թէ փափուկ անկողին, թէ անուշ ուտելիք: Սրեի
հետ զարթնում եմ, արեի հետ քնում, աչքերս բաց
եմ անում, աեսնում եմ լաին ու լավիր աղաքիս զրած:
Բաղգաւոր կեանքն ինչքան սիրուն բան է: Երբեմն
ալարս զալիս է թէ կողքիս վրայ շուռ դամ, նախա-
նաշեմ, ի՞նչ թէ հաչեմ: Ախր հաչելու էլ հարկաւո-
րութիւն պափ լինիլ, թէ չէ զուր աեղը բերանիս ին-
չու նեղութիւն տամ:

Հովիւն ու նախրապահնը պարապութիւնից ալս-
պէս էին խօսում.

—Աստուած կեանք տալ մեր կառավարչին,

հաղիւ հանգիստ ու կուշտ քնում ենք: Նախրի ու
հօալի առաջը ետ տալուց հոգիներս բերաննիս էր եկել:
Հիմի կովերն ու ոչխարները գնում են իրանք արա-
ծում, իրանք գալիս բերատեղը. մեր բանը մնացել է
կթելն ու աղ տալլ. գնուի ու զոմի գոներն էլ
փակելու կարիք չկայ, անքան ապահովութիւն է. լուն
այն է, կոմբաչը զլխատակներիս դնենք ու քնենք:
Ալդպէս էլ անում էին:

Աշխարհի այս լուռ ու խաղաղ ժամանակ արջ
կառավարիչը ժողովի կանչելով իւր արթուն ազդա-
կաններին ասեց:

—Իմ սիրելի թիկնապահներ, յայտնում եմ խո-
րին շնորհակարութիւնս ձեզ, որ այսքան ժամանակ
արիութիւնով հսկեցիք և իմաստութիւնով կատարեցիք
ձեր պաշտօնը: Բաց արդեօք ժամանակ չիմ, որ պաս-
ներս բանանք. չ' որ տանձ ու կաղին ուտելով լոգ-
նեցինք:

Կարն լուռթիւն տիրեց. մեծ մաքրասէրը տեղից
վեր կացաւ, խօսեց.

—Ես էլ կարծում եմ, ժամանակ է. իմ բաժնի
հովիւները շնթռում են ու մեծալմակ ոչխարները
նոխազների լուսով թողնում: Նրանք էլ քիչ միջոց
արթուն մրկելում են ու ուներով գետինը դոփելով
նստում քնում: Կարելի է ուտիսն սկսել, լնդերքնիս
միրգ ուտելուց կոշտացան:

—Ո՞չ, իմ բաժնում գեռ վաղ է, ասեց միջնակ

մաքրասէրը խողարածները թէպէտ մրափում են ու խոզերից տախերը, մերունները, էլի կարելի է ասել, հանգիստ են, բայց բրուտակներն ու վարագները միշտ պլրպլրում են փարախի մէջ:

— Դրանք էլ կրսովորեն, կրնտելամնան շուտքնելուն, միամիտ կաց, հանգստացրեց կառավարիչը: Դու ի՞նչ կասես, փոքր մաքրասէր:

— Իմ բաժնում էլ գրեթէ հանդսութիւն է ակրում. ուղարական, ծիասկան, նախրասպան ամենքը խորմիում են իրիկունից մինչև լոյսը: Եթէ ոտներից բռնես գետը զցես, չեն իմանալ, ինչպէս և նրանց պահապան շների մեծ մասը: Բայց մի քանիսը կան, նրանց աչքին իսկի բռն չէ մօտ գալիս. պինչնելը ցից արած դէս ու դէն հաջում են:

— Վախ մի՛ ունենալ, ասեց կառավարիչը, թէպէտ շան ցեղը գովակսն է հաւատարմութիւնով, բայց նրանց մէջն էլ պակաս չեն լիմարները, որ կոնծկոնծարով վայրահաչ ու լուսնահաչ են տալիս: Ահ չկայ այլպէտներից, միամիտ կաց:

— Եթէ այդպէս է, ուրեմն կարելի է սկսել աւտ մաքրասէրի բաժնից, ասին ժողովականները:

— Եթէ որոշում էք, ինչո՞ւ չէ, վրայ բերեց մեծ մաքրասէրը. բայց ողորմած կառավարիչ, ուղում եմ վաղօրօք լայտնել քեզ մի բան և իմ պարարից դուքս դալ: Խւրաքանչիւր հօտի մէջ լինում են մի կամ երկու հաստ աւանակ, որոնք հովուի պաշտրն ու երերը մշտական մէջքներին ման են ածում: Դրանք

ինձ տեսնելիս, զիշեր լինի թէ ցերեկ էլ չեն կարում խնդումները զսպել, իրանց երախտադիտառթիւնը ցըց տալու համար միշտ զուարթածան ողջունում են:

— Դրանք շատ եռանդուս ու միւնոյն ժամանակ խոնարհ արարածներ են. ճանաչում եմ, անհոգ կաց, ասեց կառավարիչը. զիշերները քեզ հետ շրջելու կրգամ ու նրանց ականչից բռնտծ մի կողմ քաշելով կրհասկացնեմ, որ չի կարելի զիշերուայ հանգստեան ժամերին բարձր ծայն հանել և միւս բնակիչների խաղաղ քունը խանգարել:

Կառավարիչը քիչ լրեց և ժողովականներին ակնապիշ նայելուց ետք թաթը բարձրացնելով շարունակեց:

— Լսեցէք վերջին պատուերա: Դիտեմ որ դուք անասելի քաշ ու կարուկ էք, բայց իմացէք, որ այսուհետեւ ինչ անէք, չանէք, պտէք զդոյշ լինի: Խելօք բան բռնեցէք, չինի թէ անզդոյշ վարմունքով կասկածի տեղիք տաք, ծեր վարկը կոտրէք: Բազմութեան առաջ՝ ասուն լինեն թէ անասուն, միշտ կարգապահ ու օրինապահ եղէք. մինչև անգամ ծեր ընկերներին թեթև յանդիմանութիւն արէք: Բայց երբ օրինեալ մութը վրայ հասած կրլինի ու դուք ծեր աչքադրած որսի հետ մենակ կրլինէք, զրոյց անելով քաշեցէք նրան խոր ու փոս տեղերը և ծեր հաշիւը տեսնելով պասներդ բացէք: Գալլի ու բորենու պէս կարճամիտ չէք լինելու, որ նշանները թափթը-

փառ թողնէք, միսն ուտելուց եար ոսկորներն իսկոյն
հողի, խաշամի տակ թաղեցէք: Դրա համար փառք
Ասածու, ձեզ բարի պէս թաթէք է առել: — Դէհ, լսե-
ցիք պատուէրներս, զնացէք, իմ խոհեմ աղբականներ+
գիւ հորթէրին ու խրտան երինչներին ևս կը խրտ-
աւմ, նրանք ինձ շատ են դուր գաղիս. ուրախասիրս
տաճակները արքային մեծ զուարճութիւն կրպատ-
ճառեն, կարելի է մէկ մէկ նրան ընծայ ուղարկել: Մնացած
անտառներին խրատեն ու իրանց պարտ-
ք հասկացնելը ձեր սիրելութեանն եմ թողնում: —
Բայց սպասեցէք, դեռ մի՞ք զնալ. լսում եմ որ մե-
զունեղը, մրշխւնները որտեղ նստում են, միշտ այն
են ասում, թէ իրանց փոքր աեղով մեժամարմին
կառավարչից խելօք են, իմաստուն են: Գուցէ կան մեր
աշխարհում այնպէս միսմիտներ, որ այս տեսակ լու-
րերին կրնաւասան ու առաջուայ պէս չեն պատուիլ
ինձ: Այդ յանդուդն միշտաներին հարկաւոր է սաս-
աել, որ ձայները կարեն: Մեծ սխալ զործեցիւ-
որ նոր եկած ժամանակս նրանց հրապարակով զո-
վեցի: Զէ, ստորապեալների աքում հեղինակութիւնս
բարձր պահելու համար անպատճառ ստանելու եմ
այդ շնորհալի ու միենոյն ժամանակ ըմբռստ պղոճ-
ներին, մինչև անդամ պատժելու, բար ու բանդ ա-
նելու նրանց բունն ու փեթակը, եթէ յանդգնեն հա-
կառակուել կամ բղազ պատուէրներիս զէմ:

Վերջին անգամ, երբ Ապրէս պապին ծառի
շուաքում թիւնկ տուած տեսայ ու խնդրեցի, որ ինձ մի
բան պատմի, ալեղարդ ծերունին ծխամորչը բերանից
հանելով այսպէս խօսեց.

«Հայլ-հայլ»-ս զնացէլ, «վայ-վայ»-ս է մնացէլ.
չեմ զիտում, ի՞նչ պատմեմ, որ սրոտիդ լինի: Լու-
սահոգի հօրիցս մի բան եմ լսել, արի, ականչ զիր,
ասեմ: Տարս ասում էր. «Թիւղ տեղը Քանազ անու-
նով մարդի օշաղ կար, շատ հին ժամանակից մնացած.
հիւրասիրութիւնը կարծես ազդ տանից լինէր ծագած,
թուը թէ խաչապաշտ՝ ամենն էլ նրա գոանն էին
վէր գալիս ու կշանալուց, հանդստանաւուց ես իւ-
րանց նամրէն շարունակում: Բայց ինչ կանես, որ
վերը ապերախտ հիւրէրն ու անցորդները կործանե-
ցին Քանազին. նրա տանն ու գոանը բարիք ըլ թո-
ղին. ուղելով-կորզելով յափշտակեցին ծածուկ թէ աշ-
կարս: Տան աչքի ընկնող մարդիկ, մի մասը ընդհա-
կարս: Տան աչքի ընկնող մարդիկ, մի մա-
րութների միշոցին մերծիման վիրաւորուելով, մի մա-
սը վշար ու դարդի տակ ընկնելով մեռան ու տնուա-
նի օշափոր թողին որր:

Գիւղերում հին սովորութիւն է, ոլխաւորը կորց-
նող օշաղին ծեռ են մեկնում հարեւանները: Քանա-
զի որբեցին ամենից շուտ սրտացաւ լոյս ընկան
Ահոնք (գիւղի մի շեն օշալս) ու բաղմաթիւ աղչիկ
ու տղակ իրանց թեկ տակն առան: Որքի օրը ամեն

տեղ սև է, թէկուզ հայրն ու պապերը երկնքից աստղեր վէր բերած լինեն, երբ որբայան, ուրիշի լուսն ընկան, իմացիր թէ նրանց բարը ծովն ընկաւ։ Դառնալու են սարուկ, խնամակալի հրամանով պէտք է նստեն, վեր կենան։

Ահոնք ուղիղ է, սկզբում շատ մարդավարի էին վարւում, բայց տարին չբոլորած երկացրին իրանց ազահութիւնը. սկսան խլել կալուածները, հարստահարել որբերին, անխնապ ծեծելով բանացնել, իրանց օջաղի ծանրութիւնը բաշել տալ։ Քանաղի զարմերը անազատ կեանք չէին վարած. հինգ, տաս համբերելով երբ շատ նեղն ընկան, խորհուրդ արին յախնել Ահոնց մեծին, որ բռնութեան համբերելու ցանկութիւն չունեն. թող իրաւունք տայ գնան իրանց ու գլխու ապրեն։ Ահոնց մեծը յանդիմանեց։

—Ուրիշ որբերի օրը ձերից վասթար է։ Խելքներդ չի հասնում, որ ցանկանում էք ինքնազդուխ ապրել. եթէ ձեռս զիմներիցդ հեռացնեմ, զալի բերան կընկնէք։ Միթէ շնորհակալ չէք, որ վարձքի համար, խղճիս գոհութիւն պատճառելու համար ձեզ պաշտպանում էմ։ Շատ էք անզօր, սպասեցէք ուժի գաք, էլի գնացէք ձեր հօր ծուխը ծխեցէք։ Միթէ ամօթ է, որ այժմ ձեզ ետնից Ահոնց ժառաներ են կանչում. ում տանն էլ իմնէք, ձեզ ծառայեցնելու են, բաս հօ աղայութիւն չեն տալ։

Քանաղի որբերը մի կերպ ապրուստ ճարելով լրում էին, իսկ Ահոնք նրանց բերրի հողերի եկամու-

տով ու ծրի ծառայութիւնով փառաւոր ապրում էին իրանց համար։ Այս բանը Ուլթանանց (ուրիշ մեծ օջաղ) նախանձը շարժեց ու վառեց. իբրև հարեւան՝ կարեկից լոյս ընկան որբերին ու արտունչ լայտնեցին.

—Սրանք գիւղի որբերն են, մենակ ձերը չեն. վարձքի ու հոգու համար խնամելը թէ սովորութիւն է, մեր կուռք ձերից կարճ չի, մենք էլ կարող ենք։ Քանաղը մեռնելիս իւր կալուածները ձեզ ժառանգութիւն չի թողել, որ լվաքը ու նրա որբերին զրբնէք, զրկէք. այժմ էլ մեզ յանձնեցէք նրա որբերի հոգաստարութիւնը։

Ահոնք համի էին ընկել, որսը յօժարակամ ի՞նչ կըթողէին. որքան շնորհք ունէին, որբերին զուրդութեցին ու փեշներից ամուր բանեցին։ Ուլթանանք էլ թուքը ետ լիզող պտուղներ չէին. աչքներն արիւն կոխած, կոխւ ու արիւնհեղութիւն սարքեցին, ուժի միջոցով որբերի կէսն էլ խեցին, հողերի մի մասն էլ։ Քանաղի տունն ու որբերը երկու բաժին եղաւ։

—Վայ մեզ, ախրագին ասեց որբերից մինը, բաժանուելը խորթանալու սկիզբն է, այլևս մի օջաղի շուրջ հաւաքուելու չենք։

—Մի յուսահատիլ, պատասխանեց որբերի երկօր, բաժանուելը կարող է և շահաւետ լինի։ Բան է, եթէ Ահոնք իրանց ձեռի տակ գտնուող որբերին հողից հող կորցնեն, Ուլթանանց տանն ապրողները կրմնան։

Բայց ցաւն այն էր, որ Ուլթանանք էլ աղան-

ծուած հովանաւոր դուքս եղան, ձեռ ընկած որբերին անխնայ գրփեցին ու զլուխն արևը չարդելով բանացրին իրքեւ հոտաղ, իրքեւ մղգուր, իրքեւ կալուսոր։ Մաճկալ շինելը ինչ մեծ իրաւունք է, մաճկալ լինելու իրաւունք էլ չունէին որբերը այնքան ցաւ ու կրակ էին բարձել լիներին, էլ ոչ ժամ զնալու միջոց ունէին, ոչ իրանց օչաղում սիրած երգն ու գործն ասելու։ Իշխ ձշակ էին կատարեալ. ոչ կարդ կար Ուլթանանց տանը, ոչ օրէնք, ամեն միփանքու նրանց հրամայող էր։ Երկու օչաղում ևս որբերի դրութիւնն անառնելի էր. ամեն մի պատահողի գանգատելով իրանց ցաւին ճար էին խնդրում։ Ահոնց ու Ուլթանանց ահից ոչ մի գիւղացի յուսալի բան չէր ասում որբերին, միակ յուսաւեղը իրանց երէցն էր, որի առաջ արտասուելով թախանձում էին.

— Մի հնար ասա փրկութեան, այս անօրէն օչաղներից ուր փախչենք, որ ազատուենք. այսքան անիրաւութիւն չի լինի, որ տանում էնք։

Երէցը մորմոքուելով պատասխանում էր.

— Նատին համբերելուց ետ քչին էլ համբերենք. ստեղծող Աստուածը չի կորցնիլ, մի դուռը բաց կանի։ Ասում էր՝ որ փախչենք։ Մեր պապական տունն ու տեղը թողած ուր փախչենք։ Հէնց մեր խնամակաների ուղելիքն այն է, որ մենք չըլինենք, մեր շնորհերն արձակ համարձակ աիրանան։ Էլի լու և սպասենք մեր սեպհական խրճիթներում։ Փայ թէ անհամբեր գտնուելով աւելի փոշմանենք։

Որբերն երէցի խորդողին լսելով արտասուքները կուլ էին տալիս և օրերը ախուռը անցկացնում։ Այդ գիւղի վերի կռանք մի տուն կար, ձաղարանց օչաղ էին ասում. նոր էր հիմք զրուել, շատ շուտ փարթամացել զրա նման երկու երեք շէն տուն գիւղի մէջ կամ լինէր կամ չէ։ Մեծի անունը Ավէք էր ու Քանազի որբերի վիճակին լաւ տեղեալ, բայց զլուկը խառնուած տնական գործերով ուշ չէր դարձնում թաղական բաներին։ Երբ հոգսերից թեթևացաւ, բարեպաշտ մեծատան պէս ականչը որբերի ցաւին դարձրեց։

— Գնա, ասեց իւր աւագ սպասաւորին, Քանազի որբերի երէցին յախանիք, որ ևս պատրաստ եմ օղնել, եթէ որբերը ցանկանան ձեռիս տակ մտնել։ Թէպէտ մենք նոր օչաղ ենք, բայց Ահոնց ու Ուլթանանց պէս հին աները իմ ձեռիս չուր ածող կը սազան։ Ո՞րտեղ իմ կառավարչութիւնը, ո՞րտեղ նըրանցը։ Որբերին խղճալը, հովանաւորելն ինձ համար նոր բան չի։ Երէցը գիտէ, որ Պողոսց որբերը վագուց ձեռիս տակ են, որ հարեւանը կարող է նրանց հացին կամ հողին դիպչի։ Ինչ որ Ահոնք ու Ուլթանանք բերում են Քանտղի որբերի զլուխը, ոչ անհաւաստ թուրքը կանի, ոչ անօրէն պարսիկը։ Մարդու ձեռի, որ ուժ լինի, հօ Աստուածն ու քանալու չէ. միթէ մահից չէն փախենում։ Աշխարհ է, չէ որ մի օր էլ մեր որդիքը որբերի շարհ կընկնեն։ Հոգեսէր հարեւանը նա է, որ խեղներին թեի տակն առ-

նելով խնամի, հարեւանի օշաղը հանգչելուց աղասի: Մեծ վարձքը դրա մէջն է և ոչ թէ անզօր տեսնելով ճնշել, շունչները սպառել, որ կայուածներն անտէր մնան: Դա ի՞նչ մարդկութեան նշան է՝ միայն անկուշտ գալերը այդպէս բան կանեն: Նատ ցաւում եմ Քանազի որբերի վիճակի վրայ:

Աղեքի սպասաւորը որբերի երէցին ացելեց մատուռի կշտին ու զբուշութիւնով հաղորդեց նրան տիրոջ ասածները: Երէցն այդ սպազրանքը լսելուց ետ հառաջեց.

— Ահոնք ու Ուլթանանք լաւ գիտեն, որ պաշտպան չունենք, դրա համար մեզ շանքթից չուր են տալիս, տանչում: Նրանց մօտ մենք էլ մարդահաշիւ չենք, սողունից, անսառնից ստոր են դասում: Ասած է խաչին տէրը զօրաւոր կանի: Վաստ տեղ ենք մթնացրել, ի՞նչ առած: Քու տէրը խաչապաշտ մարդ է, շատերի է ծեռ մեխել, հաստատ գիտեմ, որ մենք Քանազի որբերս նրա ծեռի տակ բաղտաւոր կրլինենք: Բայց արգեօք որդին էլ նրա սիրար կունենանց, որ մեզ խնամի, ազգ ու տակով չկորցնի: Վայ թէ բարեպաշտ մարդու որդին այնպէս օր լուսացնի մեր զիսին, որ այս օրուայ խնամականերին երանի տանք: Ասածս սրախիդ չդիպէի: Ահոնք ու Ուլթանանք իրանց թեփ տակ բաշելիս խոսաւմներ շատ էին անում, բայց դրկանքից աւել բան չրականք: Աչքներս վախեցած է, էլ երդումի չենք հաւատում:

— Ի՞նչ ես տառմ, երէց, վշտացած խօսեց սպա-

սաւորը, իմ տէր Աղեքը որ խարերայ լինէր, նրա օջաղն այնքան շուտ առաջ չէր գնալ: Մեր օնորքի տակ դրկողութեան, զրփողութեան հոտը չըկայ, ինչ թէ անունը: Ահոնք և Ուլթանանք, եթէ խոստովանք կրպահես, այնքան կեղտուտ ծեռ ունեն, որ նրանց խմորի խաչն անգամ զողունի է: Սքանչելագործը զլխիս խոռով կենալ, թէ սուտ լինեմ ասում: Փեթակի մէջ բրէտներ տեսել ես, որ անգործ նստած ժրաշան մեղուների վաստակը վայելում են, ուղիղ այդպիսի բրէտներ են Ահոնք ու Ուլթանանք: մեծ ու փոքր մի մի դաշոն կախած՝ դէս դէն չափչփում են, ովք է տեսել նրանց մէկի հակատը քրտնած: Որբերն են նրանց տեղ բանում:

— Ասածներդ ամենն էլ ճշմարիտ են, պատասխանեց երէցը, վաղուց էր հարկաւոր վեշներս թափ տալ անագործն խնամակալուների մօտից, բայց ի՞նչ տրուծ, մէշք չունէինք: Այժմ երբ քու տէրը ծեռ է մեխնում, Աստուած նրա մէկը հազար անի: Ցիշում եմ, տէրդ մի սիրուն տատ ունէր. նա շատ ուղեց մեղ օգնել ու մէր օշաղը ոտի կանգնացնել, չեղաւ. մեր քամբաղդութիւնից յանկարծ բարի պառաւը վախնանուեց ու մէր զործը մնաց թերի:

— Ողորմի քու հօրը, վրայ բերեց սպասաւորը, իմ տէր Աղեքն էլ իւր տատի մտաղբութիւնն է ուղում զլուս բերել ու հոգու վարձք անելով ողորմատեղ թողնել: Եթէ իմանաս, ի՞նչպէս է մղկրառմ, երբ լսում է ծեռ քաշած նեղութիւնների պատմու-

թիւնները։ Զարմացած կրկնում է։ «ալսպէս համբերատար աղամամրդիք չեմ տեսել»։ Ահոնց ու Ռւթանանց բռնութեան տակ քար լինէր, կրփշրուէր։ Երկաթ լինէր, կրհալուէր, բայց Քանաղի զարմերը լուսու մունչ համբերում են»։

Ինչ որ Երէցն Ալէքի սպասաւորից լսեց, եկաւ միառմի որբերին ասեց ու յօրփորեց, որ պատրաստուեն ձաղարանց մեծի թեկի տակ մտնել։ Որբերից մի համարծակը մատ բարձրացնելով խօսեց։

—Երէց եղբայր, դու ասում ես, մեր այժմեան հովանաւորները բրէտներին մտն մեր վաստակով ապրում են, գրա համար հարկաւոր է թողել նրանց։ Շատ բարի։ Եթէ ասե՞ւ դնացէք չուրը թափուեցէք, կլսենք, բայց վա՞յ թէ անծրեից պրճնենք, կարկաի տակ ընկնենք։

—Ի՞նչ ես ուղում ասել զրանով։

—Այն որ գովական Ալէքի տանից կարող է մի արշ լոյս ընկնել ու մեղքը զլիխին տուած, վեթակն էլ ճանճերի հետ ոտնատակ տալ։ Ձաղարանց ոչ մի տղէն արջից պակաս ուժով չի։ Այն ժամանակ ի՞նչ ճար անենք։ Քեզ եմ հարցնում, Երէց եղբայր, լուր ո՞րն է, մեր փեթակը բրէտի ու թէկուղ մկների ճանկերում թողնենք, թէ աչքներս փակած զնանք զօրեղ արշի թաճթլիկի տակ մտնենք։

—Հաղիւ մի լոյս է բացւում մեր խառար վեսնքի համար, զու գրա դէմ չարն ես խօսո՞ւմ, թթուելով լանդիմանեցին նրան երկու երեք որբ, եթէ վնաս բան լինի, Երէց եղբայրը կառաջարկի։

—Այ սիրելի, խօսեց Երէցը, իմ ուղելիքն այն է, որ բրէտին էլ կտոր չըտանք մեր վաստակից, զումկան ու արշի անունն ես տալիս։ Ալէքը Երեսի մաղը սիստակացրել է բարեպաշտութեան մէջ, սրանից եար հաւասարո՞ւ է, որ անօրէն դառնայ ու թուրքի աղօթարանում ծունը դնի։ Իմ կարծիքով որբան շուտ յօժարուենք նրա ձեռի տակ մտնել, այնքան լաւ է։

—Շատ արդար է ասում Երէցը, խօսեցին այս ու այն կողմից որբերը, յօժարուենք ու ձաղարանց օչաղին միանանք։

—Միանալը միանանք, բայց ի՞նչ պայմաններով, հարցը մի կակածու որբ։ Երէց եղբայր, դու տեղեակ Էս թէ Պոլունց որբերին ոնց սաստած է պահում Ալէքը։ աւանողները պատմում են թէ խիկի չի թողում պապական բաները միա բերեն։ ասում է ևս եմ ձեր նախնին ու ձեր հայրը, ձեր խօսքի ու գովասանքի նիւթը ես պէտք լինեմ, որ ձեզ պաշտպանում եմ և ոչ թէ նա, որ ձեր ծնուելու պատճառ է եղել։ Պոլունք շնորհակալ չեն Ալէքի օչաղից, բայց աշկարայ չեն անում իրանց գժգոհութիւնը, որովհեաւ հարեանութիւնը լրաւս է։ Ուշընց որբերը մարդահաշւում չեն։ նրանք ոչ միայն անաէր են եղել սկզբից, այլ և անխելք։ Ձաղարանց ասել են, մեզ տէրութիւն արէք, հայափորի ծառայենք ձեր գուանը, սովից չմեռնենք, ինչ լինում ենք, լինենք։

—Չէ խօսեց Երէցը, մենք միայն փորի համար չենք ապրում։ Ալէքի օչաղին որ միանանք, իհարկէ

նրա կարիքին պէտք է հասնենք, սայլը շուռ գալիս ական թոփից կախ լինենք, բայց էլի մնանք Քանազի որդիք, միշտ մեր թաղի ժամը գնանք, մեզ մկրտող տէրտէրից հաղորդուենք, ի՞նչ արած որ ծերունի է: Վերի թաղի ժամը շատ էլ սիրուն է, մեզ ի՞նչ: Գլխաւորը մեր աղօթքն է, որ մեր հօրից ու մօրից լսել ենք, կրտքենք, կասենք ու ամեն մինս կրգնանք մեր բանին:

Այս պայմանները Երէցը յայտնեց սւագ սպասուորին. սա էլ ասեց.

— Դուք այնպէս պատիւներ էք ստանալու տիրոջից, որ ինքներդ զարմանաք, թէ ի՞նչ փառքի մէջ բնկաք: Ես կրգնամ այս րոպէիս տիրոչս մօտ. կանչել է, ով գիտէ ծեր մասին է:

Սւագ սպասաւորը մտնելով Ալէրի սենեալը, ասեց.

— Տէր, ուրախ լուր եմ բերել. Քանազի որբերը յօժարւում են ու ինչ որ պայմանների վրայ կանդ են առնում: Յոյս ունեմ, որ սկզբից նրանց շնորհը չես խնայիլ, առատօրէն կրտաս: Զպէտք է մոռանալ, որ Ահոնք, Ուլթանանք գէշբերան, գաղան մարդիք են. Եթէ լսեն որ որբերն իրանք են ուղում մեզ մօտ գտլ, կատաղութիւնից ամենին սրի բերան կրտան ու կը հաւատացնեն թէ թշնամի մարդիկ են արել: Որբերի ապահովութեան մասին հարկաւոր է հոգալ:

— Թէպէտ Ահոնք ու Ուլթանանք քաղցրութիւնով թողնողը չեն Քանազի պատուական կալուածներն ու աշխատասէր որբերը, բայց անհոգ կաց ու

գնա Երէցին հասկացրու, որ որբերին այնքան ժամանակ լուռ պահի, մինչև ես խնամակալներին՝ այսինքն Ահոնց ու Ուլթանանց առաջարկ անեմ. Եթէ համով կրտան որբերին, լաւ, եթէ չէ Քանազի կալուածները ուժով կրխւենք: Երէցի միշոցով որ բերեն, յայտնի՛ր, որ ով տունս գայ, աչքի լուսի պէս կրպահպանեմ, իրանց շնորքների համեմատ ծառայութիւն կրտամ. ինձ համար խորթ ու փորթ չըկաց. ամենն էլ հարացատ են, երբ օջաղիս անդամներն են: Ոչ ոքի ծեղի կարօտ չեմ, փառք Աստմու, տունս բարիքով լիքն է: Տեղը որ լնինի, թող որբերին ասեն թէ, ծաղկարանց Ալէրին ենք յանձնել մեր ունակոխ եղած իրաւունքների պաշտպանութիւնը:

Երէցն այս ապսպրանքը սպասաւորի բերանից լուելով աւեց.

— Միամիտ կացէք, որբերը ոչ թէ լոկ խօսքով կընդիմանան զրկող խնամակալներին, այլ հարուածին հարուածով կրպատասխանեն, որ մաս ունենան փրկութեան գործի մէջ, ոչ մի զոհաբերութիւնից ետ չեն կանգնիլ և կրթողնեն, որ տէրդ ապագայում նրանց արածը խղճմտանքով գնահատի:

Դրանից եան էր, որ Ալէրը մարդ ուղարկեց Ահոնց ու Ուլթանանց տները ապսպրելովի „հանգուցեալ Քանազի ստացուածքը, շարժական թէ անշարժ կալուած: ինձ յանձնեցէք. թէ վարձքի բան է, ես էլ եմ ուղում վարձք անել զիւղի որբերին:

Բայց խնամակալները չըյօժարեցին: Ալէրը ծա-

ՃՌՆԿ պատուէր տուեց, որ զիշեր ժամանակ Քանաղի կալրւածների շուրջը կտրեն։ Ահոնք ու Ուլթանանք այս տեսնելով իրար զիխով անցան ու վռնդեցին Ճաղարանց։

—Ձեղ խնդրող չըկաց, որ սրտացաւ դուրս դաք, կորէր ձեր տեղը։ Որբերը ձեր յուսով չեն, նրանք խնամակալներ ունեն։

Այս խօսքերը վառեց չարքաշ որբերի գաղուած սրտերը, համբերութիւնից դուրս դաղով Ճաղարանց տեղ պատասխանեցին։

—Խնամակալի անունով մինչեւ օրս մեր հարստահարիչներն էք եղել, ձեր ձեռին ողջ չենք, մենք մեռած ենք։

—Ի՞նչպէս, կատաղած դուեցին Ահոնք, ուրեմն սրանք ձեր խօսքովն են եկել մեր դուռը, այդ լրբութիւնը էժան չի նստիլ ձեղ, ասին ու զիժ կովի պէս վրայ վաղեցին։

—Դուք ապերախտ օձեր, բղաւեցին Ուլթանանք, մեր երախտիքը այդպէս շուտ մոռացմաք. ձեղ այս բոպէխս կտոր կտոր կանենք։

Ատամները կրնաելով յարձակուեցին որբերի վերաբ։ Որբերն առաջ պաշտպանողական դիրք բռնեցին. տեսան որ հակառակ կողմք անհամեմատ ուժեղ է, ապաստանեցին իրանց տներում, խոտի տակ, մինչեւ որ Ճաղարանց աղէքը հասան, մշշ խառնուեցին։ Կուր երկու կողմից բորբոքուեց։ Մէջտեղը որբերն ու նրանց ստացուածքն էին ոտի հարուածների տակ նիսլուում։

Ահոնց ձեռից ճաղարանք էին յարձակուում, խլում. Ճաղարանց ձեռից Ուլթանանք Արիւն էր, որ հոսելով ներկում էր որբերի երեսն ու շորերը. անմնաս ոչ կուռ մնաց, ոչ կողք։ Ճաղար Աղէքի հիացումն եկել էր Քանաղի զարմերի քաջասրտութիւնից. մի ծայնի կանչում էին. «Ճահն աչքներիս տակն է, կամ ստենք մեռնիլ կամ բոնաւոր խնամակալների ձեռից ազատուիլ»։ Եւ շարունակուեց կատաղի կոիւը մինչեւ Ահոնք և Ուլթանանք թուլացան. միւս հարևանները լոկ հանդիսական էին, մասնակցելուց զդուշանում էին, որ աւելի վատ բան չդուրս դակ։ Բոնաւոր խնամակալները տեսնելով իրանց անզօրութիւնը Ճաղարանց դէմ, ձեռներից ակամայ թողին որբերի և հողերի մի մասն ու ասին.

—Ճաղար Աղէք, թէ հոգու վարձք ես ուզում, աղքան որբերն էլ բաւական են. եթէ շնորք ունես, ցոյց տուր։

—Ձէ, ինչու, ինչու, դժգոհաց որբերի երէցը, հերիք էր որբան երկու դռան բաժանուած ապրեցինք, սրանից ետք միասնեղ ապրենք, միատեղ։

Բայց այդ գոյզը մնաց անկատար բողոք։ Որբերի մեծ մասը տեսնելով, որ կուռի վնասն իրանց է զիալչում, ցանկութիւն յալանեց մնալ նախկին հովանաւորների մօտ կրկնելով այս առակը թէ, լաւ է փորձած սատանէն, քան անփորձ հրեշտակը։ Բանից երեւաց, որ Ահոնք ու Ուլթանանք փոխել էին իրանց լեզուն, թախանձում էին որբերին, որ մնան, ոչով

նրանց չի նեղացնիլ։ Քանազի որբերն ու կալուածները երեք բաժին եղան և ընկան երեք օշաղի իրաւունքի տակ։ Որբերի մի մասը՝ կին թէ մարդ այլ խառնակութիւնների երեսից զգուած թողեց պապական սունն ու տեղը, փախաւ դիւղից, օտարների դուներին ժառայ կանգնեց, որ զլուխը պահի։

Ժամանակ անցկացաւ, Ահոնց ու Ուլժանանց բազզի անիւն աւելի ծախ շուռ եկաւ. զիւղամշում նրանցից ոքմին ոչ փախենում էր, ոչ պատկառում։ Սկսան իրանց օշաղներում եղող որբերին գուրզուրել, որ առաջուաց զրկանքները մոռանալ տան։ Մինչև անգամ պաշտօններ էին սուաչարկում տնտեսի, գործակատարի, աւագ սպասաւորի։

Դրանց թողենք, ձաղարանցից խօսենք։ Բարեպաշտ Ալէրն այնպէս քաղցր սկսեց նայել որբերի վրայ, շնորքների համեմատ նրանց պաշտօններ յանձնել, որ կարծ միշոյում դարձան մեծ օշաղի աչքը. «Ժրագլուխ ու աչքաբաց» խօսքերը կարծես Քանազի որբերի համար էին չափած ու ձեւած։ Խրախոյսներով, գգուանքներով Ալէրը որբերի սիրտը զրաւել էր. նրա բերանից դուրս եկած ամեն մի խօսքը հալած իւղի տեղ էին ընդունում։ Ասում էր մի քանիսին «Եկէք իմ ազարակներում ապրեցէք մինչև թշնամիների սրտերը խազաղուեն», լուսէ էին։ Ասում էր՝ «Թողէք մեր աղերանցից մի քանիսը ձեր մէջ ապրեն իրըև ապահովութիւն», յօժարում էին։ Ասում էր «ինչ որ փաստակէք, բերէք ինձ պահ տուէք, որ կողոպուտի չենթարկուէք Ահոնց ու Ուլ-

թանանց կողմից», լուսմ էին։ Մի խօսքով ձաղարանց մեծն ասէր. «գնացէք, չուր թափուեցէք», անխօս կրգնալին։ Որբերն իրանց առաջաղիմութիւնով ամենի նախանձը վառել էին, անգամ Ալէրի որդու ու թոռան, որոնք Աստուած զիտէ ինչ էին մտածում, բայց տան մեծի անլից վախում էին ճպտուն հանեն։ Արօտատեղու թէ տաւարի առիթով հարևանների դէմ կոխւ մղած միշոյին աներկիւղութիւն ցոյց տուողները միշտ լինում էին Քանազի որդիքը, որոնց ճակատները համբուրում էր ու ընծաց տալիս դաշոյն, ձի, մատանի։ Մարգակեր Մաղաթին, պէծուկրակ թէհրուզին, աժդահա Ղազարին ովլ աեսնէր, որ չզովէր նրանց աղգն ու արձատր։ Սիրուն Մելիքը հօ այնքան իմաստուն էր, որ միայն նա կարողացաւ Ալէրի տանը ճպած թէժ խառնակութիւնը հանգցնել։ Ալէրը մի օր ուղղակի յատնեց որբերի ներկցին.

—Ես ցորենի չափ ձեզ լաւութիւն արի, զուք հունի չափով փոխարինեցիք։ Մեզ պէս զրացիների գլխին Աստուած քար կրցցի, որ թողենք ձեզ անտէր որբերի պէս թափառելիս. իմ միտքն էր, որ ցրուած որբերին միատեղ ժողովեմ, մի զիսաւոր նշանակելով ձեզնից՝ ասեմ. «գնացէք իրըև անկախ օշաղ ձեր արևի ձէնն ամեցէք»։ Բայց Ահոնք ու Ուլժանանք հակառակուել, ձեր արիւնակիցներին բաց չեն թողնում։ Ես ձեր եմ, փախենում եմ մահս շուտ վրայ հասնի. ձեր սրտի փափազն այն է, որ պապական օշաղը վերականգներ, միամիտ կացէք, առաջներիս զարնան ձեր

ուղածն անպատճառ կրկատարուի, եթէ կենդան
մնացի:

Այս լայտարարութեան վրայ Քանազի որբերը
չղիտեին ինչպէս ցնծան. այնքան բաղտառոր էին զգուժ
իրանց, որ Երազում վեր էին թռչում, իրար վկով փար-
ւում: Անցաւ մի Երկու ամիս: Մինչ որբերը գութա-
նի պատրաստութիւն տեսած, յատուկ իրանց միշից
մի մաճկալ ընտրելու եանից էին, յանկարծ լսեցին, որ
բարեսիրա Ալէքը չկաք: Սուզն ու թախիծը պատեց
ամենին: Մէկն ասում էր՝ բնական մահով է մեռել,
միւսը հաւատացնում էր, որ իւրայինները սպանե-
ցին:

Տղէն իւր կակիծը ցոյց տալու համար մեծաշուր
թաղում արեց. որիս հոգեհաց տալով մի մատուռ էլ
վրէն կանդնեց: Ինչպէս երկում էր այս ամենը միա-
միտների աչքին թող փչելու համար էր, որովհետեւ
քառասունքը դեռ չրացած օչազում այնպիսի կար-
գագրութիւններ արեց, որ հօր ժամանակի ամեն
որոշում չնշում էր: Նոր կարգազրութիւնները մեծ
մասով դէպի որբերն էին դարձած, մանաւանդ դէ-
պի Քանազի որբերը, որոնք փուշ դառած ամենի
աչքն էլ ծակում էին: Էլ մեղաղրանք, էլ ահտեղի
պահանջներ չմնաց, որ չանի, —հա՛ ինչո՞ւ առանձին
գութան էր սարքում, ինչո՞ւ վերի նորաշէն ժամը
թողած զնում էր ծեր կիսափուլ եկեղեցում աղօ-
թում:

Ալէքի աղէն, որ դղբի ծան չսածի պէս մեծ

հասակ ունէր, Աստծու բարկութեան հանդիպեց ու-
շուտ մեռաւ: Այն է հա՛, քիչ էր մնում օչազը ալէ-
կոծուի, բաժան բաժան լինի, բարեկամները նրա
աղայ կոնուն օգնեցին ու օչազի զլուխ դրին: Սա
իրաւունքի տէր դառաւ թէչէ, իւր խելքովն էր, թէ
իւր խորհրդատունների, դահիճ կարուեց որբերի գրլ-
իխն:

— Օչազի մէջ մի տէր կըլինի ու մի հրաման,
սաեց նա, Քանազի որբերը ինչո՞ւ առանձին մարդու
հրամաններով պտեն վերկենալ ու նստիլ: Նրանք ին-
չո՞վ են բարձր Պողունց ու Ուրջոնց որբերից, որ ա-
մեն կէտում յարմարւում են մերոնց հետ: Քանազի
որբերը որ այսպէս անհնազանդ են, երևի նրանց
երեցի մեղն է. նա է բմբոստութեան հոգի մտցնում
մէջները: Նրան պատմելը գժուար չի, սառ սարդա-
փում երբ մի անդամ փակենք, խերքի կրգայ, միւս ան-
դամ ինքնազուխ բաներ չի բռնիլ: Պատր նրանց
իմարացներու համար մի անդամ ասել է թէ աս-
տուած ամենին հաւասար զգայարաններ է տուել,
օչազիս բոլոր անդամները հաւասար իրաւունքներ են
վայելելու: Տիսմարները ականջներին օղ են շինել այդ
խօսքը ու քթները ցից պահում: Ասէք, տեսնեմ, ին-
չո՞վ են նրանք մեր օչազի անդամը, երբ մեղ այնքան
չեն սիրում, որ մեր թաղի ժամը գնան, մեր հետ
հաղորդուեն, հարցնողին ուղղակի պատախաննեն, որ
ձազարանց աղէքն են: Հէնց շարունակ այն են ասում
թէ մենք չենք կարող ծեռ վերցնել այն ժամից, ուր

մկրտուել ենք։ Մի քահանայ ունեն՝ ծերութիւնից ատամները թափուել է, մարդ ոչ խօսքն է հասկանում, ոչ երգը։ Զանգակը հօ այնքան փոքր է, կարծես ուղտի բոժոժ։ Քանազի որբերը մեծ սրտանի բաներ են, հոտաղն անգամ չի ուղում մեր մատկալին լիի. գորոն որ գութանի հասարակ երգ է, չեն ուղում փոխել, համակերպուել. մեր պապի գորոն այդ տեսակ չի, ասում են ու իրանց եղանակով երգում։ Այդպէս յանդդութիւն։ Ես նրանց ցոյց կրտամ։

Եւ կոնին հրամայեց Քանազի որբերի ծեռից առնել մեծ օշաղում ունեցած բոլոր պաշտօնները։ Որբերը լուցին։ Պատուիրեց նրանց արհամարհել, ոչ կնունքի հրաւիրել, ոչ հարսանիքի։ Որբերը տեսնում էին ու լուռ համբերում։ Ալէքի այդ պահո թոռը նրանց զրկելու, մեծ վնասներ հասցնելու նպատակով ամեն զրպարտութեան ենթարկեց. էլ զող, էլ նենդամիտ, էլ դաւաճան... ամենն էլ ասել տուեց կեղտոտ սպասաւորների միջոցով, բայց ոչ մինը սազէկաւ։ Որբերը լուռ համբերում էին սպասելով թէ այս անիրաւ հաղածանքի վերջն ինչ է լինելու։ Նրանց վատ բաղդից Ահոնք ու Ռութանանք այդ ժամանակ շատ խեղճացել էին. Ճաղարանցից ուռի պէս զողում էին. նորից նախկին խնամակալների մօտ դառնալ չէր լինիւ. Շատ անգամ վշտահար որբերը մտամոլոր ժողովում էին երէցի շուրջ՝ և հարցնում, «պատճառն ինչ է արդեօք, որ հայածում ենք. Ճաղարանց օշաղը

դալուց դէսը ձւմ ենք վատութիւն արել։ Մեղ մեղաղրում են, որ աշխատահր ենք, աչքաբաց ենք. Էթէ դրա հակառակը լինէինք, այն ժամանակ էլ պատէին. ինչ ծոլլ, ողորմելի արարածներ են։ Պատճառն ի՞նչ է, ոչ մեղից այնքան օգուաներ ստանալով, դարձեալ մեզ Ճաղարանք չեն սիրում։ Շարունակ կրկնում են թէ մենք կալուած ու գեսին չունենք նրանց օշաղում, միայն հացափորի ծառաներ ենք։ Ահոնց ու Ռութանանց պէս նրանք էլ մեր կալուածներին ուրիշ անուններ են դնում. կարծում են թէ սեպհականացրին. ախր ամեն մի հողի կշտին մեր պապի դրամ նշանը կայ, թումբը կայ, սարհատ կայ, աշխարհս կողոպուտ հօ չի։

—Դրա մեղաւորը Ես եմ, Ես, ասում էր Երէցը. Ալէքի պատօւականութիւնով զրաւուեցի, պատճառ եղայ, ձեզ սրա գուռը բերի, բայց ի՞նչ զիտէի թէ որդին ու թոռը Աստծու կրակի եկած պատղներ կրպատահեն։ Մենք մեր հաւատարմութիւնը դէպի ողորմած Ալէքի օշաղը կրշարունակենք, նրա ժամանակից յանձն առած ոչ մի պարտականութիւն թէրի չենք թողիլ, դրա հետ մեր ունեցած ու Ալէքի միջոցով զործադրամ իրաւունքներից էլ ձեռ չենք քաշիլ ի՞նչ ուղում են, անեն։ Սառ սարդափից վախեցող չեմ, թող ինձ անտակ հորի մէջ զցեն, ես մի ծայնի կրպաւեմ, որ Ճաղարանց հիմիկուաց արարմունքը անիրաւութիւն է։ Քանազի անունը լսել չեն ուղում, դրա համար էլ տնապ ու անարդանք չկայ,

որ չթափեն մեր ունեցած օչաղի վրայ։ Զէ, ինչուն ուզում են թող իրանց չար միտքը ժամկեն, այնքան յիմար չենք, որ անթիւ գոմիար շների դէմ կոռուելուց եւս այսօր մի տանձակեր արջի կուլ գնանք։ Կատաղել են ձաղարանք, թէ ինչու վարուցանքի միջոցին բանթող ենք արել, հանդ չենք դուրս գնում։ Ի՞նչ խելք է, գութանը մերը, խոփն ու փոկը մերը, եղները, հոտաղները, մշակի հացը մերը, իսկ ցելերի ինն տասներորդ մասը ձաղարանցը, որովհետև մանկալը նրանց աղերանցից է ու պնդում են թէ տափերի տէրը իրանք են, Ահոնց ու Ուղթանանց ձեռից արիւնի զնով են առել։ Երբ այդպիս է, թող գութանը իւր բոլոր սարքերով անգործ մնայ, ինչպէս լինի քարին քացի տալով զլուխներս կրպահենք, եթէ ձաղարանց դաշտից մի հոթ հաց ուզենք, թող երեսներիս թքեն։

Այս զրոյցի վրայ էր, որ սպասաւորը եկաւ թէ Երեցին ձաղարանց զլխաւորը կանչում է։ Սարգափի սառնութիւնը, խոր ու թաց յատակը ամենի մաքում պատկերացաւ։ Երեցը զնաց։

Մեծ տան սրահում հաւաքուած էին ձաղարանց տղերանց հետ Ուրջոնց որբերից մի քանի հայկատակներ էլ։ Երեցը նրանց մօտով անցկացաւ ու մտաւ տուն, ուր գորդի ու նահալու վրայ նստած էր Ալեքի ժառանգը։ Ունքերը կիտած ինչ անարգանքներ ասես, որ չթափեց Երեցի զլխին ու վերջն ասեց։

—Զեր չար մտքերն ինձ յախտնի են, դարշելի որբեր։ Երբեւ ապերախտ օձերի ձեղ հարկաւոր է

կացնի քիւփի տակ սատկացնել, բայց... Էլի սիրտս չի անում. ասում եմ՝ հոգու վարձք է, թող այդպիս քաշ գտն, անարդուած մնան, մինչև զգան, որ օչաղի զլխաւորին, իրանց բարերարին չըխոնարհուելը, նրա կամքով չըդնալը անզգամութիւն է։ Այօր կանչել եմ, որ քեզ վերջնական յախտնեմ կամքս. արդեօք յանդուդն որբերին համողելու ե՞ս, որ Քանազի կործանուած օչաղի մասին մտածելը թողնեն։ Պատասխան տուր։

Որբերի Երեցը խոր զլուխ տալով եղած հարցմունքին պատասխանելու վիշտարէն հետեւեալ առակն ասեց։

«Տէր, մի անգամ երկու գայլ մի ոչխարի զրյից ու ոտներից բռնած վախցնում էին։ Տեղտեղ գալթում էին բեռան տակ գաշտով տանելիս, Երբեմն կանցնում էին, որ ատամները յարմար տեղից բռնացնեն ու շարունակեն համբէն մինչեւ անտառ կամ փոս հասնելը։ Որտեղից որտեղ որսկաններ լոյս ընկան։ Նրանց մինը շուտ նկատելով դոչեց։

—Ախ, արիւնարբու զաղաներ, ուր էք տանում անմեղ ոչխարին։ Ես մեռած պտեմ լինիլ, որ դուք տկար արարածին տանէք, լափէք։ Ընկերներ, սպակցէք, ոչխարն ազատեմ անիրաւների ձեռից։ հոգու վարձք, է, յետոյ մեր համբէն գրնանք։

Այս ասելն ու աղեղի վրից նետեր թոյնելը մէկ արեց։ Գաղանները տեղն ու տեղ չընկան, բայց

Նեաերից վիրաւորուելով չկարացին որսը առաջ տանել.
Թողին բերանից ու զլուխնին ազատելու համար
անխայտացան: Որսկաններն իրար հետ խնդարով վա-
գեցին ոչխարի ընկած տեղը. տեսան կանաչ խոտում
ընկած հւում է:

— Հաւ արիր, որ ազատեցիր խեղճին, գովեցին
ընկերին որսկանները, անիրաւ գաղանները դզգե-
լու էին անմեղ տեղը: Ի՞նչ արիւնարբու արարած-
ներ են այս գալերը:

Նարունակեցին այսպէս զրոյց անելը և ամենա-
գէշ մականուններով մկրտեցին գալլերին, իսկ իրանց
ընկերի արածը իբրև հերոսութիւն երկինք հանե-
ցին: Ամեն մինք հերթով կուանում էր ոչխարի վրայ՝
դիմիկ դմակը, խուճում մորթին, կեռափիկ պողերը
ծեռնահարում: Ոչխարը ուշ չէր դարձնում նրանց.
ինչպէս երեւում էր, խոցուած տեղերը մրմնջում էին.
պինչը գետնին կալցրած խոր տնկում էր: Որսկանները
շուրջը կարած մի երկու րոպէ խօսելուց ետ լռեցին:
Գայլերի վրայ նետեր արծակողը դիմեց ընկերներին.

— Օրը մթնում է, ի՞նչ անեմ այս ոչխարին:

— Վերկացնենք, գնայ իւր հօտին խառնուի,
պատասխանեցին միաբերան, կարելի է մինչև անդամ
հովուին կանչել և նրան յանձնել:

Այս ասելով որսկանները ոչխարի մէջքից բռնած
փորձեցին վերկացնել. բայց քանի որ ձեռից թողին,
կունդնելու աեղ թող փալասի պէս գետնին փոռուեց:
Խեղճ անասունը դեռ փախակարած էր. չէր կարողա-

նում կանգնել: Այն ժամանակ նետածիգն իբրև իրա-
ւունքի տէր իւր որոշումն ասեց.

— Սրա հովուին այս մթնաղէմին ուր գտնեմ-
այն քիչ լաւութիւն ու հոգու վարձք էր, որ դալիք
բերանից ազատեցի: Նեղութիւն եմ քաշել, ինչու
զուր կորչի. ով որ դանակ ունի, թող ինձ տայ, ոչ-
խարը մորթեմ, քանի որ շունչը վրէն է. ամենիդ էլ
խորովածի բաժին կրտամ:

Այս անողոք որոշումը ոչխարը պարկած տեղը
լսելուն պէս զարհուրեց, տեղից վեր թռաւ ու որս-
կանի երեսին նայելով ասեց.

— Քու արծակած նետերն ինձ տարան մահուան
դուռը, ետ բերին: Երբ որ քու զթարտութիւնն
երկու րոպէի համար էր ու ինձ կեանք պարզեողը
չէիր, ել ինչու էիր սուտ ցաւակցութիւն յալտնելով
ինձ փախցնող դալիք վրայ յարձակում, գաղան արիւ-
նարբու անուանում: Երբ քու արած հոգու վարձքը
փորդ կշացնելու նպատակով էր, կեղծաւոր, ինչու
չէիր թողնում, որ գալլերը զաղան տեղովն ինձ լափէին:
Թէ քո կարծիքով մեծ բարերարութիւն է, որ ատամ-
ներով գզգուելու փոխարէն այժմ սուր դանակով
պաեմ մորթուիլ, թքած այդ տեսակ բարերարութեան
ու վարձքի վրայ:

— Տէր իմ, աւելացրեց որբերի երէցը, այս ա-
ռակը պատմելուց եար երկար խօսելու ու բացա-
տրելու կարիք չեմ զգում: Մենք մի ժամանակ ամբողջ
ընտանիքով նեղուում էինք Ահոնց ու Ութանանց մե-

ուն. մեղ պատահեց ծեր լուսահոգի պապը ու մի քանիսիս իւր ծեռի տակ քաշելով միջոց տուեց, ու մեր նակատի քրտինքով ապրենք ու նրա անունը իրու քարերարի օրհնենք: Միթէ նա իւր որդու ու թուան բնաւորութիւնը չգիտէր: Եթէ գիտէր, ինչու իւր ծեռով մեղ չուրը չէր թափում կամ թողում մեր արիւնակիցների հետ կոպիտ խնամակալների ծեռին տանջուենք: Գոնէ մի անունով կատինք թէ՝ դազան օշազ ենք ընկել, դաշանաբար մեղ տանջում են: Այժմ այս ի՞նչ վիճակ է, որ մենք քաշում ենք ծեր օշաղում: ոչ պատիւ ունենք, ոչ համարմունք: Ամեն կողմով անարդուած, ամենի թուք ու մուրի առարկայ: Երբ ուզում ենք մեր զիլին թափուող անպատճութիւնների պատճառը հարցնել, մեր պատիւը պաշտպանել, քու աւագ սպասաւորը ուղղակի ասում է:

— Այդ էլ մեծ վարձք է, որ մեր օշաղում Ահոնց ու Ռվիթանանց տան պէս տուր ու թակ չէք ուտառմ, հանգիստ մարմնով ապրում էք ուտել—խմելով ու ապերախտի պէս դեռ դժգոհում էք, երբ նեղանից պահանջում են, որ օշազի մեծի կարգադրութիւնները լսէք: Պոլունք ու Ռւրջոնք էլ այն զիլին քիչ ժամանակ լիմարութիւնները կրկնեցին, բայց կերան...

— Տէր, անկեղծ խոստովանած, մենք ճաղարանց քարեպաշտ տանից այս դրկանքները չենք սպասում: Ուժդ մեծ է, մեր ծանր տանն էլ ես կտրացրել դուանն էլ, հաստատ գիտենալով, որ քու ահից ոչ մի

հարևան այս ըոպէիս մեղ սրտայաւ չի լոյս ընկնի: Ինչ լինում է, թող լինի. ահա իմ վերջին ասելիքը: Ես ու որբերս գիշեր ցերեկ աշխատել ենք քու օշազի փառաւորութեան համար և քու կսկիծը մեր սեպհականը համարելով ցաւել, արտասուել իսրաէ. բայց մեր անթիւ զրաբերութիւնների ու անկեղծ զդացմունքների փոխարէն միայն մի վարձատրութիւն ենք ստանում, այն է որ ծեր դռանը շունչներս պահելով, կենդան ապրելով այս խայտառակ, անարդ վիճակը քաշ տանք: Եթէ իրաւ, այս ծեր արածը հոգու վարձք է, սև լինի այդ տեսակ վարձքը: Մի անգամ չուրը թափուենք, աւելի լաւ չի»*:

Ապրես պապը այստեղ լուեց. Էլ տեղեկութիւն չունէր, թէ այդ խօսքից եար երէցի ու որբերի զուխրն ի՞նչ փորձանք եկաւ, որովհետեւ հազրը այդտեղ կիսատ էր թողել զրոյցը: Միայն իւր կողմից այսքանն աւելացրեց Քանազի օշախի մասին թէ ծառը որ վեր ընկնի, կացնաւորը կրշատանաց ծաղարանց ուժեղութեանը գալով վրայ բերեց. — Թունդ քացախը իւր ամանը կը ճաքացնի: Ոչ ով չափ թէ մինչեւ առաւօտ իւր ճաքը լոյս կը տայ: Նրանց էլ չի մնալ մի գիտենաւ:



ՎՐԻ ՊԱԿՆԵՐ

էջ	տող	սխալ	ճեշտ
6	ն.	3	քսւն
7	փ.	13	այդ
9	փ.	7	բարձրացաւ
—	ն.	1	բոռելլը
13	փ.	10	բալց
—	փ.	13	անցեալ
15	փ.	14	դաւազըսթեան
16	փ.	7	ու
—	ն.	8	մերունց
29	փ.	10	տուել

ՀՀ Ազգային գրադարան



NL0367345

ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔՈՅՑԿԱՆԵՐՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏՈՒ-
ԹԻԼՆԵԲՄ.

1 Աստուած Հը ճանաչող	10 կ.
2 Անմեռ աշխարհ	8 »
3 Աստուած աղքատի կերպում	20 »
4 Գալօ ափօ, Խաչան թ. տպագ.	12 »
5 Երկու աղյուսացեղ թ. տպագ.	30 »
6 Ժամանակը ոսկի, պատկերաշարդ 40	»
7 Խուլ Խաչիկ թ. տպագ.	25 »
8 Ծովինար թ. տպագ.	20 »
9 Հեքեաթներ.	30 »
10 Շէն թագաւորի աղջիկ թ. տպագ.	25 »
11 Սիրելի հերոս (Քաջ Աղասի)	25 »
12 Սասունցի Յովան	30 »
13 Երևասիրութիւններ ա. զերք.	50 »
14 «Սիրա» զբքից 9 պատմ. պատկերագ. 40	»

Հարցնել Թիֆլիզի գրավաճառներին.
Շուտով մամուլի տակ մկանի «ԿՌՈՒԻԻ
ԽՆՁՈՐԸ» պատմական վէպիկ.

Հեղինակի հասցէն՝ Ներս դպր. ուս. Քա-
մալեանց Ս-ին